



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 07-Ն

«11» 01. 2021թ.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

0912.02.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0912.02.01.5
«ՄԱՆԿԱԲԱՐՁ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկի կողմից ներկայացված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական դրական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- Հաստատել միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
- Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:

Վահրամ Դումանյան

 Invalid signature

X 

ՎԱՅՐԱՄ ԴՈՒ ՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0912.02.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0912.02.01.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի թիվ 332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորմանը (հետևյալ որակավորումներին) ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:
2. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևով՝
 - 1) առկա:
3. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
 - 1) կրթության առկա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի,
 - բ. հիմնական կրթության հիմքով՝ 4 տարի:
4. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 4140 ժամ է, ժամ է, առավելագույն ծավալը՝ 6642 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0912.02.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0912.02.01.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:
6. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտությամբ 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքը(ները)
 - 1) մանկաբարձ՝ ծննդատանը,
 - 2) մանկաբարձ՝ կանանց կոնսուլտացիայում,
 - 3) մանկաբարձ՝ բուժակ-մանկաբարձական կետում:
7. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտությամբ 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.
 - 1) իրականացնել միջոցառումներ սպասարկվող բնակչության շրջանում ուղղված՝ մոր և մանկան առողջության պահպանմանը,
 - 2) իրականացնել հղիների վաղ հայտնաբերում, հաշվառում, նախածննդյան հսկողություն,
 - 3) իրականացնել հղիության ախտաբանական թաքնված ձևերի վաղ հայտնաբերում, դրանց ժամանակ խնամքի, հսկողության, իրավիճակի գնահատման կազմակերպում,
 - 4) իրականացնել դեռահասների, հղիների, ծննդաբերների, ծննդկանների, նորածինների հսկողություն և զննում,
 - 5) իրականացնել ծննդկանների և նորածինների հետծննդյան խնամք,
 - 6) իրականացնել վաղ և ուշ հետծննդյան շրջանի արյունահոսությունների և սեպտիկ հիվանդությունների կանխարգելում,
 - 7) կատարել ընտանիքի պլանավորման, վերարտադրողական առողջության և առողջ սեռական կյանքի պահպանման աշխատանքներ,
 - 8) իրականացնել ուսուցողական դասընթացներ ծնողներին՝ «Մայրության դպրոցի» շրջանակում,
 - 9) իրականացնել խորհրդատվություն կրծքով կերակրման առավելությունների վերաբերյալ,
 - 10) տեղեկացնել ծննդաբերության ժամանակ կիրառվող ցավազրկման մեթոդի մասին,
 - 11) իրականացնել աշխատանքներ առողջ կենսակերպի և սեռական անվտանգ վարքագծի հաստատման ուղղությամբ,

- 12) իրականացնել աշխատանքներ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, հեպատիտ C, հեպատիտ B և այլն) կանխարգելման ուղղությամբ,
- 13) իրականացնել աշխատանքներ սեռական օրգանների նախաքաղցկեղային, քաղցկեղային հիվանդությունների կանխարգելման և հայտնաբերման ուղղությամբ,
- 14) իրականացնել աշխատանքներ հետոդաշտանադադարային տարիքի կանանց կյանքի որակի բարելավման՝ օստեոպորոզի, ճարպակալման, արյան զարկերակային բարձր ճնշման կանխարգելման ուղղությամբ,
- 15) ցուցաբերել խորհրդատվական օգնություն ընտանիքին,
- 16) կատարել տվյալ մասնագիտական ստորաբաժանման ուղղվածությանը և բժշկի ցուցումներին համապատասխան՝ ախտորոշիչ, սկրինինգային և բուժական նշանակումներ,
- 17) իրականացնել անհետաձգելի օգնություն և խնամք մանկաբարձագինեկոլոգիական ախտաբանական իրավիճակներում,
- 18) ցուցաբերել ինքնուրույն օգնություն չբարդացած ծննդաբերության ժամանակ կամ օգնություն՝ բժշկի հետ միասին ախտաբանական ծննդաբերության ժամանակ,
- 19) կատարել նորածնի առաջին հարդարանք, անհրաժեշտության դեպքում՝ իրականացնել նորածնի վերակենդանացում,
- 20) հետևել ծննդկանի վիճակին հետծննդյան շրջանում,
- 21) նախապատրաստել գինեկոլոգիական հիվանդներին և հղիներին վիրահատության,
- 22) վերցնել լաբորատոր հետազոտության համար անհրաժեշտ նմուշառումներ,
- 23) կատարել ոչ սթրեսային թեստի գնահատում,
- 24) իրականացնել հետվիրահատական խնամքն ու բժշկի նշանակումները,
- 25) լրացնել տեղեկանքներ և բժշկական ոլորտի այլ փաստաթղթեր,
- 26) իրականացնել դեղերի դուրս գրում, պահպանում և տրամադրում,
- 27) իրականացնել սանիտարահամաճարակային ռեժիմը և ներհիվանդանոցային վարակների կանխարգելման աշխատանքները,
- 28) կատարել բժշկական նշանակության իրերի վարակազերծում և մանրէազերծում,
- 29) իրականացնել բժշկական թափոնների դասակարգման, պահպանման և տեղափոխման աշխատանքները,
- 30) պահպանել բուժանձնակազմի և պացիենտի անվտանգության կանոնները:

ԳԼՈՒԽ 3.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0912.02.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0912.02.01.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:
9. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝
- 1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,
 - 2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,
 - 3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,
 - 4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,
 - 5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,
 - 6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,
 - 7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,
 - 8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,
 - 9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,
 - 10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

0912.02.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0912.02.01.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁ»

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ

ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:
11. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝
- 1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
 - 2) տիրապետի հայոց լեզվին,
 - 3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,
 - 4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,
 - 5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,
 - 6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
 - 7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:
 - 8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,
 - 9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:
12. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0912.02.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0912.02.01.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական

կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

- ա. լեզուների,
- բ. սոցիալ-տնտեսագիտական դասընթացների,
- գ. ուսուցման տեխնիկական միջոցների,
- դ. համակարգչային,
- ե. հոգեբանության,
- զ. թերապիայի,
- է. վիրաբուժության,
- ը. մանկաբուժության,
- թ. մանկաբարձության,
- ժ. գինեկոլոգիայի,
- ժա. քույրական գործի հիմունքների,
- ժբ. ընդհանուր բնագիտական առարկաների,
- ժգ. նեղ մասնագիտական առարկաների,
- ժդ. աղետների բժշկության, քաղպաշտպանության,
- ժե. վերակենդանացման, ինտենսիվ թերապիայի,
- ժզ. վարակիչ հիվանդությունների,

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի,
- բ. հիգիենայի և մարդու էկոլոգիայի,
- գ. մանրէաբանության, իմունաբանության, վիրուսաբանության,
- դ. դեղաբանության:

3) Սպորտային համալիր՝

- ա. մարզադահլիճ,
- բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է,
- 2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

- 3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանձանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,
- 4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,
- 5) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,
- 6) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,
- 2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,
- 3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.
- 4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,
- 5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,
- 2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման քննության, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,
- 3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0912.02.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0912.02.01.5 «ՄԱՆԿԱԲԱՐՁ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

- 20.** Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով հավելված 1-ի 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:
- 21.** Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝
- 1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,
 - 2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
 - 3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
 - 4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,
 - 5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,
 - 6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշիչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման պետական կրթական չափորոշիչի

Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»		
1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-20-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
7.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,

		<p>2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,</p> <p>3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,</p> <p>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
8.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել և կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
9.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
10.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել և կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
11.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</p> <p>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</p> <p>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</p> <p>5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p> <p>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</p> <p>7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
12.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
13.	Կատարման չափանիշներ	<p>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ,</p> <p>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p>

		<p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
14.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
15.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է համագործակցությունը խթանող միջոցառումներին (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) կիրառում է հավաքագրված տեղեկատվությունը գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ձեռք է բերում վստահություն հաղորդակցման ընթացքում,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»		
16.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-20-001
17.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները

18.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
19.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
20.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
21.	Ուսումնառության արդյունք 1	Կիրառել համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը
22.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բնութագրում է համակարգչային համալիրում ներառվող հիմնական և լրացուցիչ բաղադրիչները 2) ճիշտ է պահպանում համակարգիչը և բաղադրիչները միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմանները, 3) օգտվում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից, 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը, 6) բացում է առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, 9) կատարում է փաստաթղթի տպագրում:
23.	Ուսումնառության արդյունք 2	Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր
24.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար ծրագրերը պատրաստում է, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) տեքստային ցուցիչը տեղաշարժելով կատարելում է ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, փոփոխություններ, 4) մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորման գործողությունները ճիշտ է կատարում, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ:
25.	Ուսումնառության արդյունք 3	Պատրաստել և խմբագրել աղյուսակներ
26.	Կատարման չափանիշներ	1) աղյուսակներ կազմելու համակարգչային ծրագրերը և դրանց կիրառումը ներկայացնում է,

		<p>2) առաջադրված չափերով կազմում է աղյուսակ և մուտքագրում տվյալներ,</p> <p>3) աղյուսակում կատարում է ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ,</p> <p>4) աղյուսակի տվյալների մեջ ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն:</p>
27.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
28.	Կատարման չափանիշներ	<p>1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով նաև Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>2) գծագրում է կանոնավոր պատկերներ,</p> <p>3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>5) գծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
29.	Ուսումնառության արդյունք 5	Համակարգչային ծրագրերով կազմակերպել ցուցադրություն
30.	Կատարման չափանիշներ	<p>1) ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը ճիշտ է ներկայացնում,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</p> <p>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</p> <p>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</p> <p>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>
31.	Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
32.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը,</p> <p>2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,</p> <p>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p>

		<p>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</p> <p>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</p> <p>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ»		
33.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Ձ-5-20-001
34.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները
35.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
36.	Մուտքային պահանջները	Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար:
37.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
38.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
39.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում, 2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում, 3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է, 4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է, 5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում, 6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում,

		<p>7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները,</p> <p>8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:</p>
40.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
41.	Կատարման չափանիշներ	<p>1) կազմակերպության կազմակերպական-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է,</p> <p>2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է,</p> <p>3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում,</p> <p>4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,</p> <p>5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,</p> <p>7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,</p> <p>8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,</p> <p>9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,</p> <p>10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,</p> <p>11) կազմակերպության կառավարմանն առընչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է,</p> <p>12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,</p> <p>13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է:</p>
42.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ
43.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է մեկնաբանում «շուկա» հասկացությունը,</p> <p>2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է,</p> <p>3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է,</p> <p>4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում,</p> <p>5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է,</p> <p>6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է,</p> <p>7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է,</p>

		8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է, 9) շուկայի հատվածավորումը իրատեսական է, 10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում, 11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է:
44.	Ուսումնառության արդյունք 4	Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը
45.	Կատարման չափանիշներ	1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում, 2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը հիմնավորում է, 3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է, 4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է, 5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում, 6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է, 7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում, 8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է, 9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:

46.	Ուսումնառության արդյունք 5	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
47.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) «ծախս» հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում, 2) տարբերակում է ծախսերի խմբերը, 3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում, 4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է, 5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում, 6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում, 7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում, 8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը, 9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում, 10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է, 11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:
48.	Ուսումնառության արդյունք 6	Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր
49.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է, 2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է, 3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում, 4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն, 5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում, 6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է, 7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է, 8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել, 9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման

		քայլերը հիմնավոր են:
50.	Ուսումնառության արդյունք 7	Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ
51.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում, 2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում, 3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում, 4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում, 5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին, 6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում, 7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում, 8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում, 9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 0912.02.5 «Մանկաբարձական գործ» մասնագիտության 0912.02.01.5 «Մանկաբարձ» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՅԻԵՆՏԻ ԿՐԹՈՒՄ»		
1.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5--20-001
2.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել պացիենտի կրթման հիմնական խնդիրներին ու հարցերին, տալ գիտելիքներ և գործնական կարողություններ, որոնց օգնությամբ ուսանողը կկարողանա

		նպաստել անհատի առողջության պահպանմանը, ամրապնդմանը և կյանքի որակի բարձրացմանը՝ սովորեցնելով նրան իր ապրելակերպը փոխելու միջոցով կանխարգելել հիվանդություններն ու վնասվածքները, կառավարել հիվանդությունների ընթացքը:
3.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ուսուցման բովանդակությունը, նպատակները, ուսուցման ոլորտները և ձևերը, արդյունավետ ուսուցմանը նպաստող գործոններն ու նախապայմանները
7.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է ուսուցման բովանդակությանը և ուսուցման նպատակներին, 2) ներկայացնում է նպատակներին հասնելու նախապայմանները, 3) ներկայացնում է ուսուցման ոլորտները և իրականացնում ուսուցումն այդ ոլորտներում (ճանաչողական, էմոցիոնալ, հոգեշարժական), 4) ներկայացնում է ուսուցման ձևերը (անհատական, կոլեկտիվ), 5) ճիշտ է ներկայացնում արդյունավետ ուսուցմանը նպաստող գործոնները և նախապայմանները (ցանկություն, պատրաստակամություն, մտավոր վիճակ, հիշողություն, ուշադրություն):
8.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ուսուցման գործընթացի փուլերը, ուսուցման արդյունավետության գնահատումը
9.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է ուսուցման գործընթացի փուլերին, 2) իրականացնում է ուսուցման գործընթացը, հաշվի առնելով՝ յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունը, 3) ներկայացնում է ուսուցման արդյունավետության գնահատումը (տեղեկատվության յուրացում, հմտությունների ցուցադրում):
10.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պացիենտին և նրա ընտանիքին առողջական հարցերի լուծման ուղիները
11.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է և իրականացնում պացիենտի կրթման գործընթացում խոչընդոտների բացահայտումը և դրանց հաղթահարումը,

		<p>2) ներկայացնում է և տիրապետում ուսուցման ձևերին և մեթոդներին, բացատրում է առողջական խնդիրները պարզ և մատչելի,</p> <p>3) ներկայացնում է պացիենտի և նրա ընտանիքի անդամների ուսուցման առանձնահատկությունների գնահատումը,</p> <p>4) ներկայացնում է ընտանիքների առանձնահատկությունները,</p> <p>5) բացատրում է հիվանդության վտանգավոր նշանների ճանաչումը և համապատասխան գործողությունները:</p>
12.	Ուսումնառության արդյունք 4	Իրականացնել բուժքրոջ գործառույթները առողջապահական կրթման գործում
13.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է վնասակար սովորությունները՝ ծխելը, թմրամոլությունը, ալկոհոլամոլությունը,</p> <p>2) իրականացնում է խորհրդատվություն վնասակար սովորություններից ձերբազատվելու համար,</p> <p>3) կազմում է և իրականացնում «Փոփոխման ծրագիր»,</p> <p>4) ներկայացնում է բուժքրոջ դերը մարդկանց առողջապահական կրթման հարցում:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԱՏԻՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ»		
14.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-002
15.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել լատիներեն լեզվի քերականության և տերմինների կազմության ձևերը, կարողանալ ճիշտ կարդալ, գրել և թարգմանել բժշկական տերմինները, հիվանդությունների և դեղանյութերի անվանումները:
16.	Մոդուլի տևողությունը	30 ժամ
17.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
18.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
19.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել լատիներեն լեզվի քերականության կազմման հմտությունները
20.	Կատարման չափանիշներ	<p>1) հղովում է հաճախ հանդիպող լատիներեն բառերը,</p> <p>2) թարգմանում է քերականական դարձվածքները,</p> <p>3) կազմում է բժշկական նշանակություն ունեցող նախադասությունները:</p>

21.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել լատիներեն տերմինների կազմման հմտությունները
22.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հասկանում է լատիներենով գրված բժշկական տերմինները, 2) հասկանում է դեղատոմսում առկա լատիներեն բառերի կրճատումները, 3) հասկանում է լատիներենով գրված դեղատոմսը, 4) կարդում է և բացատրում միանման տերմինների ծագումը:
23.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել լատիներեն բժշկական տերմիններ, հիվանդություններ և դեղանյութերի անվանումները
24.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) թարգմանում է բժշկական տերմինները, 2) ներկայացնում է հիվանդությունների և դեղանյութերի անվանումները, 3) կազմում է բժշկական բարդ տերմիններ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՄԱՐԴՈՒ ԱՆՏՈՄԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ՝ ՊԱԹՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ. ԲՋԻՋ, ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ, ՀՆԱՇԱՐԺԻՉ ՀԱՄԱԿԱՐԳ, ԱՐՅՈՒՆ»		
25.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-003
26.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բջջի կառուցվածքի, գործառույթների, հյուսվածքների տեսակների, կառուցվածքային առանձնահատկությունների, ոսկրերի կառուցվածքի, տեղադրության, միացման ձևերի, մկանների կառուցվածքի, մկանախմբերի տեղադրության և գործառույթների, արյան կազմի և գործառույթների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
27.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
28.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
29.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
30.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բջջի կառուցվածքը, գործառույթները, բազմացման ձևերը
31.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է բջջաթաղանթի, ցիտոպլազմայի, կորիզի կառուցվածքը և գործառույթները, 2) ներկայացնում է օրգանոիդների և ներառումների տեսակները, 3) ներկայացնում է բազմացման ձևերը:

32.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հյուսվածքների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները
33.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է էպիթելային հյուսվածքի կառուցվածքը, տեսակները, առանձնահատկությունները և գործառույթները, 2) ներկայացնում է շարակցական հյուսվածքի կառուցվածքը, տեսակները, առանձնահատկությունները և գործառույթները, 3) ներկայացնում է մկանային հյուսվածքի կառուցվածքը, տեսակները, առանձնահատկությունները և գործառույթները, 4) ներկայացնում է նյարդային հյուսվածքի կառուցվածքը, տեսակները, առանձնահատկությունները և գործառույթները:
34.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մարդու ոսկրահոդաբանության համակարգի կառուցվածքը, գործառույթները և ախտաբանությունը
35.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մարդու կմախքի բաժինները, գործառույթները, 2) ներկայացնում է ոսկրերի տեսակները, քիմիական կառուցվածքը, միացման ձևերը, 3) ներկայացնում է ողնաշարի և կրծքավանդակի կառուցվածքը և միացումները, 4) ներկայացնում է վերին վերջույթների կառուցվածքը և միացումները, 5) ներկայացնում է ստորին վերջույթների կառուցվածքը և միացումները, 6) ներկայացնում է գլխի կմախքի բաժինների կառուցվածքը և միացումները:
36.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մարդու մկանային համակարգի կառուցվածքը, գործառույթները և ախտաբանությունը
37.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է գլխի, պարանոցի մկանների տեսակները և տեղադրությունը, գործառույթները, 2) ներկայացնում է կրծքավանդակի, որովայնի, մեջքի մկանների տեղադրությունը և գործառույթները, 3) ներկայացնում է վերին և ստորին վերջույթների մկանների տեսակները, տեղադրությունը, գործառույթները:
38.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել արյան կազմը և գործառույթները
39.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արյան գործառույթները, 2) ներկայացնում է արյան կազմը և ֆիզիկո-քիմիական հատկությունները,

		<p>3) ներկայացնում է արյան պլազմայի և ձևավոր տարրերի կառուցվածքը և գործառույթները,</p> <p>4) ներկայացնում է արյան խմբերը, ռեզուս գործոնը,</p> <p>5) ներկայացնում է արյան մակարդման փուլերը, էրիթրոցիտների նստեցման արագությունը,</p> <p>6) ներկայացնում է ախտաբանությունները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ՝ ՊԱԹՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ. ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ, ԱՎՇԱՅԻՆ, ՇՆՉԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԻՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»		
40.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-004
41.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել սրտանոթային, ավշային, շնչառական և միզային համակարգի անատոմիական կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
42.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
43.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-003 «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով. բջիջ, հյուսվածքներ, հենաշարժիչ համակարգ, արյուն» մոդուլը:
44.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
45.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարդու սրտանոթային համակարգի անատոմիական կառուցվածքը, գործառույթները և ախտաբանությունը
46.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարդու սրտանոթային համակարգի կառուցվածքը,</p> <p>2) ներկայացնում է անոթների տեսակները, կառուցվածքը,</p> <p>3) ներկայացնում է սրտի տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթը, անոթավորումը, ներվավորումը,</p> <p>4) ներկայացնում է սրտի ֆիզիոլոգիան և հաղորդչական համակարգը:</p>
47.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մարդու ավշային համակարգի անատոմիական կառուցվածքը և գործառույթները
48.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ավշի բաղադրությունը,</p> <p>2) ներկայացնում է ավշային համակարգի կառուցվածքը, գործառույթները,</p>

		3) ներկայացնում է փայծաղի տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթը:
49.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մարդու շնչառական համակարգի անատոմիական կառուցվածքը և գործառույթները
50.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է շնչառական համակարգի օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը, 2) ներկայացնում է շնչառության ֆիզիոլոգիան և գազափոխանակությունը:
51.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մարդու միզային համակարգի անատոմիական կառուցվածքը և գործառույթները
52.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է միզային համակարգի գործառույթները և կառուցվածքային առանձնահատկությունները, 2) ներկայացնում է միզային համակարգի օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը, 3) ներկայացնում է միզագոյացման և միզարձակման ֆիզիոլոգիան:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ՝ ՊԱԹՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ.ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ, ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»		
53.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-005
54.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մարսողական համակարգի անատոմիական կառուցվածքի, գործառույթների, նյութափոխանակության և վիտամինների տեսակների, արական և իգական սեռական համակարգի անատոմիական կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
55.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
56.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-004 «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով. սրտանոթային, ավշային, շնչառական և միզային համակարգեր» մոդուլը:
57.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
58.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարսողական համակարգի անատոմիական կառուցվածքը, գործառույթները և ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը

59.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարտողական համակարգի գործառույթները և կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>2) ներկայացնում է մարտողական համակարգի օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը,</p> <p>3) ներկայացնում է մարտողական հյութերի կազմությունը և մարտողության ֆիզիոլոգիան:</p>
60.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մարդու նյութափոխանակության տեսակները, վիտամինների տեսակները և նշանակությունը, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը
61.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է սպիտակուցային փոխանակությունը և ախտաբանությունները,</p> <p>2) ներկայացնում է ածխաջրատային փոխանակությունը և ախտաբանությունները,</p> <p>3) ներկայացնում է ճարպային փոխանակությունը և ախտաբանությունները,</p> <p>4) ներկայացնում է ջրադային փոխանակությունը և ախտաբանությունները,</p> <p>5) ներկայացնում է վիտամինների դասակարգումը, նշանակությունը, ավիտամինոզները:</p>
62.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել արական սեռական համակարգի անատոմիական կառուցվածքը և գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը
63.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է արական սեռական համակարգի գործառույթները և կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>2) ներկայացնում է մարդու արական սեռական օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը:</p>
64.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել իգական սեռական համակարգի անատոմիական կառուցվածքը և գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը
65.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է իգական սեռական օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը,</p> <p>2) ներկայացնում է օվոգենեզը, օվուլյացիան, բեղմնավորումը, դաշտանային ցիկլը:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ՝ ՊԱԹՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ. ՆԵՐՁԱՏԻՉ ԳԵՂՁԵՐ, ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ»

66.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-006
67.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ներգատիչ համակարգի անատոմիական կառուցվածքի և գործառույթների, նյարդային համակարգի անատոմիական կառուցվածքի և գործառույթների, զգայարանների անատոմիական կառուցվածքի և գործառույթների, պահպանման և պաշտպանման ֆունկցիաների, ախտաբանության հիմունքների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
68.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
69.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-005 «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով.վերարտադրողական, մարսողական համակարգեր» մոդուլը:
70.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
71.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ներգատիչ համակարգի անատոմիական կառուցվածքը և գործառույթները
72.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ներգատիչ համակարգի կառուցվածքը և ֆիզիոլոգիան, 2) ներկայացնում է ներգատիչ գեղձերի տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, ախտաբանությունը, լատիներեն տերմինաբանությունը:
73.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մարդու նյարդային համակարգի անատոմիական կառուցվածքը և գործառույթները, ախտաբանությունը
74.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է նյարդային համակարգի նշանակությունը, կառուցվածքը, դասակարգումը, 2) ներկայացնում է կենտրոնական նյարդային համակարգի բաժինները, տեղադրությունը, կառուցվածքը, ֆունկցիաները, թաղանթները, կենտրոնները, 3) ներկայացնում է ծայրամասային նյարդային համակարգի դասակարգումը, ֆունկցիաները, գանգուղեղային 12 զույգ նյարդերը և ողնուղեղային 31 զույգ նյարդերը, 4) ներկայացնում է վեգետատիվ նյարդային համակարգի դասակարգումը, կառուցվածքը, ֆունկցիաները, 5) ներկայացնում է բարձրագույն նյարդային գործունեությունը:

75.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մարդու զգայարանների անատոմիական կառուցվածքը և գործառույթները, ախտաբանությունը
76.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մաշկի և հավելումների կառուցվածքը, գործառույթները, 2) ներկայացնում է տեսողական օրգանի կառուցվածքը, տեղադրությունը, գործառույթները, 3) ներկայացնում է լսահավասարակշռության օրգանի կառուցվածքը, տեղադրությունը, գործառույթները:
77.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մարդու օրգանիզմի պահպանման և պաշտպանողական ֆունկցիաները, ախտաբանության հիմունքները
78.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ֆիզիոլոգիական և ախտաբանական ռեակցիաները, վնասվածքների և ռեգեներացիաների տեսակները, 2) ներկայացնում է իմուն համակարգի օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, բջջային և հումորալ իմունիտետը, 3) ներկայացնում է հիվանդության շրջանները, ելքը, բորբոքման տեսակները, նշանները, ուռուցքի տեսակները, կոլապսը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ: ՆԵՐԱՐԳԱՆԴԱՅԻՆ, ՆՈՐԱԾՆԱՅԻՆ, ԿՐԾՔԻ ՀԱՍԱԿԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»		
79.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-007
80.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մարդու կյանքի տարիքային շրջանների, ներարգանդային, նորածնային, կրծքի հասակի երեխաների անատոմոֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների, վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
81.	Մոդուլի տևողությունը	30 ժամ
82.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում» մոդուլը:
83.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման

		չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
84.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարդու կյանքի տարիքային շրջանները, քույրական ծառայության դերը տարբեր տարիքային խմբերի նկատմամբ
85.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մարդու կյանքի տարիքային շրջանները և յուրաքանչյուր շրջանի բնութագիրը, 2) ճիշտ է ներկայացնում մարդու հիմնական պահանջները՝ տարբեր տարիքային խմբերում և դրանց բավարարման ուղիները, 3) ճիշտ է ներկայացնում քույրական ծառայություն, յուրաքանչյուր տարիքային շրջանում առողջության պահպանման և ամրապնդման գործում:
86.	Ուսումնառության արդյունք 2	Սկարագրել ներարգանդային պրենատալ և նորածնային շրջանը
87.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պտղի և մանկան զարգացման շրջանները, 2) ճիշտ է ներկայացնում պրենատալ շրջանի առանձնահատկությունները, պտղի վրա ազդող գործոնները, 3) ճիշտ է ներկայացնում նորածնի օրգան համակարգերի անատոմիա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում ծնողների ուսուցումը, նորածնի խնամքի հմտությունները, 5) ճիշտ է ներկայացնում նորածնի անցողիկ ֆիզիոլոգիական վիճակները և հասունության նշանների ուսումնասիրությունն ու բացահայտումը, 6) ճիշտ է ներկայացնում երեխայի կենսական պահանջները զարգացման տարբեր շրջաններում և դրանց առանձնահատկությունները, 7) ճիշտ է ներկայացնում երեխայի առողջության պահպանման համար կարևոր գործոնները՝ օրակարգը, որակյալ սնունդը , պատշաճ խնամքը, հիգիենայի կանոնների պահպանումը:
88.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել նորածնի անհասության նշանները, խնամքը և կերակրման եղանակները
89.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անհաս նորածնի անհասության նշանները, պատճառները, 2) ճիշտ է ներկայացնում անհաս նորածնի անատոմիա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 3) ճիշտ է տիրապետում քույրական միջամտություններին ուղղված անհաս նորածնի հիմնական պահանջների բավարարմանը,

		4) ճիշտ է ներկայացնում անհաս երեխայի կերակրման եղանակները, կերակրման ռեժիմը, չափաբաժինը, և տաքացման եղանակները:
90.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել կրծքի հասակի երեխաների խնամքի առանձնահատկությունները
91.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում կրծքի շրջանի տևողությունը, երեխայի անատոմիա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում նյարդա-հոգեբանական, ֆիզիկական և սոցիալական զարգացման օրինաչափությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հիմնական պահանջների բավարարման եղանակները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում կոփիչ և զարգացնող միջամտությունների անհրաժեշտությունը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում ֆիզիկական զարգացման գնահատումը՝ մարդաչափական տվյալներով,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում կրծքով կերակրման առավելությունները, և անհրաժեշտ կաթի քանակի որոշմանը,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում կաթնարտադրության և կրծքով կերակրման խնդիրները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ: ՄՍՈՒՐԱՅԻՆ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՎԱՂ ԴՊՐՈՑԱԿԱՆ, ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»		
92.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-008
93.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մտորային և նախադպրոցական, դպրոցական, դեռահասության առանձնահատկությունների մասին գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու հմտություններ:
94.	Մոդուլի տևողությունը	24 ժամ
95.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում», ՄԲԳ-5-20-007 «Մարդու կենսագործունեության փուլերը: Ներարգանդային, նորածնային, կրծքի հասակի երեխաների տարիքային առանձնահատկությունները» մոդուլները:
96.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

97.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մսուրային և նախադպրոցական շրջանների տարիքային առանձնահատկությունները
98.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մսուրային և նախադպրոցական շրջանների տարիքային ժամկետները և դրանց անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում մսուրային և նախադպրոցական շրջանների երեխաների դաստիարակչական միջոցները, 3) ճիշտ է ներկայացնում երեխաների ճիշտ սնվելու ունակության դաստիարակումը, 4) ճիշտ է ներկայացնում տվյալ տարիքային խմբերի երեխաների կենսական պահանջները և դրանց բավարարման եղանակները, 5) ճիշտ է նկարագրում մսուրային և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական և նյարդահոգեկան զարգացումը, ուսումնասիրում երեխայի խոսքը, շարժողական ունակությունները, 6) ճիշտ է ներկայացնում օրակարգը, 7) ճիշտ է ներկայացնում անթրոպոմետրիկ չափումների կատարումը և ֆիզիկական զարգացման գնահատումը, 8) ճիշտ է հիմնավորում այս տարիքային խմբերի երեխաների կոփման, մերսման, մարմնամարզության կարևորությունը:
99.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել վաղ դպրոցական շրջանի տարիքային ժամկետները, անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիմնական պահանջները, յուրահատուկ դաստիարակչական միջոցները այդ տարիքի երեխաների նյարդահոգեկան, սոցիալական և ֆիզիկական զարգացումը
100.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում վաղ դպրոցական շրջանի տարիքային ժամկետները, անատոմոֆիզիոլոգիական և զարգացման առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում վաղ դպրոցական տարիքի երեխաների հիմնական պահանջները և դրանց բավարարման միջոցները 3) ճիշտ է նկարագրում վաղ դպրոցական տարիքի երեխաների դաստիարակչական միջոցների ընտրությունը, կրառումը, 4) ճիշտ է ներկայացնում վաղ դպրոցական տարիքի երեխաների նյարդահոգեկան, սոցիալական և

		<p>Ֆիզիկական զարգացման գնահատումը և բացահայտում առողջության ռիսկի գործոնները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում երեխայի հարմարվողականությունը՝ դպրոց հաճախելու գործընթացին և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը,</p> <p>6) ճիշտ է նկարագրում անթրոպոմետրիկ չափումները և համեմատում տարիքային նորմայի հետ:</p>
101.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել դեռահասության շրջանի առանձնահատկությունները և հիմնական պահանջները
102.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում դեռահասության շրջանի տարիքային սահմանումը, բնորոշ ֆիզիոլոգիական և հոգեկան առանձնահատկությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում աղջիկների և տղաների սեռական հասունացումը՝ ըստ արտաքին սեռական հատկանիշների,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում դեռահասների անձնական հիգիենայի կանոնները և հնարավոր ֆիզիոլոգիական փոփոխությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում և գնահատում դեռահասի բնավորությունը, վարքը, հոգեկան վիճակը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում դաստիարակչական միջոցները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում դեռահաս-ծնող փոխհարաբերությունները, հնարավոր բարդությունները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում առողջությանը սպառնացող ռիսկի գործոնները</p> <p>8) ճիշտ է ներկայացնում օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական փոփոխությունները և վաղ սեռական կյանքի վտանգավորությունն ու բացասական հետևանքները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ: ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԵՎ ԿՆՈՋ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»		
103.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-009
104.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կնոջ վերարտադրողական շրջանի, ընտանիքի պլանավորման, հղիության, ծննդաբերության, հետծննդյան շրջանի առանձնահատկությունների մասին գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
105.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
106.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001

		«Պացիենտի կրթում», ՄԲԳ-5-20-008 «Մարդու կենսագործունեության փուլերը: Մսուրային, նախադարոցական, վաղ դարոցական, դեռահասության տարիքային առանձնահատկությունները» մոդուլը: մոդուլները:
107.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
108.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սոցիալ-հոգեբանական առողջության սկզբունքները, կնոջ և տղամարդու սեռական օրգանների կառուցվածքը, վնասակար գործոնների ազդեցությունը վերարտադրողական առողջության վրա
109.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սոցիալ-հոգեբանական առողջության սկզբունքները, հասարակության ազդեցությունը կնոջ առողջության վրա, 2) ճիշտ է ներկայացնում կնոջ և տղամարդու սեռական օրգանների կառուցվածքը և հիգիենան, 3) ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր օրգանի նշանակությունը և դերը սեռական կյանքում, 4) ճիշտ է ներկայացնում արական և իգական սեռական հորմոնները և դրանց կենսաբանական ազդեցությունը, 5) ճիշտ է ներկայացնում դաշտանային պարբերաշրջանը, հաշվառում հնարավոր բեղմնավորման օրերը՝ վարելով դաշտանային օրացույց, 6) ճիշտ է ներկայացնում վնասակար գործոնները և դրանց ազդեցությունը օվոգենեզի, սպերմատոգենեզի և մարդու վերարտադրողական առողջության վրա:
110.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել սեռական կյանքի, անվտանգ սեռական հարաբերությունների նշանակությունը
111.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սեռական խանգարումները և խանգարումների բացասական ազդեցությունը մարդու հոգեսոմատիկ վիճակի վրա, 2) ճիշտ է ներկայացնում սեռական կյանքի հիգիենա հասկացությանը, տիրապետում է սեռական ճանապարհով փոխանցվող առավել տարածված հիվանդությունների մասին տեղեկատվությանը (ՄԻԱՎ, ՁԻԱՀ) և սեռավարակները կանխարգելելու ժամանակակից մեթոդներին, 3) ճիշտ է ներկայացնում ինտիմ հարաբերությունների նշանակությունը և սահմանում սեքսուալ ներդաշնակություն կամ աններդաշնակություն հասկացությունները,

		4) ճիշտ է ներկայացնում առողջ և անվտանգ սեռական հարաբերությունների կանոնները:
112.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ընտանեկան կյանքի սոցիալ-հոգեբանական բնագավառները, ընտանիքի պլանավորման ծառայությունների գործունեությունը
113.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում հասարակության մեջ ընտանիքի դերն ու նշանակությունը, «Ընտանիքի սոցիոլոգիա» հասկացությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ժամանակակից հասարակության մեջ ընտանիքի դերը, դրա խնդիրները, դրանց լուծման ուղիները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում ընտանիքի պլանավորումը՝ որպես բնակչության վերարտադրողական առողջության պահպանման պետական ծրագիր,</p> <p>4) ճիշտ է սահմանում ժամանակակից ընտանիքի պլանավորման ծառայության աշխատանքի հիմնական սկզբունքները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում տարբեր հակաբեղմնավորիչ միջոցների թերություններն ու առավելությունները, կիրառման եղանակները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում արհեստական վիժման կանխարգելման հարցում իրազեկումը բուժքրոջ կողմից:</p>
114.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ֆիզիոլոգիական հղիության առանձնահատկությունները
115.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է սահմանում ֆիզիոլոգիական հղիության նշանները, ընթացքը և տևողությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հղիության ընթացքում առաջացող ինքնազգացողության վատթարացման նշանները,</p> <p>3) ճիշտ է սահմանում հղի կնոջ մոտ տեղի ունեցող ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխությունները, դրանց հիմնական պահանջները և բավարարումը,</p> <p>4) ճիշտ է բացատրում հղի կնոջ անձնական հիգիենայի ռացիոնալ՝ խելացի սնուցման, օրվա ռեժիմի, շարժողական ակտիվության նշանակությունը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում կնոջ վերարտադրողական առողջության կարևորությունը և ընտանիքի պլանավորման կենտրոնների աշխատանքային գործունեությունը, բուժքրոջ դերը այդ կենտրոնների աշխատանքներում,</p>

		<p>6) ճիշտ է ներկայացնում կնոջ առողջության վրա բացասաբար ազդող գործոնները,</p> <p>7) ճիշտ է սահմանում բուժքրոջ քարոզչության կարևորությունը, նրա դերը և ներգրավվածությունը:</p>
116.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ֆիզիոլոգիական ծննդաբերության և հետծննդյան շրջանի ընթացքը
117.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ֆիզիոլոգիական ծննդաբերության ընթացքը, տևողությունը, շրջանները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ծննդաբերության ժամանակ օգնության ցուցաբերման համապատասխան ցուցումները,</p> <p>3) ճիշտ է նկարագրում հետծննդյան շրջանի ընթացքը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում կնոջ օրգանիզմում տեղի ունեցած փոփոխությունները և տալիս է անհրաժեշտ խորհուրդներ,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում քույրական խնամքի կարևորությունը ծննդաբերության և հետծննդյան շրջաններում,</p> <p>6) ճիշտ է մեկնաբանում ծննդաբերության ժամանակ անհետաձգելի իրավիճակները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում հղիության և ծննդաբերության ժամանակ հնարավոր բարդությունները:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ: ԿԼԻՄԱՔՏԵՐԻԿ ԵՎ ԾԵՐՈՒՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»		
118.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-010
119.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ կլիմաքտերիկ շրջանի, տարեց և ծերունական տարիքի առանձնահատկությունների, նրա հիմնական պահանջների մասին գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու հմտություններ:
120.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
121.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում», ՄԲԳ-5-20-009 «Մարդու կենսագործունեության փուլերը: Վերարտադրողական տարիքում տղամարդու և կնոջ տարիքային առանձնահատկությունները» մոդուլները:
122.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

123.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կանանց և տղամարդկանց օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները կլիմաքտերիկ շրջանում
124.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կլիմաքտերիկ շրջանում օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, 2) ճիշտ է ներկայացնում կլիմաքտերիկ շրջանը մարդու կյանքում որպես առանձնահատուկ շրջան, 3) ճիշտ է սահմանում այս շրջանի առանձնահատկությունները կանանց և տղամարդկանց մոտ՝ վերարտադրողական ֆունկցիայի մարում, հոգեկան պրոբլեմներ, 4) ճիշտ է սահմանում առողջ ապրելակերպի ազդեցությունը կլիմակտերիկ շրջանի բարենպաստ ընթացքի վրա, 5) ճիշտ է բնութագրում բուժքրոջ դերը հասարակության առողջապահական կրթման, վնասակար սովորությունների դեմ պայքարի հարցում:
125.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ծերացման գործընթացը, տարիքային խմբերի դասակարգումը
126.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տիրապետում տարիքային խմբերի դասակարգմանը և սահմանում ծերացման մեխանիզմը, 2) ճիշտ է ներկայացնում վաղաժամ ծերությանը նպաստող գործոնները և դրանց անցանկալի հետևանքները, 3) ճիշտ է ներկայացնում «գերիատրիա» և «գեոնտոլոգիա» հասկացությունները, 4) ճիշտ է ներկայացնում տարեց, ծերունական տարիքում օրգան-համակարգերի կողմից փոփոխությունները և անհատի հոգեբանական փոփոխությունները, 5) ճիշտ է ներկայացնում սպասարկման բազմաթիվ առանձնահատկությունները և օգնության կազմակերպման մեթոդները, 6) ճիշտ է ներկայացնում «էվթանազիա» և «մահ» հասկացությունները, 7) ճիշտ է բնութագրում տարեց և ծերունական տարիքի մարդկանց բժշկական և սոցիալական պաշտպանության հայեցակետերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»		
127.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-011
128.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել տարբերակել միկրոօրգանիզմներն՝ ըստ իրենց հիմնական

		հատկանիշների, անցկացնել հետազոտություններ, պատկերացում ունենալ իմունիտետի և նրա գործոնների, վարակի աղբյուրի, տարածման ուղիների և փոխանցման գործոնների մասին, իրականացնել վարակի տարածման կանխարգելիչ միջոցառումներ:
129.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
130.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
131.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
132.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել միկրոօրգանիզմներն՝ ըստ իրենց ձևաբանական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական հատկանիշների և դրանց հետազոտման եղանակները
133.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է միկրոօրգանիզմների դերը և գործնական նշանակությունը մարդու կյանքում, 2) դասակարգում և տարբերակում է միկրոօրգանիզմներն՝ ըստ իրենց ձևաբանական հատկանիշների, 3) նկարագրում, հետազոտում և տարբերակում է միկրոօրգանիզմներն՝ ըստ իրենց ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների, 4) ներկայացնում է հետազոտվող նյութի հավաքման և տեղափոխման կանոնակարգը:
134.	Ուսումնառության արդյունք 2	Իրականացնել նախավարակազերծող, վարակազերծող, մանրէազերծող միջոցառումներ և կատարել նրանց որակի սանիտարամանրէաբանական հսկողություն, իմունականխանագելիչ, քիմիականխարգելիչ և բուժիչ միջոցառումներ
135.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը միկրոօրգանիզմների վրա, 2) ճիշտ է բացատրում ինֆեկցիա, ինֆեկցիոն և էպիդեմիկ պրոցես հասկացությունները և նրանց գործոնները, ճիշտ է պատրաստում վարակազերծող լուծույթ, իրականացնում աշխատատեղի, ձեռքերի, բժշկական նշանակության իրերի և սպասքի, օժանդակ նյութերի վարակազերծում, 3) ճիշտ է կիրառում գոլորշային, չորացնող, տինդալացման հականեխող սարքերը, 4) ճիշտ է բացատրում իմունիտետի գործոնները և նրանց հետազոտումը, 5) ճիշտ է կազմակերպում և իրականացնում վարակիչ հիվանդությունների իմունականխարգելումը, քիմիականխարգելիչ և բուժիչ միջոցառումները:

136.	Ուսումնառության արդյունք 3	Բացատրել ախտածին կոկերի, կորինեբակտերիաների, միկոբակտերիաների, ախտածին կլոստրիդիումների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները և իրականացնել դրանց մանրէաբանական հետազոտությունը, կանխարգելիչ միջոցառումները
137.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ախտածին կոկերի մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը, 2) ներկայացնում է կորինեբակտերիաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը, 3) նկարագրում է միկոբակտերիաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը, 4) նկարագրում է ախտածին կլոստրիդիումների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը:
138.	Ուսումնառության արդյունք 4	Բացատրել աղիքային բակտերիաների ընտանիքի, մալարիայի հարուցչի առանձնահատկությունները, փոխանցման ուղիներն և իրականացնել դրանց մանրէաբանական հետազոտությունը, կանխարգելիչ միջոցառումները
139.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է սալմոնելաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը, 2) ներկայացնում է շիգելաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը, 3) ներկայացնում է էշերիխիաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական

		<p>առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը,</p> <p>4) ներկայացնում մ է խոլերայի վիրուսի մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը,</p> <p>5) ներկայացնում է պլազմոդիումի մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը:</p>
140.	Ուսումնառության արդյունք 5	Բացատրել զոոնոզ ինֆեկցիաների հարուցիչների և վիրուսների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները, իրականացնել դրանց մանրէաբանական հետազոտությունը և կանխարգելիչ միջոցառումները
141.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է բրուցելլաների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը,</p> <p>2) ներկայացնում է սիբիրյան խոցի հարուցիչ մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը,</p> <p>3) ներկայացնում է ժանտախտի և տուլարեմիայի հարուցիչների մորֆոլոգիական, ֆիզիկական, կենսաբանական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները, իրականացնում դրանց մանրէաբանական հետազոտումը և կանխարգելումը,</p> <p>4) ներկայացնում է վիրուսների կառուցվածքը, քիմիական կազմը, դասակարգումը առաջացրած հիվանդությունները, լաբորատոր ախտորոշման առանձնահատկությունները և կանխարգելումը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ»		
142.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-012
143.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել՝ դեղաձևերը, տալ դեղի բնութագիրն՝ ըստ նրանց ֆարմակոկինետիկ և ֆարմակոդինամիկ հատկանիշների, ներկայացնել դեղերի դուրս գրման սկզբունքները

		դեղատոմսով, կարողանալ օգտվել տեղեկագրերից:
144.	Մոդուլի տևողությունը	24 ժամ
145.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-003 «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ» մոդուլը:
146.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
147.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել և ցուցադրել դեղորայքային ձևերը
148.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) խմբավորում է դեղերի բազմության միջից՝ կարծր, հեղուկ, փափուկ դեղաձևերը, 2) բացատրում է դեղորայքային ձևերի կառուցվածքային առանձնահատկությունները, 3) ներկայացնում է դեղորայքային ձևերի կիրառման և պահպանման պայմանները:
149.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել դեղի դուրս գրման սկզբունքները և անհրաժեշտության դեպքում դուրս գրել դեղատոմս
150.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է դեղատոմսի ձևերը, կառուցվածքը, 2) բացատրում է դեղատոմսում առկա կրճատումները, օգտագործման եղանակները՝ պահպանելով դեղատոմսի դուրս գրման կանոնները, 3) օգտվում է մասնագիտական տեղեկագրերից, աննոտացիաներից:
151.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ֆարմակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի հիմնական դրույթները և հասկացողությունները
152.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ներմուծման ուղիները՝ բացատրելով առանձնահատկությունները և օրգանիզմում առաջացած փոփոխությունները դեղերի կրկնակի ներմուծման ժամանակ և զուգորդված կիրառման ժամանակ, 2) ներկայացնում է դեղերի ազդեցության տեսակները, տարրաբաշխման վրա ազդող գործոնները, արտազատման ուղիները, 3) տարբերակում է դեղաչափի (դոզայի) տեսակները՝ նշելով առանձնահատկությունները:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ՆՅԱՐԴԱՅԻՆ, ՇՆՉԱՌԱԿԱՆ, ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

**ՎՐԱ ԱԶԴՈՂ ԴԵՂԵՐ, ՀԱԿԱԲԱԿՏԵՐԻԱԼ, ՀԱԿԱՍՆԿԱՅԻՆ, ՀԱԿԱՆԵԽԻՉ ԵՎ ՔԻՄԻԱԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԴԵՂԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ»**

153.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-013
154.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել դեղերի դասակարգման վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
155.	Մոդուլի տևողությունը	24 ժամ
156.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-002 «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ», ՄԲԳ-5-20-012 «Ընդհանուր դեղաբանություն» մոդուլները:
157.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
158.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգերի վրա ազդող դեղամիջոցներին, ըստ խմբերի և ենթախմբերի
159.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) դասակարգում է տվյալ խմբերի դեղերը, 2) ներկայացնում է այս դեղերի ազդեցության մեխանիզմը, 3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը՝ նշելով կիրառման առանձնահատկությունները, 4) ներկայացնում է դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և վերջիններիս կանխման եղանակները, 5) ներկայացնում է դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները, 6) դուրս է գրում տվյալ խմբերի դեղերը դեղատոմսով:
160.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շնչառական, սրտանոթային համակարգի վրա ազդող դեղերը՝ ըստ խմբերի և ենթախմբերի
161.	Կատարման չափանիշներ	1) դասակարգում է տվյալ խմբերի դեղերը,

		<p>2) ներկայացնում է դեղերի ազդեցության մեխանիզմը,</p> <p>3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը՝ նշելով կիրառման առանձնահատկությունները,</p> <p>4) ներկայացնում է դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և վերջիններիս կանխման եղանակները,</p> <p>5) ներկայացնում է դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները,</p> <p>6) դուրս է գրում տվյալ խմբերի դեղերը դեղատոմսով:</p>
162.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել և դասակարգել հականեխիչները (հակասեպտիկներ), հակաբակտերիալ քիմիոթերապևտիկ և հակասնկային դեղերը
163.	Կատարման չափանիշներ	<p>1) դասակարգում է տվյալ խմբերի դեղերը,</p> <p>2) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերի ազդեցության մեխանիզմը,</p> <p>3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը, նշելով կիրառման առանձնահատկությունները,</p> <p>4) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և վերջիններիս կանխման եղանակները,</p> <p>5) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները,</p> <p>6) դուրս է գրում տվյալ խմբերի դեղերը դեղատոմսում:</p>
<p>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ՍԱՄՈՔՍԱԴԻՔԱՅԻՆ, ԱՐՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ՄԻՉԱՄՈՒՂ, ՀՈՐՄՈՆԱԼ, ԱՐԳԱՆԴԻ ՏՈՆՈՒՄԻ, H1, H2 ԸՆԱԿԼԻՉՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՉԱՅԻՆ, ՀԱԿԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԵՎ ՀԱԿԱՊԱՐԱԶԻՏԱՐ ԴԵՂԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ»</p>		
164.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-014
165.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել դասակարգել դեղերը խմբերի և ենթախմբերի՝ ըստ օրգան համակարգերի, նյութափոխանակության, մանրէների, ախտաբանական վիճակների վրա ունեցած

		ազդեցության:
166.	Մոդուլի տևողությունը	24 ժամ
167.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-002 «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ», ՄԲԳ-5-20-012 «Ընդհանուր դեղաբանություն» մոդուլները:
168.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
169.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել և դասակարգել ստամոքսաղիքային տրակտի, արյան համակարգի, պլազմային փոխարինող դեղերը
170.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) դասակարգում է տվյալ խմբերի դեղերը, 2) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերի ազդեցության մեխանիզմը, 3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը՝ նշելով կիրառման առանձնահատկությունները, 4) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերի սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և կանխման եղանակները, 5) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները, 6) դուրս է գրում տվյալ խմբերի դեղերը դեղատոմսով:
171.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել և դասակարգել հորմոնալ, միզամուղ, արգանդամկանի տոնուսի և կծկողականության վրա ազդող դեղերը
172.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) դասակարգում է տվյալ խմբերի դեղերը, 2) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերը ազդեցության մեխանիզմը, 3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը, նշելով կիրառման առանձնահատկությունները, 4) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և

		կանխման եղանակները, 5) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները, 6) դուրս է գրում տվյալ խմբերի դեղերը դեղատոմսով:
173.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել և դասակարգել հակավիրուսային, հակատուբերկուլյոզային, հակամետրաբային, հակաճճվային դեղերը
174.	Կատարման չափանիշներ	1) դասակարգում է տվյալ խմբերի դեղերը, 2) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերը ազդեցության մեխանիզմը, 3) անհրաժեշտության դեպքում ընտրում և առաջարկում է հոմանիշ դեղերը, նշելով կիրառման առանձնահատկությունները, 4) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերից սպասվող բարդությունները, կողմնակի երևույթները և վերջիններիս կանխման եղանակները, 5) ներկայացնում է տվյալ խմբերի դեղերի գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները և կիրառվող առաջին բուժօգնության սկզբունքները, 6) դուրս է գրում տվյալ խմբերի դեղերը դեղատոմսով:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԻԳԻԵՆԱ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԷԿՈԼՈԳԻԱ»		
175.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-015
176.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մարդու առողջության և կենսագործունեության վրա ազդող միջավայրի գործոնների մասին ընդհանուր գիտելիքներ ու կարողություններ՝ դրանց սանիտարահիգիենիկ գնահատման և համապատասխան կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:
177.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
178.	Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում» մոդուլը:
179.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

180.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել օդային միջավայրի քիմիական կազմը, ֆիզիկական հատկությունները, դրա էկոլոգիական և հիգիենիկ նշանակությունը օրգանիզմի վրա, ախտոտման աղբյուրները, սանիտարահիգիենիկ նորմերը և կանխարգելիչ միջոցառումները
181.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է էկոլոգիան և հիգիենան որպես գիտություններ, դրանց փոխադարձ կապը, 2) սահմանում է օդային միջավայրի քիմիական կազմը և ֆիզիկական հատկությունները, 3) նկարագրում է մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրները, սանիտարահիգիենիկ նորմերը և դրա պաշտպանիչ միջոցառումները:
182.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հողի և ջրի ֆիզիկական հատկությունները, քիմիական կազմը, դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա, աղտոտման աղբյուրները և կանխարգելիչ միջոցառումները
183.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նկարագրում է հողի քիմիական կազմը, դրա ինքնամաքումը, աղտոտման աղբյուրները, անթրոպոգեն գործոնի ազդեցությունը դրա վրա, հողի միջոցով փոխանցվող հիվանդությունները, 2) նկարագրում է ջրի էկոլոգիական և հիգիենիկ նշանակությունը, 3) նկարագրում է ջրի մաքրումն ու վարակազերծումը, 4) վերցնում է ջրի նմուշը քիմիական և բակտերիոլոգիական հետազոտությունների համար, որոշում դրանց օրգանոլեպտիկ հատկությունները, 5) որոշում է մնացորդային քլորի քանակը ջրում:
184.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել սննդի էկոլոգիական և հիգիենիկ նշանակությունը
185.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) սահմանում է ռացիոնալ սնունդը, դրա նորմերը կախված ֆիզիոլոգիական առաձնահատկություններից, 2) նկարագրում է սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի հիգիենիկ նշանակությունը օրգանիզմի համար, 3) նկարագրում է վիտամինների, հանքային աղերի հիգիենիկ նշանակությունը օրգանիզմի համար, 4) ներկայացնել է սննդի կառուցահատվածը, դրա պլանավորումը, սարքավորումները, հիգիենիկ ռեժիմը և սահմանում հսկողություն սննդամթերքի արտադրության, տեղափոխման ու իրացման վրա, դրանց գնահատումը, 5) կազմում է բուժական դիետաներ,

		6) ճիշտ է բացատրում գերսնուցում, թերսնուցում հասկացությունները, դրանց հետևանքով առաջացած հիվանդությունները և նկարագրում սննդային թունավորումները:
186.	Ուսումնառության արդյունք 4	Բացատրել կենսաբանական հարմարողական ռիթմերը, դրանց որոշումն ու գնահատումը
187.	Կատարման չափանիշներ	1) նկարագրում է հարմարողական ռիթմերի տեսակները և դրանց դասակարգումը, 2) բացատրում է ներբջջային կենսառիթմերը, 3) կազմում է օրվա ռեժիմն՝ ըստ քրոնոտիպի, 4) որոշում է օրգանիզմի հոգնածությունը ստուգիչ աղյուսակներով:
188.	Ուսումնառության արդյունք 5	Բացատրել ուրբանիզացիայի պրոբլեմներն ու մարդու էկոլոգիան
189.	Կատարման չափանիշներ	1) նկարագրում է ուրբանիզացիայի էկոլոգիական և հիգիենիկ պրոբլեմները, 2) նկարագրում է էկոլոգիական գործոններին ազդեցությունը բնակչության առողջության և դեմոգրաֆիկ ցուցանիշների վրա, 3) վերլուծում է շինության բնական և արհեստական լուսավորվածության պայմանները, 4) գնահատում և հաշվարկում է բուժարոճի հիմնարկների հողհատկացումը և պլանավորումը, 5) նկարագրում է հիվանդասենյակների սանիտարահիգիենիկ հետազոտությունը, 6) կազմակերպում է համապատասխան սանիտարալուսավորական աշխատանքները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		
190.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-016
191.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հոգեբանության հետազոտման մեթոդների, անձի ձևավորման և հոգեբանական բնութագրի, սթրեսային իրավիճակներում հաղորդակցման միջոցների և գործառույթների, մասին գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
192.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
193.	Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում» մոդուլը:
194.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

195.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հոգեբանություն առարկան, դրա հետազոտման եղանակները, անձի հոգեբանական բնութագրերը և առանձնահատկությունները
196.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) սահմանում է հոգեբանություն առարկան, 2) ներկայացնում է դրա հետազոտման եղանակները, 3) բացատրում է անձի հոգեբանական բնութագրերը, անհատ, անձնավորություն, առանձնահատկություն հասկացողությունները, 4) ներկայացնում է անձի կառուցվածքը և պահանջմունքները, 5) սահմանում է անձի հոգեբանական առանձնահատկությունները, 6) ներկայացնում է խառնվածքի տիպերը, բնավորության գծերը, ընդունակությունների բացահայտումը, զարգացումը:
197.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ճանաչողական գործընթացների ընդհանուր բնութագիրը և մարդու գործունեության հուզականային ոլորտը
198.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ճանաչողական գործընթացների ընդհանուր բնութագիրը և դրա փուլերը, ուշադրություն և ցրվածություն հասկացությունները, 2) դասակարգում և նկարագրում է զգայություն հասկացությունը, 3) նկարագրում է «զգայության շեմք» հասկացությունը, 4) նկարագրում է՝ ըմբռնում, հիշողություն, մտածողություն սահմանումները, տեսակները, խանգարումները, 5) սահմանում է երևակայություն հասկացությունը և ներկայացնում երևակայության տեսակները, 6) նկարագրում է անձի գործունեության հուզականային ոլորտը, 7) ներկայացնում է հույզերի և զգացմունքների տեսակները:
199.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել միջանձնային հարաբերությունների հոգեբանությունը
200.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անձերի միջև փոխհարաբերությունները, 2) ճիշտ է ներկայացնում տարբեր իրավիճակներում միջանձնային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		

201.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-017
202.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հոգեբանության հիմնական խնդիրների և մեթոդների, սթրեսային և կոնֆլիկտային իրավիճակների լուծման ուղիների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
203.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
204.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-016 «Ընդհանուր հոգեբանության հիմունքներ» մոդուլը:
205.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
206.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բժշկական հոգեբանությունը որպես գիտություն
207.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բժշկական հոգեբանության նպատակը, հիմնական մեթոդները և խնդիրները, 2) ճիշտ է ներկայացնում հոգեմարմնական և մարմնահոգեկան գործընթացները, 3) ճիշտ է սահմանում սթրեսակայունությունը որպես ժամանակակից բժշկական հոգեբանության կարևորագույն մաս, 4) ճիշտ է սահմանում անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմները և անձի հակազդեցությունները նյարդահոգեկան խանգարումներին, 5) ճիշտ է ներկայացնում հակազդեցություն հասկացությունը, 6) ճիշտ է ներկայացնում բուժաշխատողի մասնագիտական և անձնային հատկանիշները և հաղորդակցումը պացիենտի հետ:
208.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել քույրական միջամտությունների իրականացման հոգեբանությունը, իրականացնել հոգեբանական համապատասխան խնամք
209.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 7) ճիշտ է իրականացնում քույրական միջամտության հոգեբանությունը, հոգեբանորեն նախապատրաստում է պացիենտին հետազոտման և բուժական մանիպուլյացիանների, 8) ճիշտ է սահմանում հոգեպրոֆիլակտիկա, հոգեհիգիենա, և հոգեթերապիա հասկացությունները,

		<p>իրականացնում է հոգեպրոֆիլակտիկ միջոցառումներ,</p> <p>9) ճիշտ է ներկայացնում տարբեր հիվանդություններով տառապող պացիենտների հոգեվիճակը, հոգեբանական առանձնահատկությունները,</p> <p>10) ճիշտ է ներկայացնում հոգեբանական խնամքը մահացողի նկատմամբ, և ցուցաբերում է հոգեբանական մոտեցում մահացողի հարազատներին:</p>
210.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել սթրեսային և կոնֆլիկտային իրավիճակների լուծման ուղիները
211.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է սահմանում սթրեսային և կոնֆլիկտային իրավիճակները</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հետտրավմատիկ սթրեսային խանգարումները (<SUH>), դրանց ախտանիշները, ռիսկի գործոններն ու տարածվածությունը, ինչպես նաև կլինիկահոգեախտաբանական չափորոշիչները,</p> <p>3) ճիշտ է բնութագրում վշտի հոգեբանական վերլուծությունը,</p> <p>4) ճիշտ է սահմանում «Սթրեսակայունություն» հասկացությունը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ»		
212.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-018
213.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել խաղաղ և ռազմական արտակարգ իրավիճակներում բուժառայության աշխատանքները ճիշտ կազմակերպելու և բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու հմտու թյուններ:
214.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
215.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: <Ենդերսոնի մոդելի կիրառում» մոդուլը:
216.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
217.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աղետների բժշկության ծառայության կազմակերպումը
218.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է աղետների տեսակները,

		<p>2) ներկայացնում է աղետի օջախում մարդու առողջության վրա ազդող վնասական գործոնները,</p> <p>3) ներկայացնում է բուժտարհանման ժամանակակից համակարգը արտակարգ իրավիճակներում,</p> <p>4) ներկայացնում է սանառողջաբանական և հակահամաճարակային միջոցառումները արտակարգ իրավիճակներում,</p> <p>5) տիրապետում է տուժածների որոնման, տեղափոխման, տուժածին մոտենալու տարբեր մեթոդներին աղետի օջախում,</p> <p>6) ներկայացնում և կազմակերպում է բուժտեսակավորումը աղետի օջախում:</p>
219.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել բուժճառայության գործողությունները ճառագայթակտիվ վարակման օջախում
220.	Կատարման չափանիշներ	<p>1) սահմանում է ճառագայթակտիվ նյութեր, ճառագայթակտիվություն, իրոնացնող ճառագայթում, ճառագայթային վթար, ճառագայթավտանգ օբյեկտ հասկացությունները,</p> <p>2) ներկայացնում է ատոմային էլեկտրակայանները (ԱԷԿ) և ատոմային էլեկտրակայանների վթարների տեսակները,</p> <p>3) ներկայացնում է ճառագայթային ախտահարումները, կազմակերպում առաջին բուժօգնության միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է բնակչության գործողությունները ճառագայթային վարակման վտանգի դեպքում,</p> <p>5) ներկայացնում է ճառագայթային բաժնեչափական հսկման սարքերի աշխատանքի սկզբունքները, դրանց շահագործման կարգը,</p> <p>6) կատարում է յոդային կանխարգելում և դեզակտիվացման միջոցառումներ:</p>
221.	Ուսումնառության արդյունք 3	Կազմակերպել բուժճառայության գործողությունները քիմիական վարակման օջախում
222.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է քիմիապես վտանգավոր օբյեկտ, քիմիական վթար, ուժեղ ներգործության թունավոր նյութեր հասկացությունները,</p> <p>2) ներկայացնում է ՈւՆԹՆ-ների հատկությունները, դասակարգումը, թունավորման կլինիկական պատկերը և կատարում բուժօգնություն նախահոսպիտալային փուլում,</p> <p>3) ներկայացնում է մարտական թունավոր նյութերը և թունավորման ժամանակ կատարում բուժօգնություն նախահոսպիտալային փուլում,</p>

		4) ներկայացնում է բնակչության գործողությունները քիմիական վարակման օջախում, դեգազացման մեթոդները, ցուցադրում հակաքիմիական հետախուզման սարքերի կառուցվածքը, աշխատանքի ձևը, կատարում դեգազացման միջոցառումներ, օգտվում քիմիական հետախուզման սարքերից:
223.	Ուսումնառության արդյունք 4	Դասակարգել և տարբերակել բնական և սոցիալական աղետները
224.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է երկրաշարժի օջախի բժշկատակտիկական բնութագիրը և առաջին բուժօգնություն ցուցաբերում երկարատև ճնշման համախճտանիշի դեպքում,</p> <p>2) նկարագրում է ջրհեղեղի օջախի բժշկատակտիկական բնութագիրը և առաջին բուժօգնություն ցուցաբերում ջրահեղձման դեպքում,</p> <p>3) սահմանում է սողանքի օջախը և կազմակերպում բնակչության գործողությունները սողանքի օջախում,</p> <p>4) կազմակերպում է առաջին բուժօգնությունը կայծակահարության և էլեկտրահարության դեպքում,</p> <p>5) դասակարգում է սոցիալական աղետները և ներկայացնում առաջին բուժօգնությունը ակոհոլային կոմայի, թմրանյութերով թունավորման դեպքում,</p> <p>6) կազմակերպում է անձի վարքագիծը և գործողությունները ահաբեկչության դեպքում:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎԱՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
225.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-019
226.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու կարողություններ:
227.	Մոդուլի տևողությունը	48 ժամ
228.	Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԲԲԳ-13-004 «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով. ներզատիչ գեղձեր, նյարդային համակարգ և զգայարաններ» մոդուլը:

229.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
230.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
231.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
232.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
233.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն) 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները,
234.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
235.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և

		այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
236.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին բժշկական օգնություն ցրտահարությունների, այրվածքների և վնասվածքների ժամանակ
237.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է վնասող ազդակի ազդեցության վերացման եղանակները, 2) ներկայացնում է ցավային շոկի կանխարգելումը և ցավազրկող միջոցների օգտագործումը, 3) ներկայացնում է վնասված հյուսվածքի առաջնային մշակումը և վիրակապումը, 4) ներկայացնում է տուժածին անվտանգ տեղափոխելու միջոցները և բժշկական անձնակազմի իրազեկումը:
238.	Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ ցուցաբերել առաջին բժշկական օգնություն կոտրվածքների և պոլիտրավմանների ժամանակ
239.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կոտրվածքներին բնորոշ նշանները, որոնց առկայության դեպքում ախտորոշվում է հնարավոր կոտրվածք, 2) ներկայացնում է կոտրվածքի տեսակները և դրանց հետևանքով հնարավոր ախտաբանական պրոցեսները, 3) ներկայացնում է կոտրվածքների ժամանակ առաջին բժշկական օգնության սկզբունքները, անշարժացման եղանակները և կատարում է կոտրվածքի իմմոբիլիզացիան ձեռքի տակ եղած միջոցներով, 4) ներկայացնում է ցավային շոկի կանխարգելման միջոցները, 5) ներկայացնում է պոլիտրավմանների ժամանակ առաջին բժշկական օգնության ցուցաբերման առանձնահատկությունները:
240.	Ուսումնառության արդյունք 6	Ցուցաբերել առաջին բժշկական օգնություն արյունահոսությունների ժամանակ
241.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արյունահոսությունների տեսակները և տարբերակում դրանք, 2) ներկայացնում է սուր արյունահոսության ժամանակ տեղի ունեցող ախտաբանական պրոցեսները և արյունահոսության դանդաղեցման կամ մեղմացման անհրաժեշտությունը,

		<p>3) ներկայացնում է արյունահոսությունների դադարեցման եղանակները և կարողանում է դրանք գործնականում կիրառել,</p> <p>4) ներկայացնում է տուժածի տեղափոխումը և բժշկական անձնակազմի իրազեկումը:</p>
242.	Ուսումնառության արդյունք 7	Ցուցաբերել առաջին բժշկական օգնություն սուր թունավորումների ժամանակ
243.	Կատարման չափանիշներ	<p>1) բնորոշում է սուր թունավորումների ախտանիշները և տարբերակում դրանք,</p> <p>2) ներկայացնում է սուր թունավորումների ժամանակ ախտաբանական պրոցեսները,</p> <p>3) ներկայացնում է սուր թունավորումների ժամանակ դետոքսիկացիայի եղանակները և ձեռքի տակ եղած նյութերով ցուցաբերում է առաջին բժշկական օգնություն,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում տուժածի տեղափոխումը և բժշկական անձնակազմի իրազեկումը:</p>
244.	Ուսումնառության արդյունք 8	Ցուցաբերել առաջին բժշկական օգնություն կլինիկական մահվան ժամանակ
245.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կլինիկական մահվան ախտանիշները և տարբերակում դրանք,</p> <p>2) ներկայացնում է սրտի և շնչառության կանգի ժամանակ ախտաբանական պրոցեսները և դրանց վերականգնման հրատապությունը,</p> <p>3) ներկայացնում է արհեստական շնչառության անցկացման տեսակները, ապահովում է շնչուղիների անցանելիությունը և իրականացնում արհեստական շնչառություն,</p> <p>4) ներկայացնում է սրտի աշխատանքի վերականգնման մեթոդները և իրականացնում սրտի արհեստական մերսում,</p> <p>5) իրականացնում է սիրտ-թոքային վերակենդանացում միայնակ կամ օգնականի հետ,</p> <p>6) գնահատում է սիրտ-թոքային վերակենդանացման արդյունավետությունը և անցկացման նպատակահարմարությունը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՑԻԵՆՏԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»		
246.	Մոդուլի դասիչը	ԲԲԳ-5-20-020
247.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բուժաշխատողի և պացիենտի իրավունքների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև իրավաբանական պարտականությունների, հատկապես պացիենտի անվտանգության երաշխիքների

		պահպանման վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
248.	Մուտքային պահանջները	18 ժամ
249.	Մոդուլի գնահատման կարգը	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում» մոդուլը:
250.	Ուսումնառության արդյունք 1	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
251.	Կատարման չափանիշներ	Ներկայացնել բուժքույրական գործը և պացիենտի իրավունքները
252.	Ուսումնառության արդյունք 2	1) ճիշտ է բացատրում մարդու և պացիենտի իրավունքները, նրա անվտանգության երաշխիքները, 2) ճիշտ է բացատրում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժքույրերի իրավունքներն ու պարտականությունները, 3) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ բարոյական պարտականությունները:
253.	Կատարման չափանիշներ	Նկարագրել բուժքույրական գործը և գաղտնիության իրավունքը
254.	Ուսումնառության արդյունք 3	1) ճիշտ է բացատրում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, 2) ճիշտ է ներկայացնում առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու մարդու իրավունքը, 3) ճիշտ է ներկայացնում գաղտնիության իրավունքը:
255.	Կատարման չափանիշներ	Ներկայացնել բուժքույրական էթիկան և որակյալ բուժօգնությունը
256.	Ուսումնառության արդյունք 4	1) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ էթիկայի կանոնները, 2) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ ներքին կուլտուրայի կարևոր և հիմնական որակական հատկանիշները, 3) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ խոսքի կուլտուրայի կարևոր հատկանիշները, 4) ճիշտ է ներկայացնում բուժքրոջ դեոնտոլոգիայի հայեցակետերը:
257.	Կատարման չափանիշներ	Ներկայացնում է բուժքրոջ հոգեկան հավասարակշռության պահպանման մեթոդները
258.		1) ճիշտ է ներկայացնում սթրես առաջացնող գործոնները, դրանց վնասակար ազդեցությունը, սթրեսի ախտանիշները և հետևանքները, 2) տիրապետում է սթրեսի դեմ պայքարի և կանխարգելման մեթոդներին,

		<p>3) ճիշտ է կարողանում կառավարել աշխատաժամանակը, ճիշտ պլանավորել հանգիստը, խուսափելով գերհոգնածությունից,</p> <p>4) կարողանում է հոգեբանորեն նախապատրաստել հիվանդին քույրական միջամտություններ իրականացնելուց առաջ:</p>
--	--	--

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

259.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-021
260.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ, ներկայացնել քույրական գործի փիլիսոփայությունը, բուժքրոջ ֆունկցիաները, բուժքույրերի միջազգային խորհրդի կողքսիը, քույրական օգնությունը սթրեսի ժամանակ, ինչպես նաև մարդու պահանջների ստորակարգումն՝ ըստ Մասլոուի և դասակարգումն՝ ըստ Հենդերսոնի:
261.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
262.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում» մոդուլը:
263.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
264.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել քույրական գործի պատմությունը և տեսությունը, փիլիսոփայությունը, փիլիսոփայության բաղադրիչ տարրերը, բուժքրոջ առաքելությունը և ֆունկցիաները, քույրերի միջազգային խորհրդի կողքսը
265.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է քույրական գործի պատմությունը և տեսությունը,</p> <p>2) ներկայացնում է քույրական գործի փիլիսոփայությունը,</p> <p>3) տիրապետում է փիլիսոփայության բաղադրիչ տարրերին և բուժքույրերի միջազգային խորհրդի կողքսին,</p> <p>4) ներկայացնում է բուժքրոջ առաքելությունը և ֆունկցիաները:</p>
266.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել սթրեսի սահմանումը, քույրական օգնությունը սթրեսի նկատմամբ ադապտացիայի ժամանակ
267.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է սթրեսի սահմանումը,</p> <p>2) տիրապետում է քույրական օգնությանը սթրեսի նկատմամբ ադապտացիայի ժամանակ,</p>

		<p>3) ներկայացնում է սթրեսի ֆիզիոլոգիական և հոգեբանական ցուցանիշները,</p> <p>4) ներկայացնում է սթրեսի ֆիզիոլոգիական և հոգեբանական ադապտացիայի եղանակները:</p>
268.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մարդու համակողմանի պահանջները՝ ըստ Մասլոուի և Հենդերսոնի, ներկայացնել քույրական գործընթացի մոդելները և փուլերը
269.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարդու կենսական կարևոր պահանջները,</p> <p>2) ներկայացնում է մարդու պահանջների ստորակարգումը՝ ըստ Մասլոուի և դասակարգումը՝ ըստ Հենդերսոնի,</p> <p>3) ներկայացնում է քույրական գործընթացը, դրա էությունը մոդելները և էտապները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ: ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»		
270.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-022
271.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ ներհիվանդանոցային վարակի, դրա կանխարգելման, հետազոտության համար նյութի վերցման վերաբերյալ:
272.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
273.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում», ՄԲԳ-5-20-021 «Քույրական գործի հիմունքներ» մոդուլները:
274.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
275.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել «ներհիվանդանոցային վարակ» հասկացությունը՝ դրա կանխարգելման և վերահսկման միջոցները
276.	Կատարման չափանիշներ	<p>1) սահմանում է «ներհիվանդանոցային վարակ» հասկացությունը,</p> <p>2) սահմանում է «հոսպիտալային վարակ» հասկացությունը և տարբերությունը ներհիվանդանոցային վարակից</p> <p>3) ներկայացնում է ինֆեկցիոն գործընթացի առանձնահատկությունները հիվանդանոցային պայմաններում,</p>

		<p>ռիսկի խմբերը, տիրոջ ընկալության</p> <p>4) ներկայացնում է ինֆեկցիոն գործընթացի առանձնահատկությունները հիվանդանոցային պայմաններում, ռիսկի խմբերը, տիրոջ ընկալության վրա ազդող գործոնները, ինֆեկցիոն պրոցեսի շղթան, գործոնները հարուցիչները և նրանց փոխանցման ձևերը,</p> <p>5) տիրապետում է ներհիվանդանոցային վարակի կանխարգելմանն ուղղված նախազգուշական ունիվերսալ միջոցառումներին: Արյան և կենսաբանական հեղուկների հետ աշխատելիս պահպանում է ընդհանուր նախազգուշական կանոններ,</p> <p>6) ճիշտ է կատարում ձեռքերի լվացման տեխնիկան և իրականացնում ձեռքերի հիգիենիկ լվացումը յուրաքանչյուր պրոցեդուրայից առաջ և հետո,</p> <p>7) կատարում է պաշտպանական հագուստ (բժշկական գլխարկ, խալաթ, դիմակ, ձեռնոց, ակնոց) հանգնելը, հանելը,</p> <p>-տիրապետում է անհատական պաշտպանության միջոցների /ԱՊՄ/ կիրառման կանոններին արտակարգ իրավիճակներում և հիվանդի մեկուսացման պայմաններում</p> <p>- սահմանում է «բժշկական թափոն» հասկացությունը</p> <p>- ներկայացնում է «բժշկական թափոնների» դասակարգումը</p> <p>- տիրապետում է բժշկական թափոնների կառավարման կանոններին</p> <p>8) սահմանում է սուր, կտրող, ծակող գործիքների հետ աշխատելու կանոնները ,կամ/տիրապետում է սուր, կտրող, ծակող բժշկական նշանակության իրերի (ԲՆԻ) հետ աշխատելու և դրանց տեղափոխման անվտանգության կանոններին,</p> <p>9) կատարում է ընդունարանի սանիտարահիգիենիկ միջոցառումները:</p>
277.	Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել «Ախտահանում» հասկացությունը, ախտահանման տեսակները, ձևերը և եղանակները: Պատրաստել ախտահանիչ լուծույթներ՝ պահպանելով անվտանգության կանոնները</p>
278.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է բժշկական նշանակության իրերի (ԲՆԻ) դասակարգումը</p> <p>2) ներկայացնում է ԲՆԻ դեզինֆեկցիայի և ստերիլիզացիայի ենթարկման անհրաժեշտությունը՝ ելնելով դրանց դասակարգումից</p>

		<p>3) ներկայացնում է «Ախտահանում» հասկացությունը,</p> <p>4) ներկայացնում է ախտահանման տեսակները, ձևերը, եղանակները,</p> <p>5) իրականացնում է ախտահանիչ լուծույթի պատրաստումը և կիրառումը (գործիքներ, սարքավորումներ, խնամքի պարագաներ, աշխատանքային մակերեսներ և տարածքներ),</p> <p>6) իրականացնում է բժշկական նշանակություն ունեցող տարբեր գործիքների և տարածքների ախտահանումը,</p> <p>7) տիրապետում է ախտահանիչ ախտահանիչ լուծույթների պատրաստման, պահպանման և դրանց կիրառման կանոններին:</p>
279.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գործիքների նախամանրէազերծման (մանրէազերծման) փուլերը, տիրապետել նախամանրէազերծման որակի ստուգմանը՝ արյուն, ճարպ, սպիտակուց, քլոր, վլացող լուծույթներ: Տիրապետել «Մանրէազերծում» հասկացությանը, մեթոդներին, տեսակներին և ռեժիմներին
280.	Կատարման չափանիշներ	<p>1) իրականացնում է գործիքների նախամանրէազերծումը,</p> <p>2) իրականացնում է նախամանրէազերծման որակի հսկողությունը,</p> <p>3) ներկայացնում է «Մանրէազերծում» հասկացությունը,</p> <p>4) ներկայացնում է մանրէազերծման մեթոդները,</p> <p>5) ներկայացնում է մանրէազերծման որակի ստուգման մեթոդները</p> <p>6) ներկայացնում է կենտրոնացված մանրէազերծման բաժանմունքի կառուցվածքը, ֆունկցիաները և աշխատանքի սկզբունքները,</p> <p>7) տիրապետում է տեղային ստերիլիզացիայի կանոններին,</p> <p>8) տիրապետում է դեզինֆեկցված և ստերիլիզացված ԲՆԻ-ի պահպանման և տեղափոխման կանոններին:</p>
281.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել վիրուսային հեպատիտները՝ բացառությամբ և ՄԻԱՎ վարակի փոխանցումը և կանխարգելումը, սահմանել հսկողության նախազգուշական ունիվերսալ միջոցները
282.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է վիրուսային հեպատիտների՝ բացառությամբ և ՄԻԱՎ վարակի փոխանցման ձևերը,</p> <p>2) իրականացնում է բուժաստատություններում վարակի կանխարգելումը,</p>

		3) ներկայացնում է կանխարգելիչ ունիվերսալ միջոցների պահպանումը և սահմանում հսկողություն դրանց նկատմամբ:
283.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել անվտանգության կանոնների պահպանումը տարբեր կենսաբանական նյութերի հետ աշխատելիս
284.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մանրէաբանական հետազոտության համար նմուշի վերցման նպատակը, տեխնիկան և կանոնները, 2) ճիշտ է կատարում նմուշառումը մանրէաբանական հետազոտության համար, 3) իրականացնում է նմուշի պահպանումը և տեղափոխումը մանրէաբանական լաբորատորիա, 4) ճիշտ է իրականացնում կենսասեղուկների և տարբեր կենսաբանական նյութերի հետ աշխատելու անվտանգության կանոնները, իրականացնում է նախազգուշական միջոցառումներ կենսասեղուկների հետ աշխատելիս:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ: ՄԱՐՄՆԻ ԲԻՈՄԵԽԱՆԻԿԱ: ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՈՒՆԱՎՈՐ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎՐԱ: ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔԸ»		
285.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-023
286.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ, սովորեցնել բիոմեխանիկայի ճիշտ պահպանումը, ծանր հիվանդների խնամքը, թունավոր և վնասակար նյութերի ազդեցությունը բուժքրոջ առողջության վրա, պացիենտի ընդունումը բուժհաստատություն, ֆունկցիոնալ վիճակի գնահատումը, օգնությունը տենդի ժամանակ, քույրական գործընթացի կազմակերպումը տարբեր իրավիճակներում:
287.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
288.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում», ՄԲԳ-5-20-022 «Քույրական գործի հիմունքներ: Ինֆեկցիոն հսկողության հիմունքները» մոդուլները:
289.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

290.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել «մարմնի բիոմեխանիկա» հասկացությունը, նկարագրել պատճառները, որոնք բերում են մեջքի մկանների և ողնաշարի վնասվածքների
291.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է «մարմնի բիոմեխանիկա» հասկացությունը, 2) տիրապետում է պատճառներին, որոնք բերում են մեջքի մկանների և ողնաշարի վնասվածքների, 3) ներկայացնում է բուժքրոջ մարմնի բիոմեխանիկան նստած, կանգնած և ծանրություն տեղափոխելիս, 4) իրականացնում է պացենտի տեղափոխումը մահճակալից աթոռին և հակառակը, մահճակալից պատգարակին և հակառակը, 5) իրականացնում է հիվանդի տեղաշարժը անկողնում (կողքի վրա, փորի վրա, Սիմսի դիրք, Ֆաուլերի դիրք, մահճակալի եզրին և դեպի գլխամաս):
292.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել բուժհաստատություններում թունավոր և վնասակար գործոնների ազդեցությունը քույրական անձնակազմի առողջության վրա, իրականացնել դրանց կանխարգելումը
293.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է բոլոր թունավոր և վնասակար գործոնները, որոնք ազդում են քույրական անձնակազմի առողջության վրա (դեղեր, մաքրող և լվացող և ախտահանող միջոցներ. անզգայացնող գազեր, ճառագայթում, վարակ), 2) իրկայացնում է թունավոր և վնասակար գործոններից խուսափելու միջոցները, պահպանում է անվտանգության կանոնները:
294.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պացիենտի ընդունումը բուժկանխարգելիչ հիմնարկություն, ընդունարանի աշխատանքի սկզբունքները, կառուցվածքը և բուժքրոջ գործառույթները, ներկայացնել բուժհաստատության բուժպահպանողական ռեժիմը և տիպերը
295.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է և իրականացնում պացիենտի ընդունումը և գրանցումը, 2) ներկայացնում է ընդունարանի բուժքրոջ աշխատանքի սկզբունքները, ընդունարանի կառուցվածքը, ֆունկցիաները և սանիտարահիգիենիկ ռեժիմը, 3) տիրապետում է քույրական անձնակազմի գործունեությանը ստացիոնարի ընդունարանում (մաշկի, լորձաթաղանթի, մազաձածկ հատվածների զննում, ջերմաչափում, սանմշակում), 4) իրականացնում է պացիենտի տեղափոխումը բաժանմունք (պատգարակ, սայլաթոռ, ձեռքի վրա, ոտքով),

		<p>5) ներկայացնում է բուժհաստատության բուժպահպանողական ռեժիմը,</p> <p>6) ներկայացնում է բուժհաստատությունները և դրանց աշխատանքի սկզբունքները:</p>
296.	Ուսումնառության արդյունք 4	Բացատրել ծանր հիվանդների խնամքը, անձնական հիգիենան, սնուցումը, սպիտակեղենի փոխումը, սահմանել «Անկողնային կոմֆորտ» հասկացողությունը, ներկայացնել պառկելահարուկների սահմանումը և կանխարգելումը
297.	Կատարման չափանիշներ	<p>1) իրականացնում է ծանր հիվանդի անձնական հիգիենան՝ մաշկի, մազերի, գլխի, եղունգների, ձեռքերի, ոտքերի, բերանի խոռոչի, քթի, ականջների, աչքերի, շքի խնամքը, պացիենտի սափումը,</p> <p>2) սահմանում է «Անկողնային կոմֆորտ» հասկացողությունը</p> <p>3) իրականացնում է պացիենտի մասնակի և լրիվ սանիտարական մշակումը, անձնական և անկողնու սպիտակեղենի փոխումը,</p> <p>4) ներկայացնում է պառկելահարուկների սահմանումը, նպաստող գործոնները, զարգացման շրջանները, առաջացման տեղերը,</p> <p>5) իրականացնում է պառկելահարուկների ռիսկի գնահատումն՝ ըստ Նորտոնի սանդղակի,</p> <p>6) իրականացնում է պառկելահարուկների կանխարգելումը և բուժումը,</p> <p>7) իրականացնում է քույրական գործընթացը պառկելահարուկների ժամանակ:</p>
298.	Ուսումնառության արդյունք 5	Կատարում է պացիենտի ֆունկցիոնալ վիճակի գնահատումը՝ պուլս, զարկերակային ճնշում, շնչառության և ջերմության չափումը, ներկայացնել տենդի տեսակները և շրջանները
299.	Կատարման չափանիշներ	<p>1) կատարում է պացիենտի պուլսի և շնչառության հաշվում, զարկերակային ճնշման և ջերմության չափում,</p> <p>2) ներկայացնում է տենդի տեսակները և շրջանները,</p> <p>3) իրականացնում է տենդոլ հիվանդի խնամքն՝ ըստ շրջանների,</p> <p>4) իրականացնում է քույրական գործընթացը տենդի ժամանակ:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ: ԴԵՂԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ:</p> <p>ՀՈԳՆԱՆԵՐ: ԱՐՇԵՍԱԿԱՆ ԽՈՒՂԱԿՆԵՐ»</p>		
300.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-024
301.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ

		բազային գիտելիքներ և ունակություններ, սովորեցնել պարզագույն ֆիզիոթերապևտիկ պրոցեդուրաները, դեղորայքների ներմուծման եղանակները, հոգնաների կատարումը, ստոմով հիվանդների խնամքը, զոնդային պրոցեդուրաները, պացիենտներին նախապատրաստելը լաբորատոր և գործիքային քննություններին, ինչպես նաև քույրական գործընթացի կազմակերպումը տարբեր կլինիկական իրավիճակներում:
302.	Մոդուլի տևողությունը	96 ժամ
303.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում», ՄԲԳ-5-20-006 «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով. ներզատիչ գեղձեր, նյարդային համակարգ և զգայարաններ», ՄԲԳ-5-20-023 «Քույրական գործի հիմունքներ: Մարմնի բիոմեխանիկա: Բուժհաստատությունում թունավոր և վնասակար գործոնների ազդեցությունը բուժանձնակազմի վրա: Հիվանդի խնամքը» մոդուլները:
304.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
305.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել «Պարզագույն ֆիզիոթերապիա» հասկացությունը, տեսակները, ջրաբուժությունը, թթվածնաբուժությունը, սառի և տաքի ազդեցությունը
306.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է «Պարզագույն ֆիզիոթերապիա» հասկացությունը, տեսակները, 2) իրականացնում է տաք և սառը թրջոցների, ջեռակի, սառցեպարկի, կոմպրեսների կիրառումը, 3) իրականացնում է թթվածնաբուժություն թթվածնային կաթետերով, կանյուլայով, դիմակով և բարձով, 4) ներկայացնում է անվտանգության կանոնները թթվածնի հետ աշխատելիս, 5) իրականացնում է ջրաբուժություն տարբեր պացիենտների համար:
307.	Ուսումնառության արդյունք 2	Տիրապետել դեղերի դուրս գրմանը, պահպանմանը և բաժանմանը ստացիոնարում և պոլիկլինիկայում, դեղի օրգանիզմ ներմուծման ուղիներին և եղանակներին
308.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է և իրականացնում դեղերի դուրս գրում, պահպանում և բաժանում, 2) սահմանում է դեղների օրգանիզմ ներմուծման ուղիները և եղանակները՝ արտաքին եղանակ (մաշկ, լորձաթաղանթ, աչք, ականջ, քիթ), Էնթերալ եղանակ-բերանով (per os) լեզվի տակ sublingra) ուղիղ աղիքով

		<p>(per rectum) և պարէնթերալ՝ հարադիքային եղանակ (ներարկումներ),</p> <p>3) իրականացնում է դեղի ներմուծման արտաքին և էնթերալ (ներքին) եղանակները,</p> <p>4) ներկայացնում է դեղի էնթերալ եղանակի առավելությունները և թերությունները:</p>
309.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել դեղերի պարէնթերալ (ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներերակային) ներմուծման եղանակները
310.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ներարկիչների և ասեղների տեսակները,</p> <p>2) իրականացնում է դեղերի նոսրացումը, դեղանյութի հավաքումը ամպուլայից և սրվակից,</p> <p>3) իրականացնում է ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներերակային շիթային և կաթիլային ներարկումներ, պերֆերիկ երակների կաթետերիզացիա և երակից արյան բացթողում,</p> <p>4) պահպանում է ասեպտիկայի կանոնները ներարկումներ կատարելիս,</p> <p>5) ներկայացնում է ներարկումների հետևանքով առաջացող բարդությունները և իրականացնում դրանց կանխարգելումը:</p>
311.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գազահան խողովակի և տարբեր հոգնանների կատարման տեխնիկան, դրանց ցուցումները և հակացուցումները, միզապարկի կաթետերիզացիայի կատարումը, բարդությունների կանխարգելումը
312.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է հոգնայի սահմանումը և տեսակները (մաքրող, յուղային, հիպերտոնիկ, սիֆոնային, դեղորայքային, սնուցող),</p> <p>2) տիրապետում է գազահան խողովակի դրման և հոգնանների կատարման տեխնիկային,</p> <p>3) ներկայացնում է հոգնանների ցուցումները, հակացուցումները հնարավոր բարդությունները և իրականացնում դրանց կանխարգելումը,</p> <p>4) ներկայացնում է միզապարկի կաթետերիզացիայի ցուցումները, ընթացքը, կաթետրների տեսակները,</p> <p>5) իրականացնում է կաթետրի անցկացման գործողությունը տղամարդկանց և կանաց մոտ, պացիենտի խնամքը մշտական կաթետրի ժամանակ, բարդությունների կանխարգելումը:</p>
313.	Ուսումնառության արդյունք 5	Տիրապետել «Ստոմ» հասկացությանը, տեսակներին, իրականացնել խնամք ստոմով պացիենտի նկատմամբ, նախապատրաստել պացիենտներին լաբորատոր և գործիքային հետազոտություններին, ներկայացնել ստամոքսի զոնդավորման պրոցեդուրաները, կանխել բարդությունները

314.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է «Ստոմ» հասկացությանը, տեսակները, ցուցումները,</p> <p>2) իրականացնում է ստոմով հիվանդների խնամք,</p> <p>3) նախապատրաստում է հիվանդին լաբորատոր և գործիքային հետազոտություններ անցկացնելիս,</p> <p>4) իրականացնում է ստամոքսի զոնդավորում՝ լվացման և լաբորատոր հետազոտության նպատակով:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ: ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ: ՀԵՆԴԵՐՍՈՆԻ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ»		
315.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-025
316.	Մոդուլի նպատակը	<p>Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային գիտելիքներ և ունակություններ, սովորեցնել կատարել սիրտ-թոքային վերակենդանացում, մահացող հիվանդի խնամք, ինչպես նաև քույրական գործընթացի իրականացում հինգ փուլերով յուրաքանչյուր խանգարված պահանջի ժամանակ:</p>
317.	Մոդուլի տևողությունը	66 ժամ
318.	Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-001 «Պացիենտի կրթում», ՄԲԳ-5-20-002 «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական տերմինաբանությամբ», ՄԲԳ-5-20-006 «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով. ներզատիչ գեղձեր, նյարդային համակարգ և զգայարաններ», ՄԲԳ-5-20-024 «Քույրական գործի հիմունքներ: Դեղերի ներմուծման ուղիները: Հոգնաներ: Արհեստական խուղակներ» մոդուլները:</p>
319.	Մոդուլի գնահատման կարգը	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
320.	Ուսումնառության արդյունք 1	<p>Ներկայացնել սիրտ-թոքային վերակենդանացումը, կլինիկական մահվան նշանները, տուժածին հայտնաբերման դեպքում գործողությունների հաջողականությունը և առանձնահատկությունները</p>
321.	Կատարման չափանիշներ	<p>1) իրականացնում է առանց կյանքի նշանների տուժածի նկատմամբ գործողությունների կարգը,</p> <p>2) իրականացնում է սիրտ-թոքային վերակենդանացման հմտությունները (1 փրկարար), (2 փրկարար),</p> <p>3) իրականացնում է հասուն տարիքի մարդու, մինչև 8 տարեկան երեխայի և նորածնի սիրտ-թոքային վերակենդանացումը,</p>

		<p>4) իրականացնում է շնչոտիների ազատումը օտար մարմնից՝ տուժածը գիտակից է, անգիտակից է, տուժածը հղի կամ գեր կին է,</p> <p>5) ներկայացնում է կլինիկական մահվան նշանները (պուլսի և շնչառության բացակայություն, բբային ռեֆլեքսի բացակայություն):</p>
322.	Ուսումնառության արդյունք 2	Տիրապետել կորուստ, վիշտ, մահ սահմանմանը, ներկայացնել ամոքիչ բուժման սկզբունքները, իրականացնել մահացող հիվանդի պոլիատիվ խնամքը և դիակի հետ վարվելու կարգը
323.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կորուստ, վիշտ, մահ սահմանումը, կորստի հետ կապված ապրումների հինգ շրջանները,</p> <p>2) ներկայացնում է բուժքրոջ դերը մահվան դատապարտված մարդու պահանջների բավարարման հարցում և իրականացնում պոլիատիվ խնամք,</p> <p>3) տիրապետում է և ցուցաբերում աջակցություն մահացող մարդու ընտանիքին և հարազատներին,</p> <p>4) ներկայացնում է հոսպիսի աշխատանքային սկզբունքները,</p> <p>5) ներկայացնում է դիակի հետ վարվելու կարգը և փասթաթղթերի լրացումը:</p>
324.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել Հենդերսոնի մոդելի կիրառումը, պահանջների դասակարգումը և դրանց բավարարմանն ուղղված միջոցառումները
325.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարդու պահանջների դասակարգումն՝ ըստ Հենդերսոնի,</p> <p>2) տիրապետում է քույրական խնամքի ցուցաբերման հմտություններին,</p> <p>3) ներկայացնում է քույրական գործընթացի հինգ հաջորդական փուլերը, յուրաքանչյուր փուլի կարևորությունը,</p> <p>4) իրականացնում է պացիենտի կարևորագույն պահանջների (նորմալ շնչելու, սնվելու, խմելու, արտաթորման, շարժման, հանվել-հագնվելու, ջերմաստիճանի պահպանման, անձնական հիգիենայի, քնի, անվտանգության, շփման և աշխատանքի) անբավարարության ժամանակ քույրական գործընթացը,</p> <p>5) ներկայացնում է ցավի տեսակները, ցավազգացողությունը, իրականացնում է ցավի ինտենսիվության գնահատում՝ ելնելով գնահատման սանդղակներից,</p> <p>6) իրականացնում է քույրական գործընթացը ցավ ունեցող պացիենտների նկատմամբ:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ. ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԼԵՐԳՈՋՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»

326.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-026
327.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
328.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
329.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը» մոդուլը:
330.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
331.	Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել «Թերապիայի» զարգացման պատմությանը, հիվանդների հետազոտման եղանակներին, շնչառական օրգանների հիվանդություններին, դրանց առաջացման պատճառներին, կլինիկային, ախտորոշման մեթոդներին, բարդություններին, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքներին
332.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է թերապիայի նշանակությունը մանկաբարձական պրակտիկայում, 2) հավաքում է տեղեկատվություն շնչական համակարգի հիվանդություններով պացիենտներից, 3) նախապատրաստում է լաբորատոր և գործիքային քննություններին (սպիրոգրաֆիա, պիկֆյուրոմետրիա, ռենտգեն հետազոտություն, բրոնխոսկոպիա, արյան, մեզի, խորխի հետազոտություն), 4) իրականացնում է քույրական գործընթացը բրոնխիտների, թոքաբորբերի, բրոնխիալ ասթմայի, պլերիտների, տուբերկուլյոզի ժամանակ, 5) կատարում է խնամքի մանիպուլյացիաները, 6) ուսուցանում է պացիենտին և ընտանիքի անդամներին խնամքի և ինքնախնամքի տարրերը, 7) ուսուցանում է դեղորայքի ընդունման առանձնահատկությունները,

		8) իրականացնում է անհետաձգելի մինչբժշկական օգնությունը բրոնխիալ ասթմայի և թոքի արյունահոսության ժամանակ:
333.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել սուր ալերգոզները, դրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
334.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ալերգիկ ռեակցիաների առաջացման մեխանիզմը, 2) իրականացնում է քույրական գործընթացը դեղորայքային հիվանդության, եղնջացանի, Քվինկեի այտուցի, անաֆիլակտիկ շոկի ժամանակ, 3) կատարում է խնամքի մանիպուլյացիաները, 4) իրականացնում է անհետաձգելի մինչբժշկական օգնություն Քվինկեի այտուցի, անաֆիլակտիկ շոկի ժամանակ, 5) ուսուցանում է սննդակարգի առանձնահատկությունները, 6) ուսուցանում է դեղորայքի ընդունման կարգը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ. ՍԻՐՏ-ԱՆՈԹԱՅԻՆ ԵՎ ՈՍԿՐԱՀՈԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»		
335.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-027
336.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
337.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
338.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը» մոդուլը:

339.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
340.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սրտանոթային համակարգի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
341.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է սրտանոթային համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) նախապատրաստում է պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (էլեկտրասրտագրություն, ռենտգեն հետազոտություն, արյան, մեզի հետազոտություններ), 3) իրականացնում է զարկերակային ճնշման չափումը, պուլսի և շնչառության որոշումը, 4) իրականացնում է քույրական գործընթացը ռևմատիզմի, սրտի արատների, զարկերակային հիպերտենզիայի, սրտի իշեմիկ հիվանդության, աթերոսկլերոզի, ստենոկարդիայի, միոկարդի ինֆարկտի, սուր սրտային և անոթային անբավարարության ժամանակ, 5) կատարում է բուժքրոջ անկախ և կախյալ գործողությունները, 6) ուսուցանում է պացիենտին և ընտանիքի անդամներին խնամքի և ինքնախնամքի տարրերը, 7) ուսուցանում է դեղորայքի ընդունման առանձնահատկությունները, 8) ուսուցանում է սննդակարգի առանձնահատկությունները, 9) իրականացնում է անհետաձգելի մինչբժշկական օգնությունը հիպերտոնիկ կրիզի, սրտային ասթմայի, ստենոկարդիայի, միոկարդի ինֆարկտի, ուշագնացության, կոլապսի և շոկի ժամանակ:
342.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ոսկրահոդային համակարգի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
343.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ոսկրահոդային համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) նախապատրաստում է պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (ռենտգեն հետազոտություն, արյան, մեզի հետազոտություններ), 3) իրականացնում է քույրական գործընթացը ռևմատոիդ պոլիարթրիտի, պարբերական հիվանդության

		<p>ժամանակ,</p> <p>4) կատարում է խնամքի մանիպուլյացիաները,</p> <p>5) ուսուցանում է դեղորայքի ընդունման առանձնահատկությունները:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ. ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»</p>		
344.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-028
345.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, իմանալ հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
346.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
347.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը» մոդուլը:
348.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
349.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մարսողական համակարգի հիվանդությունները, նրանց առաջացման պատճառները, կլինիկական, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
350.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարսողական հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը,</p> <p>2) նախապատրաստում է պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (ոենտգեն հետազոտություն, ստամոքսի զոնդավորում, արյան, մեզի, կղանքի, լեղու հետազոտություններ),</p> <p>3) իրականացնում է քույրական գործընթացը գաստրիտների, խոցային հիվանդության, էստերիտների,</p>

		<p>կողիտների, լեղուղիների հիվանդությունների, քրոնիկական հեպատիտների ժամանակ,</p> <p>4) կատարում է բուժքրոջ անկախ և կախյալ գործողությունները,</p> <p>5) ուսուցանում է պացիենտին և ընտանիքի անդամներին խնամքի և ինքնախնամքի տարրերը,</p> <p>6) ուսուցանում է դեղորայքի ընդունման առանձնահատկությունները,</p> <p>7) ուսուցանում է սննդակարգի առանձնահատկությունները,</p> <p>8) իրականացնում է անհետաձգելի մինչբժշկական օգնությունը ստամոքսի արյունահոսության, լեղաքարային խիթի ժամանակ:</p>
351.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել արյան հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
352.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է արյան հիվանդություններով տառապող պացիենտից տեղեկատվության հավաքումը,</p> <p>2) նախապատրաստում է պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին,</p> <p>3) իրականացնում է քույրական գործընթացը սակավարյունության, լեյկոզների ժամանակ,</p> <p>4) կատարում է խնամքի մանիպուլյացիաները,</p> <p>5) ուսուցանում է դեղերի ընդունման կանոնները,</p> <p>6) խնամում է լեյկոզով հիվանդ պացիենտներին:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՐԱՊԻԱ. ՆԵՐՁԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՁԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ, ԲՈՒԺՈՒՄԸ, ԽՆԱՄՔԸ»		
353.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-029
354.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինքնուրույն կողմնորոշվել և ճիշտ կազմակերպել ներքին հիվանդություններով տառապող հղիների և ծննդկանների խնամքը, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ, հմտորեն կատարել բժշկի նշանակումները, հղիության և ծննդաբերության վրա ազդող առավել տարածված ներքին հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման մեթոդները, բարդությունները, կանխարգելման, բուժման և խնամքի սկզբունքները:
355.	Մոդուլի տևողությունը	54 ժամ

356.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը» մոդուլը:
357.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
358.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել արտազատական համակարգի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
359.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է արտազատական համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) նախապատրաստում է պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին, 3) իրականացնում է քույրական գործընթացը գլոմերուլոնեֆրիտների, պիելոնեֆրիտների, երկամաքարային հիվանդության ժամանակ, 4) ուսուցանում է դեղի ընդունման կանոնները, 5) ուսուցանում է սննդակարգի առանձնահատկությունները, 6) կատարում է խնամքի մանիպուլյացիաները, 7) իրականացնում է անհետաձգելի մինչբժշկական օգնությունը երկամային խիթի ժամանակ:
360.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ներզատական համակարգի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, կլինիկան, բարդությունները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները
361.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է էնդոկրին համակարգի հիվանդությունների ժամանակ պացիենտից տեղեկատվության հավաքումը, 2) նախապատրաստում է պացիենտին լաբորատոր և գործիքային քննություններին (գլյուկոմետրիա, մեզում շաքարի որոշում, T₃; T₄; TTT- որոշում), 3) իրականացնում է քույրական գործընթացը հիպոֆիզի հիվանդությունների, դիֆուզ տոքսիկ խափափ, հիպոթիրեոզի, էնդեմիկ խափափ, շաքարային դիաբետի ժամանակ, 4) ուսուցանում է սննդակարգի առանձնահատկությունները,

		<p>5) ուսուցանում է դեղի ընդունման առանձնահատկությունները հղիության ժամանակ,</p> <p>6) կատարում է խնամքի մանիպուլյացիաները,</p> <p>7) իրականացնում է առաջին մինչբժշկական օգնությունը կոմաների ժամանակ,</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՆԵՈՆԱՏԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ, ՎԱՂ ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՇՆՋԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ»</p>		
362.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-030
363.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել երեխաների բուժկանխարգելիչ օգնության, նեոնատալ ծառայության կազմակերպման հիմնական սկզբունքները, պտղի անտենատալ պահպանումը, քույրական գործընթացի իրականացումը, նորածնային բաժանմունքի սանիտարահամաճարակային ռեժիմը, նորածնային շրջանի, վաղ մանկական տարիքի հիվանդությունները, շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները և դրա հիվանդությունները:
364.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
365.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-008 «Մարդու կենսագործունեության փուլերը: Մտորային, նախադպրոցական, վաղ դպրոցական, դեռահասության տարիքային առանձնահատկություններ», ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը» մոդուլները:
366.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
367.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել երեխաների բժշկական օգնության կազմակերպումը
368.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է քույրական գործընթացի փուլերի առանձնահատկությունները մանկաբուժությունում,</p> <p>2) սահմանում է անհաս նորածին հասկացությունը, անհասության պատճառները և նշանները,</p> <p>3) տեսակավորում է առողջական խմբերը, ներկայացնում 0-1 և 1-ից բարձր երեխաների տեղամասում</p>

		<p>վարման և հսկման սկզբունքները,</p> <p>4) կազմակերպում է անհաս նորաձևի տաքացումը, կերակրումը, անթրոպոմետրիան,</p> <p>5) կատարում է անհրաժեշտ սննդի քանակության հաշվարկ:</p>
369.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել և կազմակերպել նորաձևային շրջանի և կրծքի հասակի երեխաների հիվանդությունների ժամանակ հիվանդ երեխաների խնամքը
370.	Կատարման չափանիշներ	<p>1) նկարագրում է նորաձևային ասֆիքսիայի պատճառները, աստիճանները, վերակենդանացման միջոցառումները, իրականացնում ասֆիքսիայով ծնված նորաձևի խնամքը, կատարում նորաձևի շնչուղիների անցանելիության վերականգնում, նորաձևի արհեստական շնչառություն, կազմակերպում ասֆիքսիայի կանխարգելումը,</p> <p>2) նակրագրում է ծննդաբերական վնասվածքների պատճառները, կլինիկական նշանները, բուժման և խնամքի սկզբունքները,</p> <p>3) ցուցադրում է սառցե պարկի կիրառումը, զոնդով կերակրումը, ներերակային, կաթիլային ներարկումը, կազմակերպում ծննդաբերական վնասվածքների կանխարգելումը,</p> <p>4) նկարագրում է նորաձևային հեմոլիտիկ հիվանդության պատճառները, ձևերը, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման, բուժման սկզբունքները, ցուցադրում զոնդով կերակրելը, ներերակային կաթիլային ներարկումը, իրականացնում հիվանդ երեխայի խնամքը, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ,</p> <p>5) ներկայացնում է նորաձևիների և կրծքի հասակի երեխաների մաշկի և պորտի ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն հիվանդությունները, սեպսիս հիվանդությունը, բացատրում հիվանդությունների առաջացման պատճառները, զարգացման մեխանիզմը, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները,</p> <p>6) իրականացնում է քույրական խնամքը, կատարում բուժական լոգանք, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:</p>
371.	Ուսումնառության արդյունք 3	Բացատրել սնուցման սուր և քրոնիկ խանգարումների զարգացման պատճառները, կլինիկական ձևերը, դիետայի կազմակերպման հիմունքները, բուժման սկզբունքները և սխեմաները

372.	Կատարման չափանիշներ	<p>1) հավաքում է երեխաների մասին տեղեկությունները, իրականացնում քույրական գործընթացը, օտալ ռեհիդրատացիան, ներերակային կաթիլային ներարկումը, սննդաբուժումը, անթրոպոմետրիան,</p> <p>2) որոշում է ջրազրկման աստիճանը, ցուցաբերում օգնություն փսխման ժամանակ, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:</p>
373.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ռախիտի, սպազմոֆիլիայի, էքսուդատիվ կատառալ դիաթեզի ժամանակակից բնորոշումը, պատճառները, նպաստող գործոնները, կլինիկական արտահայտությունները, բուժման, խնամքի և կանխարգելման սկզբունքները
374.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ռախիտի բնորոշումը, պատճառները, նպաստող գործոնները, հիմնական կլինիկական արտահայտությունները, սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը, կատարում մերսման և մարմնամարզության կոմպլեքսները, կազմակերպում սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ կանխարգելումը,</p> <p>3) ներկայացնում է սպազմոֆիլիայի պատճառները, կլինիկական արտահայտությունները, կապը ռախիտի հետ, բուժման սկզբունքները,</p> <p>4) իրականացնում քույրական գործընթացը, ցուցադրում անհետաձգելի օգնությունը լարինգոսպազմի և ցնցումների ժամանակ, ինտուբացիայի և տրախեոտոմիայի կատարման մեթոդիական, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ,</p> <p>5) ներկայացնում է էքսուդատիվ կատառալ դիաթեզի առաջացման պատճառները, կլինիկական արտահայտությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները,</p> <p>6) իրականացնում է քույրական գործընթացը, կազմակերպում խանմքը և սնուցումը, կանխարգելումը, դիսպանսեր հսկողությունը:</p>
375.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկական նշանները, բարդությունները, ախտորոշումը, բուժման սկզբունքները
376.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է շնչառական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների էթիոլոգիան, դասակարգումը, կլինիկական նշանները, բարդությունները,

		<p>ախտորոշումը, բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը շնչառական հիվանդությունների ժամանակ,</p> <p>3) իրականացնում է օգնություն հիպերթերմիայի, կեղծ կրուպի, բրոնխիալ ասթմայի նույնիսկ ժամանակ,</p> <p>4) կազմակերպում է մեկուսացման միջոցառումներ սուր շնչառական ինֆեկցիաների ժամանակ,</p> <p>5) կազմակերպում է շնչառական հիվանդությունների բարդությունների կանխարգելումը և դիսպանսեր հսկողությունը,</p> <p>6) կատարում է հակաբիոտիկների հաշվարկում և ներարկում, շնչառության հաճախականության որոշում և գրանցում:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ. ՍՏԱՄՈՔՍԱԴԻՔԱՅԻՆ, ԱՐՅԱՆ ԵՎ ԱՐՅՈՒՆԱՍԵՂԾ, ՄՐՏԱՆՈԹԱՅԻՆ, ՄԻԶԱՅԻՆ, ՆԵՐՉԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ»</p>		
377.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-031
378.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ստամոքսաղիքային, արյան և արյանաստեղծ, սրտանոթային, միզային, ներզատական համակարգերի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, դրանց հիվանդությունների դասակարգումը, պատճառները, կլինիկան, քույրական գործընթացի կազմակերպումը, անհետաձգելի օգնությունը, բուժման սկզբունքները:
379.	Մոդուլի տևողությունը	66 ժամ
380.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-008 «Մարդու կենսագործունեության փուլերը: Մսուրային, նախադպրոցական, վաղ դպրոցական, դեռահասության տարիքային առանձնահատկություններ», ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-030 «Մանկաբուժություն. երեխաների բուժկանխարգելիչ օգնության, նեոնատալ ծառայության կազմակերպման հիմնական սկզբունքները, քույրական գործընթացի իրականացումը, նորածնային շրջանի, վաղ մանկական տարիքի հիվանդությունները, շնչառական համակարգի հիվանդությունները երեխաների մոտ» մոդուլները:
381.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

382.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել ստամոքսաղիքային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների դասակարգումը, պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները
383.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է ստամոքսաղիքային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների դասակարգումը, առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը ստամոքսաղիքային համակարգի հիվանդությունների ժամանակ, անհետաձգելի օգնությունը թունավորումների և փսխման ժամանակ,</p> <p>3) վերցնում է կենսաբանական նյութը լաբորատոր հետազոտության համար, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:</p>
384.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել արյան և արյունաստեղծ համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների զարգացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները
385.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է արյան և արյունաստեղծ համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդությունների զարգացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ,</p> <p>3) իրականացնում է անհետաձգելի օգնությունը քթային արյունահոսությունների, հոդերի արյունազեղումների ժամանակ,</p> <p>4) ներկայացնում է դիսպանսեր հսկողությունը արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ,</p> <p>5) իրականացնում է կանխարգելիչ միջոցառումներ:</p>
386.	Ուսումնառության արդյունք 3	Բացատրել սրտանոթային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, սրտի բնածին արատների և ռևմատիզմի առաջացման պատճառները, կլինիկան ախտորոշումը, բուժման սկզբունքները
387.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է սրտանոթային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, սրտի

		<p>բնական արատների և ումատիզմի առաջացման պատճառները, կլինիկան ախտորոշումը, բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը սրտանոթային համակարգի հիվանդությունների ժամանակ, որոշում պուլսի առանձնահատկությունները, զարկերակային ճնշումը,</p> <p>3) կատարում է բիցիլինի ներարկումը,</p> <p>4) իրականացնում է անհետաձգելի օգնությունը ուշագնացության, կոլապսի ժամանակ,</p> <p>5) իրականացնում է կանխարգելիչ միջոցառումները:</p>
388.	Ուսումնառության արդյունք 4	<p>Բացատրել միզային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, գլոմերուլոնեֆրիտի և պիելոնեֆրիտի առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները</p>
389.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է միզային համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, գլոմերուլոնեֆրիտի և պիելոնեֆրիտի առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը միզային համակարգի հիվանդությունների ժամանակ,</p> <p>3) իրականացնում է մեզի հավաքումը հետազոտությունների համար, կազմում դիետաներ,</p> <p>4) իրականացնում է հիվանդների դիսպանսեր հսկողությունը և կանխարգելիչ միջոցառումները:</p>
390.	Ուսումնառության արդյունք 5	<p>Բացատրել ներզատական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, շաքարային դիաբետի առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, բուժման և կանխարգելման մեթոդները</p>
391.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է ներզատական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, շաքարային դիաբետի առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, բուժման և կանխարգելման մեթոդները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը շաքարային դիաբետի ժամանակ,</p> <p>3) իրականացնում է արյան և մեզի մեջ շաքարի քանակի որոշումը,</p> <p>4) կատարում է ինսուլինի ենթամաշկային ներարկում, կազմում համապատասխան դիետա, ցուցաբերում</p>

		անհետաձգելի օգնություն կոմաների ժամանակ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ. ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՈՏ, ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ, ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՂԸ, ՕԴԱԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՈՏ»		
392.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-032
393.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ինֆեկցիոն, օդակաթիլային հիվանդությունների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմնական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները, քույրական գործընթացը, կանխարգելիչ պատվաստումները և խնամքի կազմակերպումը երեխաների մոտ:
394.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
395.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-008 «Մարդու կենսագործունեության փուլերը: Մսուրային, նախադպրոցական, վաղ դպրոցական, դեռահասության տարիքային առանձնահատկություններ», ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-031 «Մանկաբուժություն. ստամոքսաղիքային, արյան և արյունաստեղծ, սրտանոթային, միզային, ներզատական համակարգերի հիվանդությունները երեխաների մոտ» մոդուլները:
396.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
397.	Ուսումնառության արդյունք 1	Կազմակերպել երեխաների խնամքը ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ
398.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կազմակերպում է վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, ներկայացնում ակտիվ իմունիզացիայի, պատվաստանյութերի հետ վարվելու հիմնական սկզբունքները, սառցային շղթան, հետպատվաստումային բարդությունները, 2) կատարում է կանխարգելիչ պատվաստումները, լրացնում շտապ հաղորդման քարտ, ցուցաբերում օգնություն հետպատվաստումային բարդությունների ժամանակ, 3) կազմակերպում է հակահամաճարակային միջոցառումները ինֆեկցիայի օջախում, 4) կատարում է ընթացիկ և եզրափակիչ ախտահանում:

399.	Ուսումնառության արդյունք 2	Բացատրել տուբերկուլոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմնական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները
400.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է տուբերկուլոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, հիմնական կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման մեթոդները, 2) իրականացնում է քույրական գործընթացը տուբերկուլոզի ժամանակ, 3) կատարում է և գանհատում Մանթոուի փորձը, 4) կատարում է ԲՅԺ պատվաստում, 5) հավաքում է խորխը և վարակազերծում պարագաները, 6) նախապատրաստում է երեխային ռենտգեն հետազոտության և բրոնխոսկոպիայի, 7) իրականացնում է կանխարգելիչ միջոցառումները և տուբերկուլոզով հիվանդացության իջեցմանն ուղղված միջոցառումները:
401.	Ուսումնառության արդյունք 3	Բացատրել դիֆթերիայի, կապույտ հազի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները
402.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է դիֆթերիայի, կապույտ հազի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, 2) իրականացնում է քույրական գործընթացը, կարանտինային միջոցառումները, կենսաբանական նյութի վերցնումը հետազոտությունների համար, հակադիֆթերիտիկ շիճուկի ներարկումը, հնգավալենտ պատվաստանյութի իրականացումը, 3) ցուցաբերում է բուժօգնություն կրուպի ժամանակ, կազմակերպում կանխարգելիչ միջոցառումներ:
403.	Ուսումնառության արդյունք 4	Բացատրել մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները
404.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, ախտորոշման և բուժման սկզբունքները, 2) իրականացնում քույրական գործընթացը մենինգոկոկային վարակի, ջրծաղիկի, համաճարակային պարոտիտի ժամանակ, ստուգում մենինգիալ ախտանիշները, վերցնում կենսաբանական նյութը

		<p>հետազոտությունների համար, կազմակերպում կարանտինային միջոցառումներ,</p> <p>3) կատարում է ԿԿԽ պատվաստում և կազմակերպում հակահամաճարակային միջոցառումներ ինֆեկցիայի օջախում, կատարում ընթացիկ և եզրափակիչ վարակազերծում,</p> <p>4) նախապատրաստում է լյումբալ պունկցիայի համար անհարժեշտ պարագաները և կազմակերպում հիվանդի խնամքը պունկցիայից հետո:</p>
405.	Ուսումնառության արդյունք 5	Բացատրել քուբեշի, կարմրուկի, կարմրախտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, բուժման սկզբունքները
406.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է քուբեշի, կարմրուկի, կարմրախտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը քուբեշի, կարմրուկի, կարմրախտի ժամանակ, կատարում ԿԿԽ պատվաստում, ներարկում հակակարմրուկային գամա գլոբուլին,</p> <p>3) կազմակերպում է և կատարում կարանտինային միջոցառումներ, ընթացիկ վարակազերծում ինֆեկցիայի օջախում:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ. ԱՂԻՔԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԸ, ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ»</p>		
407.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-033
408.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել սուր դիարեային հիվանդությունների, աղիքային վարակների, վիրուսային հեպատիտների, պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիական, ախտորոշումը, բուժման սկզբունքները, քույրական գործընթացը, կարանտինային և կանխարգելիչ միջոցառումները երեխաների մոտ:
409.	Մոդուլի տևողությունը	66 ժամ
410.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-008 «Մարդու կենսագործունեության փուլերը: Մսուրային, նախադպրոցական, վաղ դպրոցական, դեռահասության տարիքային առանձնահատկություններ», ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-032

		«Մանկաբուժություն. ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելումը երեխաների մոտ, կանխարգելիչ պատվաստումները, տուբերկուլոզը, օդակաթիլային հիվանդությունները երեխաների մոտ» մոդուլները:
411.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
412.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել սուր դիարեային հիվանդությունները, աղիքային վարակների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները
413.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է աղիքային վարակների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բուժման սկզբունքները, վարակման կանոննորը և տալիս գաղափար դիսբակտերիոզի մասին, 2) իրականացնում է քույրական գործընթացը սուր դիարեային հիվանդությունների, աղիքային վարակների ժամանակ, օռալ ռեհիդրատացիան, ստամոքսի լվացումը և մաքրող հոգնան, 3) հավաքում է կենսաբանական նյութը հետազոտությունների նպատակով, 4) իրականացնում է դիսպանսեր հսկողություն, կազմակերպում կարանտինային և կանխարգելիչ միջոցառումներ:
414.	Ուսումնառության արդյունք 2	Բացատրել վիրուսային հեպատիտների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները
415.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է վիրուսային հեպատիտների էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները, 2) իրականացնում է քույրական գործընթացը վիրուսային հեպատիտների ժամանակ, գնահատում կղանքի և մեզի բնույթը, 3) վերցնում է արյուն բիոքիմիական հետազոտության նպատակով, 4) կատարում է պատվաստում և կրկնապատվաստում հեպատիտ Բ-ի դեմ, 3) կազմակերպում է կարանտինային և կանխարգելիչ միջոցառումները, դիսպանսեր հսկողությունը:
416.	Ուսումնառության արդյունք 3	Բացատրել պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման սկզբունքները
417.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է պոլիոմիելիտի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը և բուժման

		<p>սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը պոլիոմիելիտի ժամանակ, կատարում պատվաստում և կրկանապատվաստում պոլիոմիելիտի դեմ, ստուգում ջլային ռեֆլեքսները,</p> <p>3) կազմակերպում է կարանտինային և կանխարգելիչ միջոցառումներ:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		
418.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-034
419.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ժամանակակից վիրաբուժության և վիրաբուժական ծառայության կազմակերպման սկզբունքները, բուժքրոջ վիրաբուժական գործունեությունը, վիրաբուժական վարակ հասկացությունը, վարակի կանխարգելման եղանակները, տեսակները, ապանեխումը և հականեխումը, արյունահոսությունը, դրա պատճառները, տեսակները, արյունահոսության նախնական և վերջնական դադարեցումը, ինֆուզիա, տրանսֆուզիա, ցավազրկումը, դրա տեսակները, բարդությունները, շուրջվիրահատական գործընթացը՝ նախա և հետվիրահատական շրջանները:
420.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
421.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը» մոդուլները:
422.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
423.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել վիրաբուժության զարգացման և կայացման էտապները, ներհիվանդանոցային վիրաբուժական վարակի կանխարգելումը
424.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է վիրաբուժության զարգացման և կայացման էտապները, ժամանակակից վիրաբուժության և վիրաբուժական ծառայության կազմակերպման սկզբունքները, բուժքրոջ վիրաբուժական գործունեությունը,</p> <p>2) բացատրում է վարակ և վիրաբուժական վարակ հասկացությունները, վարակի կանխարգելման եղանակները, ապանեխումը, հականեխումը,</p>

		3) իրականացնում է օդակաթիլային, կոնտակտային, իմպլանտացիոն վարակի կանխարգելումը:
425.	Ուսումնառության արդյունք 2	Սահմանել արյունահոսությունը, առաջացման պատճառները, տեսակները, ընդհանուր և տեսային ախտանշանները, նախնական և վերջնական դադարեցման եղանակները, հնարավոր բարդությունները
426.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բնորոշում է արյունահոսությունը, առաջացման պատճառները, նկարագրում արյունահոսության տեսակները, ընդհանուր և տեղային ախտանշանները, արյան կորստի չափանիշները, 2) իրականացնում է արյունահոսության նախնական դադարեցումը, տարբեր եղանակներով, 3) ներկայացնում է արյունահոսության վերջնական դադարեցման եղանակները, 4) ներկայացնում է արյունահոսության հնարավոր բարդությունները, 5) իրականացնում է քույրական գործընթացը արյունահոսությունների ժամանակ:
427.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ինֆուզիայի և տրանսֆուզիայի դերը, դոնոր հասկացությունը, արյան խմբերը, ռեզուս գործոնը, դրանց որոշումը, համատեղելիության փորձերը արյան փոխներարկման եղանակները, ձևերը, ինֆուզիայի և տրանսֆուզիայի հնարավոր բարդությունները, կանխարգելումը, արյան փոխներարկման ցուցումները և հակացուցումները
428.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է դոնոր և դոնորություն հասկացությունները, արյան հետ աշխատելու առանձնահատկությունները, 2) ներկայացնում է ինֆուզիայի և տրանսֆուզիայի դերը, 3) կատարում է արյան խմբերի և ռեզուս գործոնի որոշումը, համատեղելիության փորձերը, 4) բացատրում է արյան փոխներարկման եղանակները և ձևերը, տիրապետում արյան փոխներարկման տեխնիկային, ցուցադրում արյան պատրաստուկները և արյան փոխարինողները, որոշում արյան պիտանելիությունը, 5) ներկայացնում է արյան փոխներարկման ցուցումները և հակացուցումները, ինֆուզիայի և տրանսֆուզիայի հնարավոր բարդությունները, դրանց կանխարգելումը, 6) դեսմուրգիա, վիրակապերի հիմնական տեսակները, նպատակները, սկզբունքները:
429.	Ուսումնառության արդյունք 4	Բացատրել ցավը, ցավազկումը, ցավազրկման տեսակները, ընդհանուր և տեղային ցավազրկման տեսակները, նարկոզի փուլերը, բարդությունները և կանխարգելումը

430.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) սահմանում է ցավը, ցավազրկումը, նկարագրում ցավազրկման տեսակները, 2) ներկայացնում է նարկոզի համար կիրառվող հեղուկ և գազային նարկոտիկ նյութերը, ցավազրկման բարդությունները և դրանց կանխարգելումը, 3) ներկայացնում է նարկոզի փուլերը, 4) պատրաստում է անեսթեզիստի սեղանը, անհրաժեշտ գործիքներ և նյութեր տեղային ցավազրկման համար, 5) իրականացնում է քույրական գործընթացը ընդհանուր և տեղային ցավազրկումով հիվանդի մոտ:
431.	Ուսումնառության արդյունք 5	<p>Բացատրել վիրաբուժական վիրահատությունների տեսակները, նկարագրել նախավիրահատական շրջանը, փուլերը, պացիենտի նախապատրաստումը անհետաձգելի, շտապ, պլանային վիրահատությունների, վիրահատության էտապները, վիրաբուժական գործիքները, հետվիրահատական շրջանը, հնարավոր բարդությունները և կանխումը</p>
432.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է վիրահատության տեսակները, սահմանում նախավիրահատական շրջանը, դրա փուլերը, 2) նախապատրաստում է պացիենտին անհետաձգելի, շտապ, պլանային վիրահատությունների, 3) կատարում է հիմնական բուժական պրոցեդուրաները, ներկայացնում վիրահատության էտապները, ցուցադրում վիրաբուժական գործիքները, 4) սահմանում է հետվիրահատական շրջանը, այդ շրջանում կատարում պացիենտի խնամքի հետ կապված հիմնական գործողությունները, նկարագրում առաջացող հնարավոր բարդությունները և դրանց կանխարգելումը:
433.	Ուսումնառության արդյունք 6	<p>Բացատրել դեսմոլոգիան՝ որպես վիրակապությունների մասին գիտություն, վիրակապերի հիմնական տեսակները, նպատակները, սկզբունքները</p>
434.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) սահմանում է դեսմոլոգիան, դրա տեսակները, նպատակները, սկզբունքները, 2) կատարում է տարբեր մարմնամասերի վիրակապություններ, 3) տիրապետում է փափուկ և կոշտ վիրակապությունների հիմնական տեսակների կապերի դրման կանոններին, 4) կատարում է գիպսի որակի ստուգման փորձերը, պատրաստում գիպսյա բինտեր, ժամանակին ճանաչում

		և կանխում սխալ վիրակապության հետևանքով առաջացած բարդությունները, 5) իրականացնում է վիրակապված հիվանդների խնամքը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ»		
435.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-035
436.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել վիրաբուժական վնասվածքների պատճառները, կլինիկական դրսևորումները, ախտորոշման եղանակները, բարդությունները, բուժման և խնամքի սկզբունքները, կանխարգելումը, նախավիրահատական և հետվիրահատական շրջանների ընթացքը, խնամքի առանձնահատկությունները, առաջին օգնությունը վիրաբուժական անհետաձգելի իրավիճակներում, քույրական միջամտությունների տեխնիկան, վիրաբուժական վարակի դասակարգումը, տեղային և ընդհանուր ախտանշանները, բուժման եղանակները, մեռուկացումը, դրա տեսակները, ուռուցքաբանական օգնության կազմակերպումը:
437.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
438.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-034 «Վիրաբուժության հիմունքներ» մոդուլները:
439.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
440.	Ուսումնառության արդյունք 1	Բնութագրել վնասվածքը, դրանց դասակարգումը, նկարագրել վնասվածքային շոկը, հակաշոկային միջոցառումները, նկարագրել բաց և փակ վնասվածքները, այրվածքը, այրվածքային հիվանդությունը, էլեկտրահարությունը, ցրտահարությունը
441.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է վնասվածքը, դրա դասակարգումը, վնասվածքային շոկը, հակաշոկային միջոցառումները, 2) գնահատում է վնասվածք ունեցող պացիենտի վիճակը, վնասվածքի բնույթն ու տեղակայումը, 3) ներկայացնում է փակ և բաց վնասվածքները, ցուցաբերում առաջին բուժօգնությունը, կատարում տրանսպորտային անշարժացում,

		<p>4) ներկայացնում է այրվածքը, այրվածքային հիվանդությունը, էլեկտրահարությունը, ցրտահարությունը, ցուցաբերում առաջին բուժօգնություն, որոշում այրվածքի խորության աստիճանը և մակերեսը,</p> <p>5) նկարագրում է վնասվածքներով պացիենտների բուժման հիմնական սկզբունքները,</p> <p>6) իրականացնում է քույրական գործընթացը տարբեր վնասվածքներով պացիենտների մոտ:</p>
442.	Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել վիրաբուժական վարակը, դասակարգումը, ներթափանցման ուղիները, տեղային և ընդհանուր ախտանշանները, բուժման և կանխարգելման սկզբունքները
443.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է վիրաբուժման վարակը, դասակարգումը, ներթափանցման ուղիները, տեղային և ընդհանուր ախտանշանները,</p> <p>2) ներկայացնում է տեղային վիրաբուժական վարակը, դրա տեսակները, բուժման եղանակները,</p> <p>3) նկարագրում է անաէրոբ վիրաբուժական վարակների դրսևորման առանձնահատկությունները,</p> <p>4) նկարագրում է վերքային անաէրոբ վարակների առկայության դեպքում ԲՆԻ-ի և արտաքին միջավայրի ախտահանման սկզբունքները և առանձնահատկությունները,</p> <p>5) նկարագրում է կլոստրիդիումային և ոչ կլոստրիդիումային անաէրոբ վարակների դեպքում օգտագործված ԲՆԻ-ի ախտահանման և մանրէազերծման առանձնահատկությունները,</p> <p>6) նկարագրում է կլոստրիդիումային և ոչ կլոստրիդիումային անաէրոբ վարակների դեպքում հիվանդի խնամքի և մեկուսացման պայմանները</p> <p>7) ներկայացնում է ընդհանուր և անաէրոբ վիրաբուժական վարակները, դրանց հիմնական կլինիկական ախտանշանները, կատարում է փայտացման և գազային գանգրենայի, յուրահատուկ և ոչ յուրահատուկ վարակների կանխարգելում, ներկայացնում դրանց բուժման եղանակները, կատարում վիրաբուժական վարակով հիվանդների գործիքային վիրակապություն:</p>
444.	Ուսումնառության արդյունք 3	Բնութագրել մեռուկացումը, առաջացման պատճառները, տեսակները, երակների վարիկոզ լայնացումը, էնդարտերիտը, խոցը, խուլակը
445.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է մեռուկացումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական նշանները, բուժման սկզբունքները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը մեռուկացման տարբեր ախտանիշներ ունեցող հիվանդների</p>

		<p>մոտ,</p> <p>3) իրականացնում է պառկելախոցերի կանխարգելումը, վիրաբուժական մշակումը, վիրակապությունը, ծայրատի վիրակապությունը,</p> <p>4) տիրապետում է էլաստիկ բինտով կապ դնելու տեխնիկային, իրականացնում տրոֆիկ խոցեր ունեցող հիվանդների խնամքը և վերքերի մշակումը,</p> <p>5) բացատրում է երակների վարիկոզ լայնացում և էնդարտերիտ հիվանդությունները, առաջացման պատճառները, կլինիկական նշանները, կանխարգելման և բուժման սկզբունքները,</p> <p>6) իրականացնում է քույրական գործընթացը անոթային հիվանդություններով պացիենտի մոտ,</p> <p>7) ներկայացնում է խոցը և խուղակը, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկական նշանները, կանխարգելումը և բուժման սկզբունքները,</p> <p>8) իրականացնում է քույրական գործընթացը խոցի և խուղակի ժամանակ:</p>
446.	Ուսումնառության արդյունք 4	Բնութագրել ուռուցք և ուռուցքաբանություն հասկացությունները, առաջացման տեսությունները, նախաքաղցկեղային վիճակներ հասկացությունը, նորագոյացությունների դասակարգումը, բուժման եղանակները
447.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ուռուցք և ուռուցքաբանություն հասկացությունները, բացատրում առաջացման տեսությունները, նկարագրում նախաքաղցկեղային վիճակները, դասակարգում նորագոյացությունները,</p> <p>2) բացատրում է չարորակ ուռուցքների զարգացման փուլերը, կատարում չարորակ և բարորակ ուռուցքների տարբերակում՝ ըստ կլինիկական նշանների, ներկայացնում բուժման եղանակները,</p> <p>3) իրականացնում է քույրական գործընթացը նորագոյացություններով պացիենտների մոտ, տիրապետում՝ դետեթոլոգիայի առանձնահատկություններին օնկոլոգիայում:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱՎՈՐ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ»		
448.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-036
449.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել սուր որովայն համախտանիշ հասկացողությունը, սուր որովայն առաջացնող հիմնական հիվանդությունները, միզասեռական համակարգի հիմնական վիրաբուժական հիվանդությունները, ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդությունները,

		վահանաձև գեղձի հիվանդությունները, առավել հաճախ հանդիպող բնածին արատները և մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները:
450.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
451.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-035 «Ընդհանուր վիրաբուժություն» մոդուլները:
452.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
453.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել սուր որովայն համախտանիշ հասկացությունը, սուր որովայն առաջացնող հիմնական հիվանդությունները և վնասվածքները
454.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է սուր որովայն համախտանիշ առաջացնող որովայնի վիրաբուժական հիվանդությունները, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական նշանները, ախտորոշման և բուժման հիմնական սկզբունքները, 2) իրականացնում է առաջին բուժօգնությունը դրանց ժամանակ, 3) իրականացնում է քույրական գործընթացը սուր որովայն համախտանիշ առաջացնող վիրաբուժական հիվանդությունների ժամանակ:
455.	Ուսումնառության արդյունք 2	Բացատրել ուրոլոգիա հասկացությունը, նկարագրել միզասեռական համակարգի հիմնական վիրաբուժական հիվանդությունները և վնասվածքները
456.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է ուրոլոգիա հասկացությունը, միզասեռական համակարգի հիմնական վիրաբուժական հիվանդությունները և վնասվածքները, հիմնական ախտանշանները, իրականացնում առաջին բուժօգնությունը դրանց ժամանակ, 2) ներկայացնում է ախտորոշման և բուժման հիմնական սկզբունքերը միզասեռական համակարգի վիրաբուժական հիվանդությունների և վնասվածքների դեպքում, 3) ներկայացնում է հետվիրահատական շրջանի հանրավոր բարդությունները, նկարագրում սուր միզակապության պատճառները, նշանները, կատարում առաջին բուժօգնություն, իրականացնում

		միզապարկի կաթետերացում, քույրական գործընթացը հետվիրահատական շրջանում: 4) ներկայացնում է միզային կաթետերացման հետևանքով առաջացող վարակային բարդությունները (տեղային և ընդհանուր), 5) ներկայացնում է միզային կաթետերացման հետևանքով վարակային բարդությունների կանխարգելման սկզբունքները:
457.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդությունները
458.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ուղիղ աղու հիմնական վիրաբուժական հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, ախտանիշները, բուժման սկզբունքները, 2) իրականացնում է քույրական գործընթացը նախա և հետվիրահատական շրջաններում:
459.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել վահանաձև գեղձի հիվանդությունները
460.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է խպիպը և թիրեոտոքսիկոզը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական նշանները, խպիպի աստիճանները, կանխարգելումը, բուժման հիմնական սկզբունքները, 2) իրականացնում է քույրական գործընթացը նախա և հետվիրահատական շրջաններում խպիպի և թիրեոտոքսիկոզի ժամանակ:
461.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել առավել հաճախ հանդիպող բնածին արատները և մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները
462.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է առավել հաճախ հանդիպող բնածին արատները, 2) ներկայացնում է մանկական վիրաբուժական ախտաբանության հիմնական տեսակները, 3) ներկայացնում է վիրաբուժական միջամտություն պահանջող մանկական հիվանդությունների և բնածին արատների հիմնական նշանները, 4) ներկայացնում է և կատարում երեխայի նախապատրաստումը վիրահատության, 5) ներկայացնում է խնամքի առանձնահատկությունները հետվիրահատական շրջանում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ: ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԲԺՇԿԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԵՎ ԴԵՈՆՏՈԼՈԳԻԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆՈՒՄ: ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԱԴՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ		

**ԱՆԱՏՈՄՈՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ: ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀՂԻՈՒԹՅՈՒՆ, ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ»**

463.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-037
464.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել վերարտադրողական պրոցեսի փիլիսոփայությունը, բժշկական էթիկան և դեոնտոլոգիան, մասնագիտական հաղորդակցման առանձնահատկությունները, ծննդօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների կառուցվածքը, բժշկական օգնության դասակարգումն՝ ըստ 3 մակարդակի, ներհիվանդանոցային վարակի կանխարգելումը սանիտարահամաճարակային ռեժիմը, մանկաբարձի դերը մոր և մանկան պերինատալ հիվանդացության և մահացության իջեցման գործում, դիսպանսեր հսկողությունը, խորհրդատվությունը, նախաբժշկական օգնության հմտությունները, վերարտադրողական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, բեղմնավորման ֆիզիոլոգիան, ֆիզիոլոգիական հղիությունը, հղիության վաղ և ուշ (մինչև 22 շաբաթական և 22 շաբաթականից բարձր) շրջանների ախտորոշումը:
465.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
466.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը» մոդուլները:
467.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
468.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մանկածնման ֆունկցիայի փիլիսոփայությունը, էթիկան և դեոնտոլոգիան մանկաբարձության մեջ և մասնագիտական հաղորդակցման առանձնահատկությունները
469.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մանկածնման պրոցեսի փիլիսոփայությունը, էթիկայի և դեոնտոլոգիայի հիմունքները,</p> <p>2) տիրապետում է հաղորդակցության ունակություններին հղիների, ծննդաբերների, ծննդկանների և նրանց հարազատների հետ շփման գործում,</p> <p>3) տիրապետում է հաղորդակցության ունակություններին ծննդօգնության ստորաբաժանումներում աշխատող անձանց հետ շփման գործում:</p>

470.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ծննդօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների կառուցվածքը, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությունը և սանիտարահամաճարակային ռեժիմը, նկարագրել մանկաբարձի դերը մայրության անվտանգության ապահովման մեջ, տիրապետել մոր և մանկան պերինատալ հիվանդության և մահացության իջեցման գործողություններին, դիսպանսեր հսկողությանը, խորհրդատվությանը, լուսավորչական և առողջապահական կրթական աշխատանքներին, նախաբժշկական օգնության հմտություններին, մասնագիտական ձևաթղթերի և ուղեգրերի լրացմանը
471.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ծննդօգնության կազմակերպությունները, դնրանց կառուցվածքն՝ ըստ բուժօգնության մակարդակի, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությանը, 2) տիրապետում է ծննդօգնության կազմակերպությունների սանիտարահամաճարակային ռեժիմին, 3) տիրապետում է խնամքի առարկաներին, բժշկական նշանակության իրերին և ըստ դրանց վտանգավորության աստիճանի վարակազերծման և մանրէազերծման եղանակներին, 4) տիրապետում է սարքավորումների սանիտարական մշակմանը, 5) տիրապետում է ծննդատան տարբեր բաժանմունքների ընթացիք և եզրափակիչ մաքրմանը, 6) տիրապետում է հականեխիչ նյութերի պատրաստմանը և կիրառմանը, 7) տիրապետում է բժշկական թափոնների դասակարգմանը, պահպանմանը և տեղափոխմանը, 8) տիրապետում է ներհիվանդանոցային վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, 9) տիրապետում է ձեռքերի մշակման եղանակներին, 10) պահպանում է բուժանձնակազմի և պացիենտի անվտանգության կանոնները 11) տիրապետում է հղիների, ծննդկանների, գինեկոլոգիական հիվանդների պատրոնաժին (ակտիվ և պասիվ), 12) կատարում է լուսավորչական և քարոզչական կրթական աշխատանքներ, 13) տիրապետում է ռիսկի գործոնների հայտնաբերման և հնարավոր բարդությունների կանխարգելման աշխատանքներին, 14) կատարում է խորհրդատվություն, հասակաչափում, կշռաչափում, զարկերակային ճնշման չափում երկու ձեռքից, անոթազարկի հաշվում,

		<p>15) ֆանտոմի վրա կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, հայելիներով դիտում, երկձեռք հետազոտություն,</p> <p>16) վերցնում է քսուք հետազոտության համար (U; V; C կետերից) և քսուք՝ ըստ Պապնիկովաուի (ՊԱՊ քսուք),</p> <p>17) տիրապետում է նախաբժշկական օգնության հմտություններին,</p> <p>18) լրացնում է մասնագիտական ձևաթերթերը, ուղեգրերը, գրառումները բժշկական փաստաթղթերում:</p>
472.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել վերարտադրողական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, կնոջ կյանքի տարբեր շրջանները և նրանց հիգիենան, սահմանել դաշտանային ֆունկցիա, դաշտանային պարբերաշրջան, դաշտան հասկացությունները, նկարագրել կնոջ կոնքի առանձնահատկությունները, հարթակները
473.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է վերարտադրողական համակարգի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>2) ներկայացնում է կնոջ կյանքի տարբեր շրջանները, սեռական հասունացման փուլերը և գնահատում է դեռահաս աղջկա սեռական հասունացումը՝ ըստ Ax, P, Ma, Me բանաձևի,</p> <p>3) ներկայացնում է դաշտանային պարբերաշրջանը, դրա փուլերը, կարգավորման մեխանիզմները,</p> <p>4) ներկայացնում է կնոջ կոնքի առանձնահատկությունները և ֆանտոմի վրա կատարում է կոնքաչափում (պելվիոմետրիա),</p> <p>5) տիրապետում է կնոջ կյանքի տարբեր շրջաններում և ֆիզիոլոգիական փուլերում անձնական հիգիենայի վերաբերյալ խորհրդատվությանը:</p>
474.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել բեղմնավորման ֆիզիոլոգիան, պտղի զարգացման ճգնաժամային փուլերը, հասուն և անհաս պտղի նշանները, պտղի գլխի առանձնահատկություններն ու դրա չափերը
475.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է բեղմնավորման ֆիզիոլոգիան, սաղմնաթաղանթների առաջացումը, պտղի զարգացման ճգնաժամային փուլերը,</p> <p>2) ներկայացնում է հասուն և անհաս պտղի նշանները,</p> <p>3) ներկայացնում է պտղի գլխի առանձնահատկությունները և տիկնիկի վրա ցուցադրում է գանգի ոսկրերը</p>

		և գլխի չափերը:
476.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել հղիության ընթացքում կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, հղիության վաղ շրջանի (I կես՝ մինչև 22 շաբաթ) ախտորոշումը, այս շրջանին բնորոշ մանկաբարձական բնորոշումները, տիրապետել տերմիններին և հմտություններին, հղի կնոջ սննդի և հիգիենայի վերաբերյալ խորհրդատվությանը
477.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հղիության ընթացքում կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, 2) ներկայացնում է հղիության վաղ շրջանի նշանները, 3) տիրապետում է արտաքին սեռական օրգանների զննմանը, 4) ֆանտոմի վրա կատարում է որովայնի շրջագծի և արգանդի հատակի բարձրության որոշում, 5) ֆանտոմի վրա կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, երկծեռք զննում, 6) կիրարկում է իմունոլոգիական թեստը, 7) կատարում է հղի կնոջ սննդի և հիգիենայի վերաբերյալ խորհրդատվություն, 8) կատարում է հղիության զարգացման գնահատում դինամիկայում՝ գրավիդոգրամայի, քաշի ավելացման կորագծի միջոցով:
478.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել հղիության ուշ (II կես՝ 22 շաբաթականից հետո) շրջանում ի հայտ եկող նշանները, հղիության ուշ շրջանի ախտորոշումը, տիրապետել հիմնական մանկաբարձական բնորոշումներին, տերմիններին և հմտություններին
479.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հղիության ուշ շրջանի նշանները և հիմնական մանկաբարձական բնորոշումները, տերմինները (դրություն, դիրք, տեսակ, առաջադրություն), 2) որոշում է պտղի խաղը, 3) ֆանտոմի վրա կատարում է մարմնամասերի շոշափում (ըստ Լեոպոլդ-Լազարևիչի), 4) լսում է պտղի սրտի զարկերը, 5) որոշում է հղիության և ծննդաբերության ենթադրյալ ժամկետը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ:		

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑԱՎԱԶՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ: ՆՈՐՄԱԼ ՀԵՏԾՆԵԴՅԱՆ ՇՐՋԱՆ»

480.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-038
481.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ծննդաբերության առաջացման պատճառները, ծննդաբերության նախանշանները, արտամղող ուժերը, ֆիզիոլոգիական ծննդաբերության շրջանները, դրանց ընթացքը, նորածնի առաջին հարդարանքը, ծննդաբերության առաջին շրջանում ծննդաբերի տարբեր դիրքերը, ալտերնատիվ (այլընտրանքային) ցավազրկումը, գաղափար «պարտնյորական» ծննդաբերությունների մասին, ծննդաբերության բիոմեխանիզմը ծոծրակային առաջադրության ժամանակ, ծննդաբերության ցավազրկման ժամանակակից, այդ թվում ոչ դեղորայքային ցավազրկման մոտեցումները, հղիների հուզահոգեբանական նախապատրաստմանը ծննդաբերության, նորմալ (ֆիզիոլոգիական) հետծննդյան շրջանի ընթացքը, մանկաբարձուհու պարտականությունները, խորհրդատվությունը:
482.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
483.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համ արուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-037 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Վերարտադրողական պրոցեսի փիլիսոփայությունը, բժշկական էթիկան և դեոնտոլոգիան մանկաբարձությունում: Ծննդոգնություն իրականացնող կազմակերպությունների կառուցվածքը: վերարտադրողական համակարգի անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Բեղմնավորման ֆիզիոլոգիան: Ֆիզիոլոգիական հղիություն, հղիության ախտորոշում» մոդուլները:
484.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
485.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ծննդաբերության առաջացման պատճառները, ծննդաբերության նախանշանները, ծննդաբերության արտամղող ուժերը, ծննդաբերության առաջին շրջանը, ընթացքը և վարումը
486.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ծննդաբերության առաջացման պատճառները, նախանշանները և արտամղող ուժերը, 2) ներկայացնում է ծննդաբերության առաջին (արգանդի պարանոցի բացման) շրջանը, 3) ներկայացնում և որոշում է արգանդի պարանոցի հասունության աստիճանն՝ ըստ Բիշոպի սանդղակի,

		<p>4) հետևում է ծննդաբերի ընդհանուր վիճակին, ծննդաբերական կձկանքներին, միջկձկանքային ընդմիջումներին,</p> <p>5) լսում է պտղի սրտի զարկերը,</p> <p>6) հետևում է պտղաջրերի արտահոսքին, նրանց գույնին,</p> <p>7) կատարում է ներքին զննում,</p> <p>8) հետևում է կոնտրակցիոն օղին,</p> <p>9) ներկայացնում է պարատագրամայի լրացման և մեկնաբանման սկզբունքները:</p>
487.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ծննդաբերության երկրորդ շրջանի ընթացքը և վարումը
488.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ծննդաբերության երկրորդ (արտամղման) շրջանը և դրա ընթացքը,</p> <p>2) տիրապետում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության նոր մոտեցումներին, ծննդաբերության ընդունմանը տարբեր դիրքերով,</p> <p>3) նախապատրաստում է ծննդաբերության ընդունման համար անհրաժեշտ պարագաները,</p> <p>4) ֆանտոմի վրա կատարում է մանկաբարձական օժանդակությունը և ներկայացնում անհրաժեշտ խորհրդատվությունը ծննդաբերության երկրորդ (արտամղման) շրջանում,</p> <p>5) լսում է պտղի սրտի զարկերը յուրաքանչյուր ճիգից հետո:</p>
489.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ծննդաբերության բիոմեխանիզմը ծոծրակային առաջադրության առջևի և հետին տեսակների ժամանակ
490.	Կատարման չափանիշներ	<p>1) կոնքի մույլաժով և տիկնիկով ներկայացնում է ծննդաբերության բիոմեխանիզմը ծոծրակային առաջադրության առջևի և հետին տեսակների ժամանակ,</p> <p>2) կատարում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկները. ծնվելուց անմիջապես հետո նորածնին մոր որովայնի վրա դնելը, նորածնի հիպոթերմիայի կանխարգելումը, անմիջապես տաք բարուրաշորով փաթաթելը, չորացնելը, կրծքին մոտեցնելը,</p> <p>3) ներկայացնում է մոր և մանկան համատեղ կեցությանը ներկայացվող պահանջները, կրծքով բարեհաջող կերակրման 10 քայլերը:</p>
491.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ծննդաբերության երրորդ շրջանի ընթացքը և վարումը

492.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ծննդաբերության երրորդ (ընկերքային) շրջանը, դրա ակտիվ դեղորայքային վարումը և ընթացքը, 2) ֆանտոմի վրա ներկայացնում է ընկերքի անջատման նշանները, 3) ֆանտոմի վրա ներկայացնում է անջատված ընկերքի դուրս բերման եղանակները (ըստ Աբուլաձեի, Գենտերի, Կրեդե-Լազարևիչի), 4) ներկայացնում է ընկերքի ամբողջականության ստուգումը:
493.	Ուսումնառության արդյունք 5	Նկարագրել նորածնի առաջին հարդարանքը, ծննդաբերության ցավազրկման ժամանակակից մոտեցումները, հղիների ծննդաբերության հուզահոգեբանական նախապատրաստումը
494.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ֆանտոմի վրա կատարում է՝ ծնվելուց անմիջապես հետո նորածնին մոր որովայնին դնելը, տաք բարուրաշորով ծածկելը, կրծքով կերակրման փորձը, 2) կատարում է նորածնի առաջին հարդարանքը, կշռաչափումը, հասակաչափումը, 3) ներկայացնում է ծննդաբերության ցավազրկման ժամանակակից մոտեցումները, 4) կատարում է հղիների ծննդաբերության հուզահոգեբանական նախապատրաստումը:
495.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել նորմալ (ֆիզիոլոգիական) հետծննդյան շրջանի ընթացքը, ծննդկանի օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, մանկաբարձուհու պարտականությունները, խորհրդատվությունը
496.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է նորմալ (ֆիզիոլոգիական) հետծննդյան շրջանը և ծննդկանի օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, 2) տիրապետում է վաղ հետծննդյան շրջանում ծննդկանի հսկողության հմտություններին, 3) տիրապետում է ուշ հետծննդյան շրջանում ծննդկանի հսկողության հմտություններին, բարդությունների հայտնաբերմանը՝ արյունահոսություն, հեմատոմա, հեմատոմետրա, տենդ, դեպրեսիա և այլն, 4) տիկնիկով ներկայացնում է նորածնին կրծքին մոտեցնելը, 5) կատարում է խորհրդատվություն կրծքով կերակրման առավելությունների և անձնական հիգիենայի վերաբերյալ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ՊՏՂԻ ՀԻՊՕՔՍԻԱ: ՆՈՐԱԾՆԻ ԱՍՖԻՔՍԻԱ: ԿՈՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ: ԲԱԶՄԱՊՏՈՒՂ ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ: ՀՂԻՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՂ ԵՎ ՈՒՇ

ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

497.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-039
498.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել պտղի հիպոքսիայի, նորածնի ասֆիքսիայի առաջացման պատճառները, դրանց ախտորոշումը, բուժման սկզբունքները, կանխարգելումը, նորածնի վիճակի գնահատումն՝ ըստ Ապգարի սանդղակի, նորածնի վերակենդանացման հերթական քայլերը, կոնքային առաջադրության, բազմապտուղ հղիության դասակարգումը, ախտորոշումը, հղիության վարման սկզբունքները, խորհրդատվությունը, ծննդաբերության ընթացքը, հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան, հղիության հետևանքով վաղ և ուշ ժամկետներում առաջացող բարդությունները (հղիների անզուսպ փսխում, թքահոսություն, հազվադեպ հանդիպող ձևերից՝ հղիության հեպատոզներ և դերմատոզներ, հղիության երկրորդ կեսի բարդություններից՝ պրեէկլամպսիա, էկլամպսիա), դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկական նշանները, տարբերակումը, մոր և պտղի համար հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան, խորհրդատվությունը, անհետաձգելի օգնությունը:
499.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
500.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն: Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջան» մոդուլները:
501.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
502.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել պտղի հիպոքսիայի, նորածնի ասֆիքսիայի առաջացման պատճառները, դրանց ախտորոշումը, բուժման սկզբունքները, կանխարգելումը, նորածնի վիճակի գնահատումն՝ ըստ Ապգարի սանդղակի, նորածնի վերակենդանացման հերթական քայլերը
503.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է պտղի հիպոքսիայի առաջացման պատճառները, բուժման սկզբունքները, 2) լսում է պտղի սրտի զարկերը և գնահատում է ներարգանդային կյանքում պտղի վիճակը (աքցետելացիա,

		<p>մոնոտոն ռիթմ, դեցեռելացիա, բազալ ռիթմ),</p> <p>3) հետևում է պտղաջրերի գույնին, պտղի խաղին,</p> <p>4) կատարում է առաջին բուժօգնություն,</p> <p>5) կատարում է բժշկի նշանակումները,</p> <p>6) ներկայացնում է նորածնի ասֆիքսիայի առաջացման պատճառները,</p> <p>7) որոշում է նորածնի ասֆիքսիայի ծանրության աստիճանն՝ ըստ Ապգարի սանդղակի,</p> <p>8) նախապատրաստում է ասֆիքսիայով ծնված նորածնի վերակենդանացման համար անհրաժեշտ պարագաները,</p> <p>9) ֆանտոմի վրա կատարում է նորածնի վերակենդանացման հերթական քայլերը:</p>
504.	<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել կոնքային առաջադրության դասակարգումը, ախտորոշումը, հղիության ընթացքում սպասվող բարդությունները, խորհրդատվությունը, ծննդաբերության ընթացքը, հնարավոր բարդությունները, ձեռքային օժանդակությունները (Ծովյանով՝ I, II, դասական ձեռքային օժանդակություն), ծննդաբերության բիոմեխանիզմը, տոտիկային առաջադրության դեպքում ժամանակակից մանկաբարձական տակտիկան</p>
505.	<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ներկայացնում է կոնքային առաջադրության դասակարգումը, ախտորոշումը,</p> <p>2) ֆանտոմի վրա կատարում է մարմնամասերի շոշափում (ըստ Լեոպոլդ-Լազարևիչի),</p> <p>3) լսում է պտղի սրտի զարկերը,</p> <p>4) կատարում է խորհրդատվություն հղիության ընթացքում հնարավոր բարդություններից խուսափելու համար,</p> <p>5) կատարում է խորհրդատվություն ծննդաբերության առաջին շրջանում հնարավոր բարդություններից խուսափելու համար,</p> <p>6) ֆանտոմի վրա կատարում է ձեռքային օժանդակություններն՝ ըստ Ծովյանով՝ I, II,</p> <p>7) ֆանտոմի վրա կատարում է դասական ձեռքային օժանդակություն,</p> <p>8) ֆանտոմի վրա ներկայացնում է ծննդաբերության բիոմեխանիզմը,</p> <p>9) ներկայացնում է տոտիկային առաջադրության դեպքում ժամանակակից մանկաբարձական տակտիկան (ծննդալուծում կեսարյան հատման միջոցով):</p>

506.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բազմապտուղ հղիության դասակարգումը, ախտորոշումը, հղիության ընթացքում սպասվող բարդությունները, խորհրդատվությունը, նկարագրել ծննդաբերության ընթացքը, հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան
507.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է բազմապտուղ հղիության դասակարգումը, ախտորոշումը, 2) ֆանտոմի վրա կատարում է մարմնամասերի շոշափում (ըստ Լեոպոլդ-Լազարևիչի), 3) լսում է պտուղների սրտի զարկերը, 4) կատարում է խորհրդատվություն հղիության ընթացքում հնարավոր բարդություններից խուսափելու համար, 5) ներկայացնում է բազմապտուղ հղիության ժամանակ ծննդաբերության ընթացքը և մանկաբարձական տակտիկան:
508.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հղիության հետևանքով վաղ ժամկետում առաջացող բարդությունները՝ հղիների անզուսպ փսխում, թքահոսություն, հազվադեպ հանդիպող ձևեր՝ հղիության հեպատոզներ և դերմատոզներ, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկական նշանները, հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան, խորհրդատվությունը, բուժումը
509.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հղիության հետևանքով վաղ ժամկետում առաջացող բարդությունների դասակարգումը՝ հղիների անզուսպ փսխում, թքահոսություն, հազվադեպ հանդիպող ձևերը՝ հղիության հեպատոզներ և դերմատոզներ, 2) ներկայացնում է դրանց կլինիկական նշանները, հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան, 3) կատարում է խորհրդատվություն և բժշկի նշանակումները:
510.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել հղիության հետևանքով ուշ ժամկետում առաջացող բարդությունների առաջացման պատճառները, դասակարգումը (պրեէկլամպսիա, էկլամպսիա), կլինիկական նշանները, մոր և պտղի համար հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան, խորհրդատվությունը, անհետաձգելի բուժօգնությունը և բուժումը
511.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հղիության հետևանքով ուշ ժամկետում առաջացող բարդությունների (պրեէկլամպսիա,

		<p>էկլամպսիա) առաջացման պատճառները, դասակարգումը,</p> <p>2) տիրապետում է պրեէկլամպսիայի թեթև և ծանր ձևերի տարբերակմանը և վարման տակտիկային,</p> <p>3) ներկայացնում է կլինիկական նշանները, մոր և պտղի համար հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան,</p> <p>4) կատարում է խորհրդատվությունը,</p> <p>5) տիրապետում է անհետաձգելի բուժօգնությանը էկլամպսիայի ժամանակ,</p> <p>6) կատարում է բժշկի նշանակումները:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ: ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՍԵՌԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՊՏՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱՏՆԵՐ: ՊՏՂԱԶՎԻ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԲԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՎԻԺՈՒՄՆԵՐ, ՎԱՂԱԺԱՄ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԿԵՏԱՆՑ ՀՂԻՈՒԹՅՈՒՆ: ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՈՄԱԼԻԱՆԵՐ»</p>		
512.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-040
513.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել արտասեռական՝ էքստրագենիտալ (սրտանոթային, երիկամային՝ միզուղիների, սուր և քրոնիկ ինֆեկցիոն և այլն) հիվանդությունների ազդեցությունը հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վրա, դրանց վարման առանձնահատկությունները, խորհրդատվությունը, պտղի զարգացման արատները, պտղաձվի և նրա տարրերի հիվանդությունները, ռեզուս իմունիզացիան, հղիների սակավարյությունը, պտղի ներարգանդային աճի դանդաղման համախտանիշը, դրանց ախտորոշման եղանակները, հղիության, ծննդաբերության, հետծննդյան շրջանների վարման առանձնահատկությունները, վիժումների, վաղաժամ ծննդաբերության, ժամկետանց, երկարաձգված հղիության, գերհասուն ծննդաբերության, ծննդաբերական գործունեության անոմալիաների առաջացման պատճառները, դասակարգումը, մանկաբարձական տակտիկան, հնարավոր բարդությունների կանխարգելումը, խորհրդատվությունը:
514.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
515.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն:

		Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջան», ՄԲԳ-5-20-039 «Ախտաբանական մանկաբարձություն: Պտղի հիպօքսիա: Նորածնի ասֆիքսիա: Կոնքային առաջադրություն: Բազմապտուղ հղիություն: Հղիության հետեվանքով վաղ և ուշ ժամկետներում առաջացող բարդություններ» մոդուլները:
516.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
517.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել արտասեռական՝ էքստրագենիտալ (սրտանոթային, երիկամային՝ միզուղիների, սուր և քրոնիկ ինֆեկցիոն և այլն) հիվանդությունների ազդեցությունը հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վրա, դրանց վարման առանձնահատկությունները, խորհրդատվությունը
518.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է սրտանոթային համակարգի հիվանդությունների ազդեցությունը հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վրա, 2) ներկայացնում է հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վարման առանձնահատկությունները սրտանոթային համակարգի հիվանդությունների ժամանակ և կատարում անհրաժեշտ խորհրդատվություն, 3) ներկայացնում է երիկամային հիվանդությունների (պիելոնեֆրիտ, գլոմերուլոնեֆրիտ) ազդեցությունը հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վրա, 4) ներկայացնում է հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վարման առանձնահատկությունները երիկամային հիվանդությունների (պիելոնեֆրիտ, գլոմերուլոնեֆրիտ) ժամանակ և կատարում անհրաժեշտ խորհրդատվություն, 5) ներկայացնում է սուր և քրոնիկ ինֆեկցիոն հիվանդությունների ազդեցությանը հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վրա, 6) ներկայացնում է հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանների վարումը սուր և քրոնիկ ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ և կատարում անհրաժեշտ խորհրդատվություն:
519.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել պտղի զարգացման արատների հիմնական ձևերը, պտղաձվի և դրա տարրերի հիվանդությունները, ռեզուս իմունիզացիան, հղիների սակավարյությունը, պտղի ներարգանդային աճի

		դանդաղման համախտանիշը, դրանց ախտորոշման եղանակները, հղիության, ծննդաբերության, հետծննդյան շրջանների վարման առանձնահատկությունները, հնարավոր բարդությունների կանխարգելումը
520.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է պտղի զարգացման արատների հիմնական ձևերը, 2) ներկայացնում է պտղի զարգացման արատների հայտնաբերման ժամանակակից մեթոդները՝ գերծայնային հետազոտություն, պտղի օձիքային տարածության հաստացում, կենսաքիմիական մարկերների՝ ալֆա ֆետոպրոտեինի, խորիոնային գնադոտրոպինի, հղիությամբ ինդուկցված Ա պրոտեինի որոշում, 3) ներկայացնում է պտղաձվի և նրա տարրերի հիվանդությունները, մանկաբարձական տակտիկան դրանց ժամանակ, 4) ներկայացնում է ռեզուս-իմունիզացիան և դրա ժամանակ հղիության, ծննդաբերության, հետծննդյան շրջանների վարման առանձնահատկությունները, 5) ներկայացնում է հղիների սակավարյունությունը, գործելակերպը դրա ժամանակ և անհրաժեշտ խորհրդատվությունը, 6) ներկայացնում է պտղի ներարգանդային աճի դանդաղման համախտանշի ախտորոշումը և գործելակերպը դրա ժամանակ:
521.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հղիության կրելախախտի՝ վիժումների առաջացման պատճառները, դասակարգումը, մանկաբարձական տակտիկան, խորհրդատվությունը
522.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հղիության կրելախախտի՝ վիժումների առաջացման պատճառները, դասակարգումը և մանկաբարձական տակտիկան վիժումների տարբեր ձևերի ժամանակ, 2) կատարում է անհրաժեշտ խորհրդատվություն:
523.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հղիության կրելախախտի՝ վաղաժամ ծննդաբերության առաջացման պատճառները, դասակարգումը, մանկաբարձական տակտիկան հղիության ժամանակ, ծննդաբերության վարման առանձնահատկությունները
524.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հղիության կրելախախտի՝ վաղաժամ ծննդաբերության առաջացման պատճառները,

		<p>դասակարգումը, մանկաբարձական տակտիկան,</p> <p>2) ներկայացնում է ծննդաբերության վարման առանձնահատկությունները:</p>
525.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ժամկետանց, ինչպես նաև երկարաձգված հղիությունը, գերհասուն ծննդաբերության (ժամկետանց) առաջացման պատճառները, ախտորոշումը, մանկաբարձական տակտիկան հղիության ժամանակ, ծննդաբերության վարման առանձնահատկությունները, խորհրդատվությունը
526.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ժամկետանց, ինչպես նաև երկարաձգված հղիության, գերհասուն ծննդաբերության (ժամկետանց) առաջացման պատճառները,</p> <p>2) տարբերակում է վտանգի նշանները,</p> <p>3) ներկայացնում է մանկաբարձական տակտիկան, ծննդաբերության վարման առանձնահատկությունները,</p> <p>4) կատարում է խորհրդատվությունը:</p>
527.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ծննդաբերական գործունեությունը անոմալիաների դասակարգումը, առաջացման պատճառները, մանկաբարձական տակտիկան
528.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ծննդաբերական գործունեության անոմալիաների դասակարգումը, առաջացման պատճառները,</p> <p>2) ներկայացնում է պարտագրամայի դերը անոմալիաների վաղ ախտորոշման համար,</p> <p>3) ներկայացնում է մանկաբարձական տակտիկան ծննդաբերական գործունեության անոմալիաների ժամանակ,</p> <p>4) կատարում է բժշկի նշանակումները:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ԿՈՆՔԻ ԱՆՈՄԱԼԻԱՆԵՐ: ՄԻՋԱՁԻԳ ԵՎ ԹԵԲԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՊԱԽՈՆԱՐՀՎԱԾ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</p>		
529.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-041
530.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել կոնքի անոմալիաների, միջաձիգ և թեք դրությունների, ապախոնարիված առաջադրությունների, մանկաբարձական արյունահոսությունների, հեմոռագիկ շոկի առաջացման պատճառները ախտորոշումը, սպասվող բարդությունները, մանկաբարձական տակտիկան, բուժօգնությունն ու կանխարգելումը:

531.	Մոդուլի տևողությունը	90 ժամ
532.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն: Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջան», ՄԲԳ-5-20-040 «Ախտաբանական մանկաբարձություն: Հղիություն և արտասեռական հիվանդություններ: Պտղի զարգացման արատներ: Պտղաձվի և նրա տարրերի հիվանդություններ: Վիժումներ, վաղաժամ ծննդաբերություն, ժամկետանց հղիություն: Ծննդաբերական գործունեության անոմալիաներ» մոդուլները:
533.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
534.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կոնքի անոմալիաների առաջացման պատճառները, դասակարգումը, գլուխ-կոնքային անհամատեղելիությունը, կլինիկական նեղ կոնքի ախտորոշումը, սպասվող բարդությունները հղիության, ծննդաբերության ժամանակ, մանկաբարձական տակտիկան, խորհրդատվությունը
535.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կոնքի անոմալիաների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, 2) ներկայացնում է գլուխ-կոնքային անհամատեղելիության, 3) որոշում է Վաստենի ախտանիշը, 4) կատարում է արտաքին զննում, շոշափում, կոնքաչափում, 5) կատարում է ներքին զննում, 6) ներկայացնում է սպասվող բարդությունները հղիության, ծննդաբերության ժամանակ, 7) բացատրում է մանկաբարձական տակտիկան, 8) կատարում է խորհրդատվություն:
536.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել միջաձիգ և թեք դրությունների առաջացման պատճառները, ախտորոշումը, սպասվող բարդությունները հղիության, ծննդաբերության ժամանակ (բարձիթող արված միջաձիգ դրություն), մանկաբարձական տակտիկան, խորհրդատվությունը
537.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է միջաձիգ և թեք դրությունների առաջացման պատճառները, ախտորոշումը,

		<p>2) ֆանտոմի վրա կատարում է մարմնամասերի շոշափում՝ ըստ Լեոպոլդ-Լազարևիչի,</p> <p>3) լսում է պտղի սրտի զարկերը,</p> <p>4) ներկայացնում է սպասվող բարդությունները հղիության, ծննդաբերության ժամանակ,</p> <p>5) ներկայացնում է վիրահատական ծննդալուծման պատճենները,</p> <p>6) ներկայացնում է պտղաջերի վաղաժամ և վաղ արտահոսքը, պորտալարի արտանկումը և մանկաբարձական տակտիկան դրանց ժամանակ,</p> <p>7) ֆանտոմի վրա ցուցադրում է բարձիթող արված միջաձիգ դրությունը և ներկայացնում մանկաբարձական տակտիկան դրա ժամանակ,</p> <p>8) կատարում է խորհրդատվություն:</p>
538.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ապախոնարհված առաջադրությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, սպասվող բարդությունները հղիության, ծննդաբերության ժամանակ, մանկաբարձական տակտիկան, ծննդաբերության բիոմեխանիզմը
539.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ապախոնարհված առաջադրությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը,</p> <p>2) ներկայացնում է մանկաբարձական տակտիկան ապախոնարհված առաջադրությունների ժամանակ,</p> <p>3) կոնքի մույլաժով և տիկնիկով ցուցադրում է ծննդաբերության բիոմեխանիզմները ապախոնարհված առաջադրությունների ժամանակ:</p>
540.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հղիության և ծննդաբերության շրջանի արյունահոսությունների (արտարգանդային հղիություն, նորմալ տեղակայված ընկերքի վաղաժամ շերտազատում, առաջադիր ընկերք) առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, հնարավոր բարդությունները, մանկաբարձական տակտիկան հղիության և ծննդաբերության ժամանակ, խորհրդատվությունը
541.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է արտարգանդային հղիության առաջացման պատճառները, դասակարգումը,</p> <p>2) տարբերակում է զարգացող և ընդհատված արտարգանդային հղիության վտանգի նշանները,</p> <p>3) ներկայացնում է զարգացող և ընդհատված արտարգանդային հղիության ախտորոշումը,</p> <p>4) ներկայացնում է մանկաբարձական տակտիկան արտարգանդային հղիության ժամանակ,</p>

		<p>5) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտությունների համար (գերծայնային հետազոտություն, դիտում մանկաբարձական հայելիներով, հեշտոցի հետին կամարի պունկցիա),</p> <p>6) ներկայացնում է նորմալ տեղակայված ընկերքի վաղաժամ շերտազատման առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան, բուժօգնությունը,</p> <p>7) ներկայացնում է նորմալ տեղակայված ընկերքի վաղաժամ շերտազատման կլինիկան և ախտորոշումը, հնարավոր բարդությունները,</p> <p>8) ներկայացնում է մանկաբարձական տակտիկան նորմալ տեղակայված ընկերքի վաղաժամ շերտազատման դեպքում՝ հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ,</p> <p>9) ներկայացնում է առաջադիր ընկերքի առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկան և ախտորոշումը,</p> <p>10) ներկայացնում է մանկաբարձական տակտիկան առաջադիր ընկերքի դեպքում՝ հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ,</p> <p>11) կատարում է խորհրդատվություն:</p>
542.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ընկերքային շրջանի արյունահոսությունների առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, մանկաբարձական տակտիկան
543.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ընկերքային շրջանի արյունահոսությունների առաջացման պատճառները, ախտորոշումը,</p> <p>2) ներկայացնում է ընկերքի կեղծ, իսկական սերտաճումները և մանկաբարձական տակտիկան դրանց ժամանակ,</p> <p>3) ֆանտոմի վրա ցուցադրում է արգանդի խոռոչից ընկերքի ձեռքով անջատման, հեռացման հերթական քայլերը:</p>
544.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել հետծննդյան շրջանի արյունահոսությունների առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, մանկաբարձական տակտիկան, հեմոռագիկ շոկը
545.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հետծննդյան շրջանի արյունահոսությունների առաջացման պատճառները,

		<p>ախտորոշումը,</p> <p>2) ներկայացնում է պլացենտայի և պտղաթաղանթների զանգվածային կասեցումը արգանդի խոռոչում,</p> <p>3) ֆանտոմի վրա ցուցադրում է և ներկայացնում արգանդի խոռոչից ընկերքի կտորի կամ հավելյալ բլթի ձեռքով անջատման, հեռացման հերթական քայլերը,</p> <p>4) ներկայացնում է հիպոտոնիկ, ատոնիկ արյունահոսությունները և դրանց ժամանակ կատարվող հերթական քայլերը,</p> <p>5) ֆանտոմի վրա կատարում է արգանդի արտաքին կոմպրեսիա,</p> <p>6) ֆանտոմի վրա կատարում է արգանդի արտաքին ներքին կոմպրեսիա,</p> <p>7) ներկայացնում է հիպո, կոագուլոպաթիկ արյունահոսությունների առաջացման պատճառները, կլինիկան,</p> <p>8) ներկայացնում է հեմոռագիկ շոկի աստիճանները,</p> <p>9) կատարում է բժշկի նշանակումները:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ: ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ: ՀԵՏԾՆՆԴՅԱՆ ԹԱՐԱԽԱՍԵՊՏԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</p>		
546.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-042
547.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել ծննդաբերական վնասվածքների, հետծննդյան թարախասեպտիկ հիվանդությունների դասակարգումը, առաջացման պատճառները, ախտորոշումը, բուժման ընթացքը, կանխարգելիչ միջոցառումները:
548.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
549.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն: Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջան», ՄԲԳ-5-20-041 «Ախտաբանական մանկաբարձություն: կոնքի անոմալիաները: Միջաձիգ և թեք դրություններ: Ապախոնարիված առաջադրություններ: Մանկաբարան արյունահոսություններ» մոդուլները:

550.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
551.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ծննդաբերական վնասվածքների դասակարգումը, առաջացման պատճառները, ախտորոշումը, կանխարգելիչ միջոցառումները
552.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է արտաքին սեռական օրգանների, շեքի, հեշտոցի, արգանդի պարանոցի, արգանդի վնասվածքների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, 2) ներկայացնում և մուլյաժի վրա կատարում է վնասվածքների վերականգնում, 3) ներկայացնում է վերտիկալ դիրքով ծննդաբերությունը որպես պատռվածքների կանխարգելման միջոց, 4) իրականացնում է կանխարգելիչ միջոցառումներ սեռական օրգանների վնասվածքներից խուսափելու համար:
553.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հետծննդյան I, II փուլերի թարախասեպտիկ հիվանդությունների դասակարգումը, առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, մանկաբարձական տակտիկան, կանխարգելիչ միջոցառումները
554.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հետծննդյան I, II փուլերի թարախասեպտիկ հիվանդությունների դասակարգումը, առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան և մանկաբարձական տակտիկան դրանց ժամանակ, 2) կատարում է կանխարգելիչ միջոցառումներ, 3) իրականացնում է հետծննդյան թարախասեպտիկ ախտաբանությամբ ծննդկանի խնամքը:
555.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հետծննդյան III, IV փուլերի թարախասեպտիկ հիվանդությունների դասակարգումը, առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, մանկաբարձական տակտիկան, կանխարգելիչ միջոցառումները
556.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հետծննդյան III, IV փուլերի թարախասեպտիկ հիվանդությունների դասակարգումը, առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան և մանկաբարձական տակտիկան դրանց ժամանակ, 2) կատարում է կանխարգելիչ միջոցառումներ,

		3) իրականացնում է հետծննդյան թարախասեպտիկ ախտաբանությամբ ծննդկանի խնամքը:
557.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հետծննդյան մաստիտի առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, կրծքագեղձի դատարկման հմտությունը, կանխարգելիչ միջոցառումները, խորհրդատվությունը
558.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հետծննդյան մաստիտի առաջացման պատճառները, կլինիկան, ախտորոշումը, 2) ներկայացնում է կրծքով ճիշտ կերակրումը, որպես մաստիտի կանխարգելման միջոց, 3) ներկայացնում է տիկնիկով ցուցադրում է նորածին կրծքին ճիշտ ամրակցումը, 4) ներկայացնում է և ֆանտոմի վրա ցուցադրում կրծքագեղձի դատարկման հերթական քայլերը, 5) կատարում է կանխարգելիչ միջոցառումներ և խորհրդատվություն:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՕՊԵՐԱՏԻՎ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ»		
559.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-043
560.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել մանկաբարձական պրակտիկայում կատարվող վիրահատությունների դասակարգումը, ցուցումները, պայմանները, հակացուցումները, վիրահատությունների ընթացքը, հետվիրահատական բարդությունները, մանկաբարձուհու պարտականություններն ու մասնակցությունը այդ վիրահատությունների ժամանակ, ցավազրկման ժամանակակից մոտեցումները, հղիի, ծննդաբերի, ծննդկանի նախավիրահատական նախապատրաստումը, ծննդկանների հետվիրահատական խնամքը:
561.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
562.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն: Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջանը», ՄԲԳ-5-20-042 «Ախտաբանական մանկաբարձություն: Ծննդաբերական վնասվածքներ: Հետծննդյան թարախասեպտիկ հիվանդություններ» մոդուլները:
563.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:

564.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մանկաբարձական վիրահատությունների դասակարգումը, ցուցումը, պայման հասկացությունները, նկարագրել հղիի, ծննդաբերի, ծննդկանի նախավիրահատական նախապատրաստումը և հետվիրահատական խնամքը, ցավազրկման ժամանակակից մոտեցումները
565.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) դասակարգում է մանկաբարձական վիրահատությունները, 2) բացատրում է ցուցում, պայման, հակացուցում հասկացությունները, 3) ներկայացնում է ցավազրկման ժամանակակից մոտեցումները, 4) ներկայացնում և կատարում է հղիի, ծննդաբերի, ծննդկանի նախավիրահատական նախապատրաստումը:
566.	Ուսումնառության արդյունք 2	Նկարագրել հղիության ընթացքում կատարվող վիրահատությունները, անհրաժեշտ հետազոտությունները, գործիքները, պարագաները, վիրահատության ցուցումները, պայմանները, հակացուցումները, ընթացքը, հետվիրահատական բարդությունները, խորհրդատվությունը
567.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) դասակարգում է հղիության ընթացքում կատարվող վիրահատությունները, 2) ներկայացնում է նախավիրահատական և հետվիրահատական անհրաժեշտ հետազոտությունները, 3) նախապատրաստում է վիրահատության համար անհրաժեշտ պարագաները և գործիքները, 4) ներկայացնում է վիրահատության ցուցումները, պայմանները, հակացուցումները, 5) ֆանտոմի վրա ներկայացնում է վիրահատության ընթացքը, 6) ներկայացնում է հետվիրահատական բարդությունները, 7) տիրապետում է հետվիրահատական խնամքին և կատարում բժշկի նշանակումները:
568.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ծննդաբերական ուղիները նախապատրաստող վիրահատությունները, անհրաժեշտ գործիքները, պարագաները, վիրահատության ցուցումները, պայմաններն ու կատարման ընթացքը
569.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) դասակարգում է ծննդաբերական ուղիները նախապատրաստող վիրահատությունները, 2) նախապատրաստում է վիրահատությունների համար անհրաժեշտ պարագաները և գործիքները, 3) ներկայացնում է պողպատե պատռման ցուցումները, պայմանները, 4) ներկայացնում է շեքահատման ցուցումները, պայմանները, 5) ներկայացնում է վերը նշված վիրահատությունների կատարման ընթացքը:

570.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հղիության և ծննդաբերության ժամանակ պտղի ոչ ճիշտ դրությունները շտկող վիրահատությունները, դրանց ցուցումները, պայմանները, հակացուցումները, կատարման ընթացքը
571.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է հղիության և ծննդաբերության ժամանակ պտղի ոչ ճիշտ դրությունները շտկող վիրահատությունները, 2) ներկայացնում է արտաքին մանկաբարձական պտղաշրջման ցուցումները, պայմանները, հակացուցումները, 3) ներկայացնում է դասական արտաքին ներքին պտղաշրջման ցուցումները, պայմանները, հակացուցումները, 4) ներկայացնում է վերը նշված վիրահատությունների կատարման ընթացքը:
572.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ծննդալուծող վիրահատությունները, դրանց ցուցումները, պայմանները, հակացուցումները, անհրաժեշտ գործիքները, պարագաները, կատարման ընթացքը
573.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) դասակարգում է ծննդալուծող վիրահատությունները, 2) նախապատրաստում է վիրահատության համար անհրաժեշտ պարագաները և գործիքները, 3) ներկայացնում է վիրահատության ցուցումները, պայմանները, հակացուցումները, 4) ներկայացնում է պտղի դուրս բերումը հետույքից, տոտիկից վիրահատության ընթացքը, 5) ներկայացնում է մանկաբարձական աքցանադրման ցուցումները, պայմանները, հակացուցումները և վիրահատության կատարման ընթացքը, 6) ներկայացնում է վակուում էքստրակցիայի ցուցումները, պայմանները, հակացուցումները վիրահատության կատարման ընթացքը, 7) ներկայացնում է կեսարյան հատման բացարձակ և հարաբերական ցուցումները, պայմանները, հակացուցումները, վիրահատության կատարման ընթացքը, 8) իրականացնում է ծննդկանի հետվիրահատական խնամք:
574.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել պտղահատման վիրահատությունների ցուցումները, պայմանները, վիրահատությունների կատարման ընթացքը
575.	Կատարման չափանիշներ	1) դասակարգում է պտղահատման վիրահատությունները,

		<p>2) նախապատրաստում է վիրահատությունների համար անհրաժեշտ պարագաները և գործիքները,</p> <p>3) ներկայացնում է վիրահատությունների ցուցումները, պայմանները, կատարման ընթացքը,</p> <p>4) տիրապետում է ծննդկանի հետվիրահատական խնամքին:</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ: ԲԺՇԿԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԵՎ ԴԵՈՆՏՈԼՈԳԻԱՆ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅՈՒՄ:</p> <p>ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ: ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱՏՆԵՐ, ԱՆԿԱՆԱՆՈՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԵՎ ՆԵՅՐՈԷՆԴՈԿՐԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ:»</p>		
576.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-044
577.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել բժշկական էթիկայի և դեոնտոլոգիայի հիմունքները գինեկոլոգիայում, մասնագիտական հաղորդակցման առանձնահատկությունները, գինեկոլոգիական օգնություն ցույց տվող կազմակերպությունների կառուցվածքը, դասակարգումն ըստ բժշկական օգնության մակարդակների, սանիտարահամաճարակային ռեժիմը, գինեկոլոգիական հիվանդների դիսպանսեր հսկողությունը, խորհրդատվությունը, նախաբժշկական օգնությունը, գինեկոլոգիական հիվանդների հետազոտման եղանակները, վերարտադրողական համակարգի զարգացման արատները, սեռական օրգանների ոչ ճիշտ (անկանոն) դրությունները, դաշտանային պարբերաշրջանի խանգարումները, նյարդաէնդոկրին համախտանիշները:
578.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
579.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ. քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում, Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն: Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջան» մոդուլները:
580.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
581.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բժշկական էթիկայի և դեոնտոլոգիայի հիմունքները գինեկոլոգիայում, մասնագիտական

		<p>հաղորդակցման առանձնահատկությունները, գինեկոլոգիական օգնություն ցույց տվող հիմնարկների կառուցվածքը, դասակարգումն՝ ըստ բժշկական օգնության մակարդակների, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությունը և սանիտարահամաճարակային ռեժիմը, մանկաբարձուհու դերը գինեկոլոգիական հիվանդների հայտնաբերման, դիսպանսեր հսկողությանը, խորհրդատվությանը, լուսավորչական և առողջապահական կրթական աշխատանքների գործը, նախաբժշկական օգնության հմտությունները, մասնագիտական ձևաթղթերը, ուղեգրերի լրացումը</p>
<p>582.</p>	<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է գինեկոլոգիական օգնություն ցույց տվող կազմակերպությունների կառուցվածքը, դասակարգումն՝ ըստ բժշկական օգնության մակարդակների, յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությունը, 2) տիրապետում է սանիտարահամաճարակային ռեժիմին, 3) տիրապետում է խնամքի առարկաների, բժշկական նշանակության իրերի և ըստ իրենց վտանգավորության աստիճանի վարակազերծման և մանրէազերծման եղանակներին, 4) տիրապետում է սարքավորումների սանիտարական մշակմանը, 5) տիրապետում է գինեկոլոգիական բաժանմունքի ընթացիք և եզրափակիչ ախտահանմանն ու մաքրմանը, 6) տիրապետում է հականեխիչ նյութերի պատրաստմանը և կիրառմանը, 7) տիրապետում է բժշկական թափոնների դասակարգմանը, տեղափոխմանը և պահպանմանը, 8) տիրապետում է ձեռքերի մշակման եղանակներին, 9) ներկայացնում է գինեկոլոգիական հիվանդների հայտնաբերման գործում իր դերը և տիրապետում է վերարտադրողական համակարգի հիվանդությունների ժամանակ ռիսկի գործոնների հայտնաբերմանն ու հնարավոր բարդությունների կանխարգելման աշխատանքներին, 10) տիրապետում է գինեկոլոգիական հիվանդների դիսպանսեր հսկողությանը (ակտիվ և պասիվ պատրոնաժ), 11) տիրապետում է բժշկական էթիկային և դեոնտոլոգիայի հիմունքներին, հաղորդակցության ունակություններին գինեկոլոգիական հիվանդների և նրանց հարազատների հետ շփման գործում,

		<p>12) տիրապետում է հաղորդակցության ունակություններին գինեկոլոգիական ստորաբաժանումներում աշխատող անձանց հետ շփման գործում,</p> <p>13) կատարում է խորհրդատվություն, լուսավորչական և քարոզչական կրթական աշխատանքներ,</p> <p>14) տիրապետում է նախաբժշկական օգնության հմտություններին,</p> <p>15) լրացնում է մասնագիտական ձևաթղթերը, ուղեգրերը, գրառումները բժշկական փաստաթղթերում:</p>
583.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գինեկոլոգիական հիվանդների հետազոտման եղանակները և մանկաբարձուհու պարտականություններն այդ հետազոտությունների ժամանակ
584.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է գինեկոլոգիական հիվանդների հետազոտման եղանակները (սուբյեկտիվ, օբյեկտիվ, գինեկոլոգիական, լրացուցիչ),</p> <p>2) ներկայացնում է գինեկոլոգիական հիվանդների լրացուցիչ հետազոտման եղանակների ցուցումները, հակացուցումները, հնարավոր բարդությունները,</p> <p>3) հավաքում է անամնեզ,</p> <p>4) նախապատրաստում է հիվանդին և գործիքները գինեկոլոգիական հետազոտության,</p> <p>5) ֆանտոմի վրա կատարում է արտաքին սեռական օրգանների մշակում,</p> <p>6) ֆանտոմի վրա կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, մեկձեռք, երկձեռք զննում,</p> <p>7) վերցնում է քսուք հետազոտության համար (U; V; C; R) կետերից,</p> <p>8) վերցնում է քսուք՝ ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք),</p> <p>9) բացատրում է և կատարում ռեկտալ ջերմաչափում,</p> <p>10) նախապատրաստում է հիվանդին և գործիքները արգանդի խոռոչի զոնդավորման համար,</p> <p>11) նախապատրաստում է հիվանդին և գործիքները արգանդի վզիկի և արգանդի խոռոչի (պատերի) ախտորոշիչ քերում կատարելու համար,</p> <p>12) նախապատրաստում է հիվանդին և գործիքները բիոպսիայի համար,</p> <p>13) նախապատրաստում է հիվանդին և գործիքները ասպիրացիոն բիոպսիայի համար,</p> <p>14) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հեշտոցի հետին կամարի պունկցիայի համար,</p> <p>15) նախապատրաստում է հիվանդին և գործիքները էնդոսկոպիկ հետազոտությունների (կոլպոսկոպիա,</p>

		<p>հիստերոսկոպիա, լապարոսկոպիա),</p> <p>16) նախապատրաստում է հիվանդին ռենտգենոլոգիական հետազոտությունների (գանգի ռենտգեն հետազոտություն, հիստերոսալպինգոգրաֆիա, մամոգրաֆիա),</p> <p>17) նախապատրաստում է հիվանդին գերծայնային հետազոտության,</p> <p>18) կատարում է ուղեգրերի ձևակերպում և լրացում:</p>
585.	<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել վերարտադրողական համակարգի զարգացման արատների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, մանկայնության (ինֆանտիլիզմ) առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, ներկայացնել սեռական օրգանների ոչ ճիշտ (անկանոն) դրությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ</p>
586.	<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ներկայացնում է վերարտադրողական համակարգի (արտաքին սեռական օրգանների, հեշտոցի, արգանդի, արգանդափողերի, ձվարանների) զարգացման արատների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>2) ներկայացնում է մանկայնությունը՝ ինֆանտիլիզմը, դրա առաջացման պատճառները, դասակարգումը (ընդհանուր և սեռական), ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>3) ներկայացնում է սեռական օրգանների ոչ ճիշտ (անկանոն) դրությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>4) հավաքում է անամնեզ,</p> <p>5) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար,</p> <p>6) նախապատրաստվում է հետազոտության՝ մշակում ձեռքերը, հագնում ձեռնոցներ,</p> <p>7) ֆանտոմի վրա կատարում է արտաքին սեռական օրգանների մշակում, մանկաբարձական հայելիների տեղադրում, մեկձեռք, երկձեռք զննում,</p> <p>8) նախապատրաստում է հիվանդին գերծայնային հետազոտության,</p> <p>9) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի:</p>

587.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել դաշտանային պարբերաշրջանի խանգարումների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, նյարդա-էնդոկրին համախտանիշների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
588.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է դաշտանային պարբերաշրջանի խանգարումների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ներկայացնում է նյարդաէնդոկրին համախտանիշների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) հավաքում է անամնեզ, 4) չափում է արյան ճնշումը, հաշվում անոթազարկը, 5) ֆանտոմի վրա կատարում է արտաքին սեռական օրգանների մշակում, 6) ֆանտոմի վրա կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, երկձեռք զննում, 7) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար (արգանդի խոռոչի զոնդավորում, արգանդի խոռոչի (պատերի) ախտորոշիչ քերում և այլն), 8) նախապատրաստում է հիվանդին ծվարանների ֆունկցիոնալ ախտորոշման թեստերը իրականացնելու համար, 9) բացատրում և կատարում է ռեկտալ ջերմաչափում, 10) կատարում է նախաբժշկական օգնություն արյունահոսությունների ժամանակ, 11) կատարում է բժշկի նշանակումները, 12) տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ: ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՈՉ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԲՈՐԲՈՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՆՊՏՂՈՒԹՅՈՒՆ: ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ: ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՈՒՌՈՒՑՔՆԵՐ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱՆՄԱՆ ԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԷՆԴՈՍԵՏՐԻՈՋ»		
589.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-045

590.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել սեռական օրգանների ոչ յուրահատուկ և յուրահատուկ բորբոքային հիվանդությունների, անպտղության, սեռական օրգանների ուռուցքների և ուռուցքանման գոյացությունների, նախաքաղցկեղային, ֆոնային հիվանդությունների, բարորակ և չարորակ ուռուցքների, էնդոմետրիոզի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, ընտանիքի պլանավորման հիմնական սկզբունքները, բեղմնականխման ժամանակակից եղանակները, նրանց կիրառումը, ցուցումները, հակացուցումները, առավելությունները և թերությունները:
591.	Մոդուլի տևողությունը	90 ժամ
592.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն: Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջան», ՄԲԳ-5-20-044 «Գինեկոլոգիա: Բժշկական էթիկան և դեոնտոլոգիան գինեկոլոգիայում: Գինեկոլոգիական օգնություն ցույց տվող հիմնարկների կառուցվածքը: Գինեկոլոգիական հիվանդների հետազոտման եղանակները: Վերարտադրողական համակարգի զարգացման արատներ, անկանոն դրություններ: Դաշտանային պարբերաշրջանի և նեյրոէնդոկրին խանգարումներ» մոդուլները:
593.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
594.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սեռական օրգանների ոչ յուրահատուկ և յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
595.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է սեռական օրգանների ոչ յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) ներկայացնում է սեռական օրգանների յուրահատուկ բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) ներկայացնում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակները և դրանց դեպքում

		<p>վերարտադրողական օրգանների ախտահարումը,</p> <ol style="list-style-type: none"> 4) հավաքում է անամնեզ, 5) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 6) նախապատրաստվում է հետազոտության՝ մշակում ձեռքերը, հագնում ձեռնոցներ, 7) ֆանտոմի վրա կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, երկձեռք զննում, 8) վերցնում է քսուք մանրէադիտակային հետազոտության համար (U; V; C; R) կետերից, 9) վերցնում է նյութ մանրէաբանական հետազոտության համար, 10) վերցնում է քսուք՝ ըստ Պապնիկովաուի (ՊԱՊ քսուք), 11) վերցնում է քսուք և ուղարկում լաբորատորիա՝ միկրոբի զգայունությունը հակաբիոտիկների նկատմամբ որոշելու համար, 12) կատարում է ուղեգրերի ձևակերպում և լրացում, 13) կատարում է բժշկի նշանակումները, 14) կատարում է անհրաժեշտ խորհրդատվություն:
596.	Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել անպտղության առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ</p>
597.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է անպտղության բնորոշումը, առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) հավաքում է անամնեզ, 3) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 4) նախապատրաստվում է հետազոտության՝ մշակում ձեռքերը, հագնում ձեռնոցներ, 5) ֆանտոմի վրա կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, երկձեռք զննում, 6) նախապատրաստում է հիվանդին ձվարանների ֆունկցիոնալ ախտորոշման թեստերը իրականացնելու համար, 7) բացատրում է և կատարում ռեկտալ ջերմաչափում,

		<p>8) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի,</p> <p>9) նախապատրաստում է հիվանդին գերձայնային հետազոտության,</p> <p>10) կատարում է ուլտագրերի ձևակերպում և լրացում,</p> <p>11) կատարում է բժշկի նշանակումները,</p> <p>12) կատարում է անհրաժեշտ խորհրդատվություն:</p>
598.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ընտանիքի պլանավորման հիմնական սկզբունքները, բեղմնականխման ժամանակակից եղանակները, դրանց կիրառումը, ցուցումները, հակացուցումները, առավելություններն ու թերությունները
599.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ընտանիքի պլանավորման հիմնական սկզբունքները, ընտանիքի պլանավորման առավելությունները, առողջ հղիությունների միջև ժամանակահատվածը,</p> <p>2) ներկայացնում է ընտանիքի պլանավորման բնական (օրացուցային, ստանդարտ օրերի, լակտացիոն ամենոռեայի) եղանակները, դրանց առավելությունները, թերությունները, անհրաժեշտ խորհրդատվությունը,</p> <p>3) ներկայացնում է ընտանիքի պլանավորման ժամանակակից եղանակները,</p> <p>4) ներկայացնում է շտապ բեղմնականխման միջոցները և անհրաժեշտ խորհրդատվությունը,</p> <p>5) ներկայացնում է ընտանիքի պլանավորման խորհրդատվությունը հետծննդյան շրջանում,</p> <p>6) ներկայացնում է ընտանիքի պլանավորման խորհրդատվությունը հետաբորտային շրջանում,</p> <p>7) ներկայացնում է ընտանիքի պլանավորման վերաբերյալ տղամարդկանց խորհրդատվության առանձնահատկությունները,</p> <p>8) ներկայացնում է խորհրդատվության «ԲԱՆԱԼԻ» մոդելը,</p> <p>9) նախապատրաստում է կնոջը և անհրաժեշտ գործիքները ներարգանդային պարույրի տեղադրման համար,</p> <p>10) նախապատրաստում է կնոջը գերձայնային հետազոտության:</p>
600.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել սեռական օրգանների ուռուցքները և ուռուցքանման գոյացությունները, սեռական օրգանների նախաքաղցկեղային հիվանդությունները, բարորակ և չարորակ նորագոյացությունների առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին

		տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
601.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է սեռական օրգանների ուռուցքները և ուռուցքանման գոյացությունները, 2) ներկայացնում է արտաքին սեռական օրգանների և հեշտոցի նախաքաղցկեղային հիվանդությունները, հեշտոցի քաղցկեղը, դրանց առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 3) ներկայացնում է արգանդի վզիկի ֆոնային, նախաքաղցկեղային հիվանդությունները, արգանդի վզիկի քաղցկեղը, դրանց առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 4) ներկայացնում է էնդոմետրիումի ֆոնային և նախաքաղցկեղային հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 5) ներկայացնում է արգանդի բարորակ և չարորակ նորագոյացությունները, դրանց դասասակարգումը առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 6) ներկայացնում է ձվարանների բարորակ և չարորակ ուռուցքները, դրանց դասասակարգումը, առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 7) հավաքում է անամնեզ, 8) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար, 9) կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, երկձեռք զննում, 10) նախապատրաստում է հիվանդին բջջաբանական հետազոտության, 11) վերցնում է քսուք՝ ըստ Պապնիկոլաուի (ՊԱՊ քսուք), 12) նախապատրաստում է հիվանդին և գործիքները արգանդի խոռոչի զոնդավորման համար, 13) նախապատրաստում է հիվանդին և գործիքները արգանդի վզիկի և արգանդի լորձաթաղանթի ախտորոշիչ քերում կատարելու համար, 14) նախապատրաստում է հիվանդին և գործիքները բիոպսիայի համար, 15) նախապատրաստում է հիվանդին և գործիքները ասպիրացիոն բիոպսիայի համար, 16) նախապատրաստում է հիվանդին և գործիքները կոլպոսկոպիկ հետազոտության, 17) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հիստերոսկոպիայի, 18) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հիստերոգրաֆիայի,

		<p>19) նախապատրաստում է հիվանդին և գործիքները լապարոսկոպիկ հետազոտության,</p> <p>20) նախապատրաստում է հիվանդին գերծայնային հետազոտության,</p> <p>21) կատարում է ուղեգրերի ձևակերպում և լրացում,</p> <p>22) կատարում է բժշկի նշանակումները,</p> <p>23) տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն:</p>
602.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել է նդոմետրիոգի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
603.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է էնդոմետրիոգի առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>2) հավաքում է անամնեզ,</p> <p>3) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար,</p> <p>4) կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, երկձեռք զննում,</p> <p>5) նախապատրաստում է հիվանդին գերծայնային հետազոտության,</p> <p>6) նախապատրաստում է հիվանդին և գործիքները կոլպոսկոպիկ հետազոտության,</p> <p>7) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հիստերոսկոպիայի,</p> <p>8) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հիստերոսալպինգոգրաֆիայի,</p> <p>9) նախապատրաստում է հիվանդին և գործիքները լապարոսկոպիկ հետազոտության:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ: ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅՈՒՄ: ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ: ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»		
604.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-046
605.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել կրծքագեղձի հիվանդությունների, անհետաձգելի օգնություն պահանջող գինեկոլոգիական ախտաբանությունների առաջացման պատճառները դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, մանկական գինեկոլոգիայի սկզբունքները, գինեկոլոգիական հիվանդների բուժման կոնսերվատիվ և վիրահատական եղանակները,

		Նախապատրաստումը վիրահատության, հետվիրահատական խնամքը:
606.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
607.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդելի կիրառումը», ՄԲԳ-5-20-038 «Ֆիզիոլոգիական մանկաբարձություն: Ֆիզիոլոգիական ծննդաբերություն: Ծննդաբերության ցավազրկման ժամանակակից եղանակները: Նորմալ հետծննդյան շրջան», ՄԲԳ-5-20-045 «Գինեկոլոգիա: Սեռական օրգանների ոչ յուրահատուկ և յուրահատուկ բորբոքային հիվանդությունները: Անպտղությունը: Ընտանիքի պլանավորում: Սեռական օրգանների ուռուցքներ և ուռուցքանման գոյացություններ: Էնդոմետրիոզ» մոդուլները:
608.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
609.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կրծքագեղձի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը
610.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կրծքագեղձի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը, 2) հավաքում է անամնեզ, 3) կատարում է կրծքագեղձերի զննում, շոշափում (կանգնած, նստած, պառկած դիրքերով), 4) նախապատրաստում է հիվանդին գերձայնային հետազոտության, 5) իրականացնում է ուլտզրի ձևակերպում և լրացում մամոգրաֆիկ հետազոտության համար, 6) կատարում է ուլտզրի ձևակերպում և լրացում կրծքագեղձի պունկցիոն բիոպսիայի համար, 7) տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվությունը:
611.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել անհետաձգելի օգնություն պահանջող գինեկոլոգիական հիվանդությունների առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը և տիրապետել անհրաժեշտ հմտություններին տարբեր միջամտությունների, հետազոտությունների ժամանակ
612.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է արտարգանդային հղիության առաջացման պատճառները, դասակարգումը,

		<p>ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>2) ներկայացնում է ձվարանի ապոպլոքսիայի (կաթված) առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>3) ներկայացնում է ձվարանի ուռուցքի տոտիկի ոլորման առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>4) ներկայացնում է անհետաձգելի բուժօգնությունը արգանդի միոմայի, արգանդային արյունահոսությունների ժամանակ,</p> <p>5) հավաքում է անամնեզ,</p> <p>6) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար,</p> <p>7) նախապատրաստվում է հետազոտության,</p> <p>8) կատարում է մանկաբարձական հայելիների տեղադրում, երկծեռք զննում,</p> <p>9) նախապատրաստում է հիվանդին գերձայնային հետազոտության,</p> <p>10) նախապատրաստում է հիվանդին և գործիքները հեշտոցի հետին կամարի պունկցիայի համար,</p> <p>11) նախապատրաստում է հիվանդին և գործիքները արգանդի պատերի քերում կատարելու համար,</p> <p>12) կատարում է նախաբժշկական օգնություն արյունահոսության ժամանակ,</p> <p>13) կատարում է բժշկի նշանակումները:</p>
<p>613.</p>	<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել մանկական գինեկոլոգիայի սկզբունքները, աղջիկների սեռական օրգանների անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հետազոտման եղանակները, սեռական զարգացման խանգարումները, պատանեկան արգանդային արյունահոսությունները, սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները</p>
<p>614.</p>	<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ներկայացնում է մանկական գինեկոլոգիայի սկզբունքները, աղջիկների սեռական օրգանների անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>2) ներկայացնում է աղջիկների հետազոտման առանձնահատկությունները, սեռական զարգացման խանգարումները,</p> <p>3) ներկայացնում է պատանեկան արգանդային արյունահոսությունների առաջացման պատճառները,</p>

		<p>ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>4) ներկայացնում է սեռական օրգանների բորբոքային հիվանդությունների առաջացման պատճառները, ախտորոշումը, կլինիկան, բուժման ընթացքը,</p> <p>5) հավաքում է անամնեզ,</p> <p>6) նախապատրաստում է հիվանդին և անհրաժեշտ գործիքները հետազոտության համար,</p> <p>7) վերցնում է քսուք մանրէադիտակային հետազոտության համար,</p> <p>8) կատարում է ուղիղ աղիք որովայնային (ռեկտոաբդոմինալ) զննում,</p> <p>9) նախապատրաստում է հիվանդին գերձայնային հետազոտության,</p> <p>10) կատարում է բժշկի նշանակումները:</p>
615.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գինեկոլոգիական հիվանդների բուժման կոնսերվատիվ և վիրահատական եղանակները, հիվանդի նախապատրաստումը վիրահատության, հետվիրահատական խնամքը
616.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է գինեկոլոգիական հիվանդների կոնսերվատիվ բուժման եղանակները, դրանց ցուցումները, հակացուցումները,</p> <p>2) ներկայացնում է գինեկոլոգիական հիվանդների վիրահատական բուժման եղանակները, դրանց դասակարգումը, ցուցումները, հակացուցումները, հնարավոր բարդությունները,</p> <p>3) ներկայացնում է վիրահատական բուժման համար անհրաժեշտ պարագաները,</p> <p>4) ներկայացնում է նախա և հետվիրահատական շրջաններում անհրաժեշտ հետազոտությունները,</p> <p>5) նախապատրաստում է հիվանդին վիրահատության,</p> <p>6) իրականացնում է հիվանդի խնամքը հետվիրահատական շրջանում:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
617.	Մոդուլի դասիչը	ՄԲԳ-5-20-047
618.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել վարակ, վարակի տարածման գործընթաց, վարակիչ հիվանդություն, համաճարակային գործընթաց հասկացությունները, համաճարակաբանական ծառայության հիմունքները, վարակիչ հիվանդությունների հիմնական հատկությունները, համաճարակաբանական առանձնահատկությունները, կլինիկական դրսևորումները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի

		սկզբունքները, կանխարգելումը, հավաքել կենսաբանական նյութ լաբորատոր հետազոտության համար, վարակի օջախում կազմակերպել հակահամաճարակային միջոցառումներ, ապահովել պացիենտի և բուժքրոջ անվտանգությունը վարակից, իրականացնել և փաստագրել քույրական գործընթացի փուլերը վարակիչ հիվանդությունների ժամանակ:
619.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
620.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՄԲԳ-5-20-011 «Մանրէաբանություն, վիրուսաբանություն և իմունաբանություն», ՄԲԳ-5-20-025 «Քույրական գործի հիմունքներ: Քույրական գործը անհետաձգելի իրավիճակներում: Հենդերսոնի մոդուլի կիրառումը» մոդուլները:
621.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի կատարումն է:
622.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել վարակիչ հիվանդությունների ընդհանուր ախտաբանությունը, էպիդեմիոլոգիայի և վարակազերծման հիմունքները
623.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է պաթոգեն, պայմանական պաթոգեն մանրէները, դրանց գործոնները, սահմանում ինֆեկցիա, ինֆեկցիոն պրոցես և հիվանդություն հասկացությունները, առանձնահատկությունները, շրջանները և դասակարգումը, 2) ներկայացնում է էպիդեմիկ պրոցեսը, դրա երեք օղակները, արտահայտման ձևերը, կազմակերպում հակաէպիդեմիկ միջոցառումները վարակի օջախում, 3) բացատրում է դեզինֆեկցիա, դեզինսեկցիա, դեռատիզացիա հասկացությունները, դրանց տեսակները, 4) ներկայացնում է դեզինֆեկցող միջոցների կիրառումը, կատարում ընթացիկ և եզրափակիչ վարակազերծում, 5) սահմանում է իմունիտետը, դրա տեսակները, տարբերակում պասսիվ և ակտիվ իմունիզացիան, 6) ներկայացնում է կանխարգելիչ պատվաստումների կարգը, պատվաստանյութերի հետ վարվելու հիմնական սկզբունքները, հետպատվաստումային բարդությունները, 7) կատարում է պատվաստում և գնահատում արդյունքները,

		8) ներկայացնում է ինֆեկցիոն հիվանդությունների մասնագիտացված օգնության կազմակերպումը, լրացնում է համապատասխան փաստաթղթերը:
624.	Ուսումնառության արդյունք 2	Բացատրել ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման և լաբորատոր հետազոտության եղանակները, ներկայացնել կլինիկական ախտանիշները և համախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները
625.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է ինֆեկցիոն հիվանդներից կլինիկական և էպիդեմիոլոգիական անամնեզի հավաքումը, լաբորատոր հետազոտության եղանակները, ախտաբանական նյութի վերցման կարգը, 2) հավաքում է էպիդեմիոլոգիական անամնեզը, վերցնում ախտաբանական նյութ լաբորատոր հետազոտության համար, ցուցադրում քսուկի պատրաստումը և ցանքսի տեխնիկան, 3) բացատրում է ինֆեկցիոն հիվանդությունների կլինիկական ախտանիշները և համախտանիշները, 4) ներկայացնում է ինֆեկցիոն հիվանդությունների բուժման սկզբունքները և խնամքի առանձնահատկությունները, 5) կազմակերպում է հիվանդի խնամքը և սնուցումը, 6) իրականացնում է և փաստագրում քույրական գործընթացի փուլերը վարակիչ հիվանդությունների ժամանակ:
626.	Ուսումնառության արդյունք 3	Տեսակավորել աղիքային ինֆեկցիաները ըստ էթիոլոգիայի և էպիդեմիոլոգիայի, նկարագրել կլինիկական առանձնահատկությունները բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները, համահամաճարակային միջոցառումները օջախում
627.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է որովայնային տիֆի, սալմոնելոզի և էշերիխիոզի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումները ինֆեկցիայի օջախում, 2) իրականացնում է քույրական գործընթացը, վերցնում կենսաբանական նյութը լաբորատոր հետազոտության համար, կազմակերպում հիվանդի խնամքը, սնուցումը, կանխարգելիչ միջոցառումներ, կազմում դիետա, 3) տարբերակում է դիզենտերիայի և ամեոբիազի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի առանձնահատկությունները,

		<p>հակահամաճարակային միջոցառումները ինֆեկցիայի օջախում,</p> <p>4) իրականացնում է քույրական գործընթացը, վերցնում կենսաբանական նյութը լաբորատոր հետազոտության համար, կազմակերպում հիվանդի խնամքը, սնուցումը, կանխարգելիչ միջոցառումներ, կազմում դիետա, նախապատրաստում հիվանդին ռեկտոռոմանոսկոպիայի,</p> <p>5) բացատրում է բոտուլիզմի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումները ինֆեկցիայի օջախում,</p> <p>6) իրականացնում է քույրական գործընթացը, վերցնում կենսաբանական նյութը լաբորատոր հետազոտության համար, կազմակերպում հիվանդի խնամքը, սնուցումը, կանխարգելիչ միջոցառումներ, կազմում դիետա, ցուցաբերում առաջին օգնությունը,</p> <p>7) բացատրում է խոլերայի էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումները ինֆեկցիայի օջախում,</p> <p>8) իրականացնում է քույրական գործընթացը, վերցնում կենսաբանական նյութը լաբորատոր հետազոտության համար, կազմակերպում հիվանդի խնամքը, սնուցումը, կանխարգելիչ միջոցառումներ, կազմում դիետա, իրականացնում կարանտինային միջոցառումներ:</p>
<p>628.</p>	<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Տարբերակել անտրոպոնոզ ինֆեկցիաներն՝ ըստ էթիոլոգիայի և էպիդեմիոլոգիայի, նկարագրել կլինիկական առանձնահատկությունները բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները, համահամաճարակային միջոցառումները օջախում</p>
<p>629.</p>	<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) տարբերակում է վիրուսային հեպատիտները էթիոլոգիան, էպիդեմիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, բարդությունները, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումները,</p> <p>2) իրականացնում է քույրական գործընթացը, վերցնում կենսաբանական նյութը լաբորատոր հետազոտության համար, կազմակերպում հիվանդի խնամքը, սնուցումը, կանխարգելիչ միջոցառումները, կազմում դիետա,</p>

